



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





ԱՐՄԷՆ ՎԱՐԿԱՊԵՏ ԳԼՏՃԵՆ



# ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ,

ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԵՒ

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊՍԱԿ

(Երկր յաւելւածով)

ՊԵՏԱԳՐԱՆ ԵՐԵՎԱՆԻ, Հ. ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ.

ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾԱԳՐԱՆ ԿԵՆՏՐԱԼՈՒԹՅԱՆ

Ա. Լ. Գ. Ս. Ա. Ն. Գ. Բ. Ա. Պ. Ը.

Տպարան Յակովբ Դառապետանցի

1904

347.6

12-72

EROS NUL 07

ԱՐՄԷՆ ՎԱՐԿԱԳԵՏ ՂԼՏՈՒՆ

# ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ,

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԵՒ

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊՍԱԿ

(Երկր յաւերածով)

անվ. 17397



ԱՐՄԷՆԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
Տպարան Յակովբ Լաւաղեանցի.

1904

19 JUN 2013

37.989

1 MAR 2010

### ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

1. Մենք այս գիրքը կազմելիս, Հայոց եկեղեցու առանձին իրաւունքի ազդեւորներ ենք ճանաչել այն անոնական սահմանադրութիւնները, որ եկեղեցին իր սրբոյններով է հաստատել: Ըստ այդմ, որովհետեւ դա մեզ ամար միակ ղեկավարող սկզբունքն է Հայ եկեղեցու իրաւունքի ազդեւորները ճանաչելու խնդրում, մենք ՚ի նկատի ենք առնիլ ոչ Զնորհալու, ոչ Գրիգոր Տաթևացու, ոչ Յովհան Երզնկացու և ոչ էլ Ղըրիմեցու անունով մնացած կանոնները, և ոչ իսկ Մխիթար Գօշի Գատաստանագիրքը, որ այդ խնդրում աւելի ծանրակշիւ կարող էր լինել, քան նախընթացներին: Չենք ՚ի նկատունեցել, որովհետեւ դորա եկեղեցու լրութեան կողմից—ազգի և եկեղեցու ներկայիչների ժողովի կողմից—ընդունւած և հաստատւած չեն, որ միակ իրաւատէրն է այդ խնդրում:

2. Մենք աշխատել ենք, որքան հնարաւոր է, հասարակ լեզու գործ ածել, որպէս զի նա նոյն իսկ հասկանալի լինի գիւղական տէրաէրներին:

3. Գրքի վերջը կցել ենք յաւելւածներ, առաջինը Ամուսնալուծութեան դատաւիճարութեան համար: Երկրորդում ամփոփել ենք այն բոլոր կանոնները, որ Հայ եկեղեցին կամ ընդունել է և կամ ինքն է սահմանել առ հասարակ ամուսնութեան, հաս ու չհասի, ամուսնալուծութեան համար: Այդ կանոնները տեսակների չենք բաժանել, այլ աշխատել ենք ժամանակագրական կարգը պահպանել: Երրորդ յաւելւածում քաղւած օրէն զրել ենք Ռուս. Գայսը. Օրէնքներից այն բոլորն, ինչ որ կապ ունի ամուսնութեան հետ առ հասարակ:

Дозволено цензурою, 15 Апр. 1904 г., гор. Тифлисть.



Մենք ընդունում ենք, որ մեր այս աշխատութիւնը  
իրը առաջին փորձ, կարող է ունենալ պակասութիւններ  
թէ լեզուի, թէ շարադրելու և թէ թերևս նիւթի լրու-  
թեան կողմից և այլն, որոց մասին քննութիւնն ուրախու-  
թեամբ կընդունենք՝ երկրորդ ապագրութիւնը կազմելիս:

Արս. վ. Ղլսնեան.

1904 թ ապրիլի 7-ին  
Ալէքսանդրապոլ.

## ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

### I

1. Ամուսնութիւնը մարդու և կնոջ դաշնակ-  
ցութիւն է, լինի նա կրօնական-եկեղեցական թէ  
քաղաքացիական մի գործողութիւն, մի ակտ: Ամուս-  
նութիւնն այդ տեսակէտից մի հասարական հիմ-  
նարկութիւն է, ինստիտուտ է:

Եթէ մենք դիտենք կենդանիների կեանքը  
ուշի ուշով, կրտեսենք, որ նրանցից մի երկար  
շարքն ապրում է զոյգ զոյգ, այսինքն մի զոյգ արու  
և էգ առանձին՝ իբր մի ընտանիք, ինչպէս են ծի-  
ճեռնակները, աղաւնիները, արագելը, տատրակը և  
այլն և այլն: Մի այլ շարք, ինչպէս են հաւերը,  
ոչխարները, կովերը, և այլն հակառակ նախընթաց-  
ների զոյգ կենակցութիւններ չեն կազմում, այլ  
խառն: Այդ շարք կենդանիների արունները միաժա-  
մանակ մերձենում են շատ էգերի, ինչպէս և մի  
էգը շատ արունների: Բուսական թագաւորութեան  
մէջ մինչև որ բեղմնաւորութեան համար որոշ  
գործողութիւններ չկատարուին, ինչպէս օրինակ  
որդերի, միջատների և այլ միջոցով մի ծաղկի  
փոշին միւս ծաղկի վրա թափելը՝ ծիրանը, տանձը,  
խնձորը և այլ ու այլ հազարաւոր բոյսեր չեն

կարող պտուղ տալ, սերունդներ առաջացնել: Կենդանական թագաւորութեան մէջ էլ, մինչև որ, որոշ պայմաններ տեղի չունենան, սերնդի գոյութիւնն անհնար կլինի: Բուսական և կենդանական թագաւորութեան մէջ սերնդի ապահովումն ուրեմն կայանում է որոշ պայմանների գոյութեան, լինի թէկուզ այդ պայմանն ամենահասարակ, ամենատարրական ձևով արտայայտւած՝ ինչպէս մանրադիտակային էակների կենդրոնական սաղմի ինքնուրոյն կերպով բաժանելը-կիսելը, որից առաջ է գալիս ճիշտ նոյն ձևով սերունդ առաջացնելու ընդունակութիւններով օժտւած մի նոր մանրէ, իր մայր մանրէի կողքին:

Մարդը, որ կենդանական թագաւորութեան մէջ ամենակատարեալ էակն է, աճելու համար անհրաժեշտաբար ենթակայ է բնական պայմանների, առանց որոց սերնդի շարունակումն անհասկանալի և անհնար է: Սերունդ առաջ բերելու համար, բնական կարգը թելադրում է մարդու և կնոջ կենսակցութիւն, որ մենք բնդհանուր անւամբ անւանում ենք ամուսնութիւն: Եւ իրօք, առանց ամուսնութեան աներեւակայելի է սերունդ և աճեցողութիւն, լինի թէկուզ այդ ամուսնութիւնը մարդկային ցեղի սկզբնական աստիճանի վրա եղած ժամանակ ունեցած բնազգական չարաբերութիւնները մարդու և կնոջ մէջ, իբր պատահական դիպւած՝ ինչպէս շրջապատող բնութեան կենդանական աշխարհն էր և է ներկայացնում շատ օրինակներով:

Այսպէս ուրեմն, ամուսնութիւնն իբր հասարակական երևոյթ լինելուց առաջ, մարդկային ցեղի աճեցողութեան, սերունդներ առաջացնելու մի բնական պահանջն է: Նա իր սկզբնական աստիճաններում, իր այսպէս ասած սաղմնային վիճակում հասկացողութիւն իսկ չէ ունեցել ապագայում առաջեկած իրաւական բարդ խնդիրների մասին, որին ներկայ քաղաքակիրթ մարդկութիւնն է ականատես — խօսքս զայդ ամուսինների, մարդու և կնոջ իրաւական փոխադարձ չարաբերութեանց հասարակուն է վերաբերում:

Մարդկային ցեղն, իր քաղաքակիրթութեան երկար ճանապարհի վրա, անցել է ամուսնական հիմնարկութեան բազմատեսակ աստիճաններով, որոնց հետքերը դեռ մեր օրերումն նշմարում են արդէն մեռնող սովորութիւնների և կիսավարկների ազգերի մէջ: Մարդը ճանաչել է բազմակնութիւն, երբ մի մարդը շատ կանայք է ունեցել: Խառնակեցութիւն, երբ նոյն իսկ մի ընտանիքի մէջ բոլոր կանայք անխտիր կերպով պատկանում էին բոլոր տղամարդոց, այսինքն հայր ու աղջիկ, քոյր ու եղբայր, մայր և որդի և այլն և այլն խառնակում էին իւրար հետ իբր ամուսիններ՝ անխտիր կերպով: Բազմայրութիւն, երբ մի կին շատ մարդոց հետ էր ապրում անխտիր կերպով: Մայր իշխանութեան ժամանակ, այսինքն երբ հայրեր չեն եղել, որդին հայր չէ ունեցել լատուկ կերպով, ամուսնութիւնը ճանաչել է միայն մայր և նրա իշխանութիւնը, նա ապրում էր իր մօտ տանը,

աւելի ճիշտն ասած իր եղբայրների մօտ, ուր և ընդունում էր մարդոց, որից կամ որոնցից առաջացած սեբոււնդը մնում էր մօր և քեռիների մօտ: Սրանք բոլորը ամուսնութեան և ընտանիքի ձևեր են, որ մենք համառօտակի ակնարկեցինք:

Քաղաքակրթութեան այն աստիճաններում, երբ արդէն այրն էր իշխում, իրաւական յարաբերութիւններն ամփոփւում էին համարիւմ մարդու մէջ, որ լիակատար տէրն էր ընտանիքի, որին հնազանդւում էր կինն առանց որևէ իրաւունք ունենալու: Արկու սեռի անձինքն էլ նախնական ընտանիք կազմելու համար ոչ մի խտրութիւն, ոչ մի արգելք չէին ճանաչում. սերունդ առաջ բերելու բոլոր պայմանները թույլատրելի էին.

Սակայն մարդիկ քանի աւելի առաջ գնացին, քանի աւելի բարձրացան քաղաքակրթութեան աստիճաններն՝ ՚ի վեր, կեանքի պայմաններն աւելի փոփոխուեցին, առաջեկան նոր հասկացողութիւններ, նոր պահանջներ և այդ պահանջներին բաւարարութիւն տալու ձգտումներ: Գլխաւորապէս անտեսական պայմանների ազդեցութեան տակ մարդու և կնոջ կապն աւելի ամրապնդւեց, կամաց կամաց առաջ եկաւ «ընտանիքը» իր իրաւական յարաբերութիւնների յարաճուն ձգտմամբ:

Մինչև այժմ մենք չենք ասել ամուսնութեան մի այլ ձևի մասին և ոչ մի խօսք— դա միակնութիւնն է, որի բացատրութեան կարիք չկայ այստեղ: Միակնութիւնն՝ իբր տիրապետող ամուսնութեան ձև, որն ընդունում են այժմ բազմաթիւ ազգեր,

աճել և զարգացել է, ու իբր մի անհրաժեշտ սկզբունք տարածւել քրիստոնէութեան հետ և նրա միջոցով: Ասել թէ նախքան քրիստոնէութիւնը միակնութիւն չկար, դա սխալ կլինէր և չէր համապատասխանի ճշմարտութեան, որովհետև միակնութիւնը ծանօթ է եղել արիական ազգերին. միակնութեան համար քրիստոնէութեան արածը, նրան քաղաքացիական իրաւունքներ տալն էր, թէ իր և թէ քրիստոնեայ պետութեան ձեռքով:

Ամուսնութիւնը, միակին լինի թէ բազմակին, իր զարգացման լաջորդ, աւելի բարձր աստիճաններում, կեանքի մէջ փոփոխութիւն առած բարոյական հասկացողութիւնների ազդեցութեան տակ, ենթարկւեց մի շարք կարգերի, որոց խախտման դէպքում ամուսնութիւնը տեղի չէր կարող ունենալ: Այդ հասկացողութիւններն իսպառ արգելեցին ամուսնութիւնը քրոջ և եղբոր մէջ, հօր և աղջկայ, մօր և տղայի մէջ և այլն և այլն, որ կտեսնենք լաջորդ գլուխներում:

2. Ամուսնութիւնն իբր մի կրօնական-ակտ. —

Քաղաքակրթութեան պատմութիւնը ցոյց է տալիս, որ ամեն ազգերի մէջ էլ ամուսնութեան հետ կապւած են կրօնական պարզ ու բարդ գործողութիւններ, որ ամեն տեղ նա կապւած է կրօնական հասկացողութիւնների և սովորութիւնների հետ, սկսած վայրենի ամուսնացող զօյգի լուռ, անխօս կերպով օճաղի առաջ գալուց, կանգնելուց՝ մինչի մեր քրիստոնեաներիս եկեղեցական բարդ արարողութեան սլտակը:

ա. Հին կառավարանն, իբր Աստուածային օրենսդրութունն, ամուսնութիւնն ընդունում է իբր կրօնական մի արարողութիւն: Ծննդոց զիբքն ասում է որ Աստուած կնոջն ստեղծեց նրա-ամուսնու կողերից և տուեց նրան—Ազամին իբր կին: Աստուած դրանով սահմանադրեց ամուսնութիւնն ասելով «դրա համար թող թողնի այլը իւր հօրն ու մօրը և երթայ իր կնոջ հետ և երկուսը լինին իբր մի մարմին»: Քրիստոնէութեան հիմնադիրն Յիսուս հաստատում է Մովսիսադիր օրէնքն իր «զօր Աստուած գուզեաց» սով, որով քրիստոնէաց եկեղեցու համար ամուսնութիւնը դարձնում է Աստուածային մի սահմանադրութիւն: Պօղոս առաքեալը, որ իր ընկերակիցների մէջ համարիւմ միակն է, որ ամուսնութեան և ամուսինների փոխադարձ յարաբերութիւնների խնդիրն է շօշափել, իր Եփեսացոց թղթի մէջ ասում է «ամուսիններ, սիրեցէք ձեր կանանց այնպէս, ինչպէս Քրիստոս եկեղեցին»: Նոյն թղթի վերջում կրկնելով ծննդոց գրքի խօսքերն, անցնում է մի այնպիսի համեմատութեան, որով ամուսնութեանը հաւասարում է այն յարաբերութիւնը, որ Քրիստոս ունի զէպի իր հաստատած եկեղեցին: Նրա խօսքերով ասած «Խորհուրդս այս (այսինքն ամուսնութիւնը) մեծ է, բայց ես ասում եմ Քրիստոսն ու եկեղեցին<sup>1)</sup>»: Նոյն թղթի վերջին տողերում կրկնելով որ, ամուսինն իր կնոջը պիտի սիրէ իր անձի պէս, աւելացնում է և թող կինը վախենայ իր մարդուց:

1) եփես. 5 դւ.

Մովսեսական օրէնքը մարդուն կատարեալ տէր է անում կնոջ վրա. նոր կառավարանը նոցա դնելով համարիւմ հաւատար աստիճանների վրա, նրանց կապն անքակելի է ընդունում իբր Աստուծոյ ձեռքով կապած:

Քրիստոնէութեան յաջորդ դարերում ամուսնութիւնն իբր մի կրօնական հիմնարկութիւն վերածւեց եկեղեցական խորհրդի, լինելով նրա եօթը հիմնական խորհուրդներից մէկը, հաւասար Մըկրտութեանն ու Հաղորտութեանը: Քրիստոնէական եկեղեցուց դուրս, առանց նրա մասնակցութեան եղած պսակը—ամուսնութիւնը եկեղեցին իբր Աստուածային մի սահմանադրութիւն չի ընդունում:

բ. Հնդկաների մէջ Մանուի օրէնքով ամուսնութիւնը մի սրբազան պարտաւորութիւն էր ընդունում: Այդ օրէնքով թոյլատրելի էր բազմակնութիւն. կանանցից մէկը—առաջին կինը անհրաժեշտաբար ամուսնու դաստարգից պիտի լինէր: Իրամինը (քահանայ) 4 կին կարող էր առնել, զինւորականը 3 կին, երկրագործը կամ վաճառականը 2 կին և արհեստաւորը 1 կին: Ամուսնութեան համար տղայի չափահասութիւնը 14 տարեքն էր իսկ աղջկանը 7-ը: Արգելւում էր ազգականութեան մինչի վեցերորդ աստիճանը և թոյլատրելի հաշվում եօթը միայն: Կանոնն արգելում էր ընառնիքի մէջ փոքրերի պսակը մեծերից առաջ և եթէ մէկը ուզում էր ամուսնանալ իր կոչումից ստոր մէկի հետ, դրանից առաջ անհրաժեշտաբար նա պարտաւոր էր ամուսնանալ իր կոչման տէր կնոջ հետ:

գ. Եզրիպատոսում էլ ամուսնութիւնը կրօնական մի արարողութիւն է եղել, ուր բազմահուն-  
 թիւն էր տիրում, սրանցից մէկը առաջին կին (մեծ)  
 Բուրմերին թոյլ էր տրուում միայն մի կին ու-  
 նենալ: Արգելուում էր ամուսնութիւն գէպի վար և  
 գէպի վեր գծով բոլոր արեւակիցների մէջ, այսինքն,  
 հայրն իր աղջկայ, թոռան, թոռնորդու, նոյն  
 և մօր համար, ինչպէս և ցածից վեր՝ աղջիկն իր  
 հօրը, կամ տղան իր մօրը, պապին, պապի հօրը  
 կամ մամին, մամի մօր հետ և այլն: Կողմնակի  
 գծերով թոյլատրելի էր նոյն իսկ քուր և եղբօր  
 ամուսնութիւնը: Ամուսնալուծութեան համար մի  
 պատճառ կար, ամուսնու մասը միայն: Արովհետեւ  
 ժառանգ թողնելը գլխաւոր պայման էր ընդունու-  
 ւում, ուստի և, եղբօր մահից յետոյ, եթէ  
 նա անժառանգ էր, նրա կինն առնում էր ինքը,  
 այսինքն հարսը ամուսնանում էր իր տագեր հետ:

դ. Զէնդ-Աւերստայի սրբազան օրէնքներով,  
 հին պարսիկների մէջ միակնութիւն էր ընդունւած,  
 թէև թոյլ էր տրուում տան մէջ պահել նաև  
 հարճեր՝ իբր աղախիներ: Աւեստայի Սրբազան  
 օրէնքը նախատինք էր հաշուում որդի չունենալը  
 և ամուսնութիւնը:

ե. Ստրեստանում և Բաբելոնում բազմակ-  
 նութիւն էր տիրում. ինչպէս սիմերական համա-  
 բեա բոլոր ազգերի մէջ:

զ. Բուդղայի օրէնքով ամուսնութիւնը՝ սե-  
 բունդ առաջացնելու մի գլխաւոր նպատակի՝ մի-  
 ջոցն է: Նա հետեւեալ կանոններն է սահմանել

պատկի համար: Արգելւած էր պսակը 1) մի ազ-  
 գանուն կրող մերձաւոր ազգականների մէջ 2) եր-  
 կու քուր և երկու եղբայրների մէջ, 3) խորդ մօր  
 հետ, նրա աղջկայ հետ և կամ այն կնոջ հետ,  
 որին սեզում է առնել իր հայրը, ինչպէս և ալգ  
 գէպում նրա աղջկայ հետ. 4) Մանդարինին ու  
 իր ազգականի պսակն այն գաւառի աղջկայ հետ,  
 ուր նա ծառայում է. 5) գերին ազատ կնոջ հետ.  
 6) իրաւունք չունին ամուսնանալ յանցաբորժ կա-  
 նայք. 7) հօր կամ ուղղագիծ ազգականներից յետոյ,  
 նրա որդու ամուսնութիւնը մինչի սգի երեքամեալ  
 ժամանակի լրանալը. ինչպէս և նոցա, որոց ծնող-  
 ները գտնուում են բանդարկութեան մէջ և 8)  
 այրիներին միեջև որ կանցնի սգի համար որոշւած  
 ժամանակամիջոցը: Բուդղայի օրէնքով ամուսնու-  
 թիւնը լուծելի է. բնական պատճառ ընդունւում  
 է մահը: Ապահարգանի համար առանձին գըժւար-  
 ութիւններ չկան, և պահանջում են որոշ գրա-  
 մական ծաղփեր:

է. Մովսեսի օրէնքով բազմակնութիւնն ար-  
 գելված է եղել, սակայն Գաւթի մարգարէ, Սուս-  
 մոն իմաստուն բազմակին են եղել:

ը. Մահմետականների կրօնը բազմակին ա-  
 մուսնութիւն է ընդունում, սակայն օրինաւոր կա-  
 նանց թիւը 4-ից աւել չի թոյլ տալիս. հարճերը  
 կին չեն հաշուում: Ամեն մահմետականի թոյլ է  
 տրուում և ժամանակաւոր ամուսնական կապեր՝  
 օտարութեան մէջ եղած ժամանակը, անկախ բա-  
 ջակալութեան ժամանակամիջոցի տևողութիւնից:

Այդ ամուսնութիւնը սրբա է կոչուում: Պէտք է տեսլ, որ մահմետական միջին և աղքատ դասակարգն առհասարակ միակին է:

Թ. Թէ Հին յունաց եւ Թէ Հռոմայեցոց մէջ ամուսնութիւնը կրօնական հողի վրա ծագումն առած սակաւաթիւ հիմնարկութիւններից մէկն է եղել: Սակայն դա հասարակաց կրօնի հաստատութեամբ չէր որ սրբագործուում էր: Եւ տաճարների մէջ չէր կապուում, այլ տուներ, հայրենական օջաղի առաջ, նախահայրերի հոգիների խորհրդաւոր ներկայութեամբ: Ամուսնութիւնը կնքուում էր օճաղի պոչտամուռքի (կուլտի), տան սեփական Առտուածութեան առաջ, նրա վաւերացմամբ:

Յունաց մէջ ամուսնութիւնը կատարուում էր այսպէս, նախ աղջիկը պիտի հրաժարւէր հօր օճաղից. դրա համար նրա հայրը ընտանիքի բոլոր անդամների և փեսացուի ներկայութեամբ մատող էր անում, և ապա երգմամբ յայտարարում էր, թէ իր աղջիկը տալիս է կնութեան այս ինչ տղային (տալիս է անուներ): Այդ երգմամբ և յայտարարութեամբ աղջիկը կտրուում էր իր բոլոր կապերը հայրենական օճաղի հետ և պատրաստուում մըտնել իր ամուսնու տունը և ընդունել նրա օճաղի սրբութիւնն ու նրա ընտանիքի կրօնը: Դրանից յետոյ նա ուղևորուում էր փեսայի տունը. ճանապարհին ամբողջ ժամանակ երգում էին սրբագան օրհներգութիւններ մինչև կը հասնին այնտեղ: Ամուսնութեան կամ պրակի երրորդ և վերջին գործողութիւնն սկսուում էր տան մէջ, ուր

նա—հարսը մօտենում էր օճաղին դէմյանդիման: Այստեղ նրա վրա սրսկուում էին օրհնած ջուր, սրից յետոյ նա մերձենում էր սուրբ կրակին: Յետոյ հարսն ու փեսան ուտում էին հաց և մի քիչ մըրգեղէն, որով տան աստուածութեան առաջ կնքուում էր նրանց ամուսնութիւնը:

Հռոմայեցոց մէջ ամուսնացնելու սովորութիւնը շատ նման էր յուների սովորութիւններին, այնտեղ էլ աղջիկը պիտի թողնէր հայրական օջաղը, և սրովհետև նա կապուում էր օճաղի հետ կրօնական կապերով, այդ կապերը խզողը միայն հայրական իշխանութիւնն էր: Հայրն արձակելով աղջկան իր օճաղից, նրան ճանապարհ էր դնում դէպի փեսի տուն: Ճանապարհին երգում էին սրբագան երգեր: Երբ թափօրը կանգ էր առնում փեսի դրան առաջ, հարսի ձեռքն էին տալիս կրակ և ջուր, մէկը տնային աստուածութեան ներկայիչ, միւսն իբր մաքրող, որ գործ էին անում կրօնական բոլոր արարողութիւնների ժամանակ: Դրանից յետոյ փեսան վերցրած հարսին ներս էր տանում տուն օճաղի առաջ, ուր աներևոյթբարբազմած էին հաշուում տան աստուածները: Այստեղ նոքա զոհ էին մատուցանում, միասին հաց էին ուտում, որով և վերջանում էր ամուսնութեան արարողութիւնը:

Թէ յունական և թէ հռոմէական ամուսնութիւնները իբր հիմնական սկզբունք միակնութիւնն էին ընդունում: Այ մի ազգի մէջ այնքան խորը կրօնական խորհրդաւոր սովորութիւններով չէր

արտայայտած ամուսնութիւնը, որպէս յունական  
 և հռոմէական ժողովրդների մէջ 'ի մասնաւորի և  
 հնդկա-եւրոպական ժողովրդների մէջ ընդհանրա-  
 պէս: Ընտանիքի կրօնի ամուսնական կապն այնքան  
 ամուր է եղել, որ լուծու մն համարեալ թէ անհնար էր:  
 ձշմարիտ է, հռոմայեցւոց մէջ ամուսնալուծութիւնը  
 հնարաւոր էր, սակայն խիստ դժւար, և կապւած  
 կրօնական խորհրդաւոր արարողութիւնների հետ:  
 Նոցա հասկացողութեամբ կրօնի կապած դաշնը  
 միայն կրօնն իրաւաւոր կարող էր լինել քանդելու:  
 Ամուսինները պարտաւոր էին քուրմի և վկաների  
 ներկայութեամբ գալ օճաղի առաջ, կինն այդ օճաղից  
 և ամուսնու կրօնից հրաժարելու համար պիտի  
 արտասանէր սահմանւած խօսքեր, որոնք կարծես  
 նզովքի բնոյթ ունէին, որոնցից լետոյ ամուսնու-  
 թիւնը լուծուած էր հաշոււմ:


Հռոմէական օրէնքով ամուսնութիւնը մի  
 գաշն էր, որ ամուսինները կնքում էին իրար հետ  
 Աստուածային և մարդկային իրաւունքի հիման  
 վրա՝ ցմահ:

Ժ. Բրիտաննէութիւնը Բուզանդական կայսրու-  
 թեան պետական կրօն դասնալուց լետոյ, ամուս-  
 նութիւնը չգաղարեց մի կրօնական գործողութիւն  
 լինելուց, այլ ընդ հակառակը դարձաւ եկեղեցու  
 իրաւասութեան գործ: Եկեղեցին էր պսակողը,  
 եկեղեցին էր պսակի վաւերական լինելու գործո-  
 ղութիւններ կատարողը, նրան է վերապահւած  
 նրանց ցուցակագրութիւնը, նա էր լուծում, նա էր  
 անվաւէր համարում պսակները և այլն:

Քուզանդական կայսրները (Յուստինեանոս  
 մեծ՝ Բարսեղ Մակեդոնացի, Աւսն Իմաստասէր,  
 Ալէքսիս Կամենն) ճանաչելով հանդերձ եկեղեցու  
 իրաւասութիւնն ամուսնական խնդիրներում, ժա-  
 մանակ սա ժամանակ հարկ են համարել եկեղե-  
 ցու համար պարտադիր կանոններ հրատարակել՝  
 ամուսնական գործերը կանոնաւորելու համար:

Ապագայում քաղաքական իշխանութեան գոր-  
 ծունէութիւնն այդ հարցում կանգ չառաւ միայն  
 պարտադիր օրէնքներ հրատարակելով եկեղեցու  
 համար, նա սկսեց նաև միջամտել պսակի կատա-  
 րելու, նրան արձանագրելու և լուծելու գործողու-  
 թիւններին՝ ձգտելով այդ բոլոր ասպարէզներում  
 էլ բռնել եկեղեցու տեղը: Քաղաքական իշխանու-  
 թեան այդ միջամտումից առաջ եկաւ պսակի մի  
 նոր ձև, որի կատարումն ու լուծումը, իրենց հետ  
 կապ ունեցող բոլոր իրաւական խնդիրներով հան-  
 դերձ, եղաւ մի քաղաքացիական գործողութիւն՝  
 քաղաքական իշխանութեան իրաւասութեան տակ:  
 Թողնելով այդ մասին իր տեղում համաօտակի խօ-  
 սելու, այժմ անցնենք տեսնելու թէ ինչ պահանջ-  
 ներ են դրւում ամուսնացողների առաջ:

3. Պայմաններ, թէ ե՞րբ է թոյլատրելի  
 պսակը. — Անկախ նրանից, թէ պսակը եկեղեցա-  
 կան է, թէ քաղաքական, կան մի շարք պայման-  
 ներ, որոց լինելն ու չլինելը կարող է պսակի գոր-  
 ծողութեան կատարելուն արգելք լինել: Այսպէս  
 օրինակ, դուք ուզում էք ամուսնանալ, դրա հա-  
 մար նախ պահանջւում է, որ դուք որոշ ասիք /



ունենաք, լիտոյ պիտի մի աղջիկ ընտրէք, որի հետ փոխադարձաբար պիտի հաւանութիւն տաք ամուսնանալ, այդ աղջիկը ձեր մօտիկ ազգականը չպիտի լինի և ոչ էլ սանիկն ու խնամին, որոց համար օրէնքը որոշ աստիճաններ է սահմանել: Զեր ընտրած աղջիկը որոշ տարիքից փոքր չպիտի լինի, որ ձեր պսակը ծնողների համաձայնութեամբ պիտի լինի և այլն և այլն: Այսինքն մի շարք պահանջներ, որոնց դուք պարտաւոր էք հանազանգուեր եթէ որ ուզում էք օրինաւոր ամուսնութեամբ պսակել: Սրբանցները միառ մի այդ պայմաններին

ա. Տարիք:— Թէ այս և թէ հետեւեալ բոլոր բաժիններում նախ կը դնենք Հայոց եկեղեցու կանոնների որոշումները, և ապա ըստ կարելոյն այլ ազգերի մէջ ընդունւած կարգերը: Պսակելու համար որոշ հասակ ունենալն ամուսնութեան ամենահիմնական պահանջներից մէկն է բոլոր ժողովուրդների համար: Ծարիքը — ժամանակը — կարծիք է երկար, հասունութեան այն չափն է, որով ընտրութիւնը ընդունակ է դարձնում ոչ միայն մարդուն այլ և կենդանական և բուսական թագաւորութիւնների իւրաքանչիւր ներկայացուցչի: Իր բեղմնաւորութեան, սերունդներ առաջացնելու ընդունակութիւն ձեռք բերելու — հասունանալու գլխաւոր պայմանն է, սկսած խոշորացուցային կենդանիներից, բուսական ամենատար մարմիններից մինչև մարդն ու հսկայական ծառերը: Նոյն իսկ տիեզերքի ամեն մի մարմին իւր սկիզբն ու հասունութիւնն ունի ինչպէս և ծերութիւնն ու մահը:

Խրճորենին մինչև չծաղկի, չի բեղմնաւորւի՝ պտուղ չի տալ և երբ նա սկսում է ծաղկել, ասել է, նա արդէն հասել է սերունդ առաջացնելու հասակին: Նոյնն է մարդը. նա չէր կարող և չի կազմում բացասութիւն, նրա համար էլ որոշ տարիների շարք պիտի անցնին, որ չափահասութիւնը վրա հասնի: Մարդու Չափահասութեան տարիքը զանազան տեղերի համար տարբեր է, տաք երկրների համար քիչ, ցուրտ երկրների համար շատ: Բացի գրանից զանազան ազգերի սովորութիւններ և օրէնքներ իրարից տարբեր կերպով են հասկանում չափահասութեան տարիքի սահմանները:

1) Թէ հնումը հայ ժողովուրդը չափահասութեան համար ինչ օրէնքներով է ղեկավարւել, մեզ յայտնի չէ, այդ առթիւ առաջին գրաւոր ցուցումը քրիստոնէութեան ժամանակներին է վերաբերում: Սահակ Պարթևին վերագրւած կանոններից քսան և եօթերորդը չորոշելով պսակողների տարիքի սահմանները, ընդհանուր խօսքով ասում է, որ անչափահասներին չպիտի պսակել: Նոյն անորոշ խօսքերն է կրկնում Գուռի երկրորդ եկեղեցական ժողովի որոշումը: Հայոց եկեղեցու մի այլ ժողով, որ գումարւել է Սիս քաղաքում, գրտնելով որ, թէ ս. Սահակի և թէ Գուռի ժողովի կանոններն անորոշ են, դրա առաջն առնելու համար խնդիրը պարզում է յայտնի տարիք նշանակելով տղայի և յայտնի տարիք աղջկայ համար: Առաջնի համար սահմանելով 14 տարի, երկրորդի համար 12 տարի, որից լիտոյ պսակները թույլ-

տրելի են իբր արդէն չափահասները: Կազմատարնա  
 հայերի համար այժմ, ըստ տրամադրութեան X հաժողովներն այն խնդրով, թէ մինչի որ հասակը  
 տորի I մասի Ռուս. Կայսրութեան օրէնքների ժողովատրելի է պսակ կատարել, չեն զբաղուել: Բար-  
 վաճուի, թողատրելի է պսակ 15 տարեկան տղաներնեղ Մեծն իր քսան չորսերորդ կանոնով սահմա-  
 և 13 տարեկան աղջիկների: Բացի դրանից, թեմանում է մի արգելք, որ վերաբերում է 60 ա-  
 կան առաջնորդներն իրաւունք ունին անհրաժեշտեայ սարկաւազուհիներին, որով դոքա 60 տարի-  
 դէպքերում այդ տարիքը կէս տարիով պակասեցնելըն հասնելուց լետու չպիտի պսակուին: Մեզ թուում  
 այսինքն թույլ տալ պսակներ 14<sup>1/2</sup> տարեկան տղայէ, որ եկեղեցական կանոններն այդ խնդիրը թո-  
 և 12<sup>1/2</sup> տարեկան աղջկայ:

2) Արեւմտեան երկրներում ինչպէս և Ռուսկէտում օրեէ սահման դնելը թերեւս անմիտ լի-  
 ստանում տղայի չափահասութեան տարիք հաշիւը, որտեհետե մէկը կարող է 50—60 տարեկան  
 ուում է 18, իսկ աղջկայ համար 16 տարին: Հասակում արդէն անընդունակ լինել ամուսնական

3. Յունա-բուլղանդական կայսրութեան ժողկեանքին, մինչդեռ ոմանց—70-ից էլ շատ անց է  
 մանակ, Յունաստանի օրով, պետական օրէնքիւր հասնում այդ անընդունակութեան շրջանը:  
 ների մէջ չափահասութեան տարիքը որոշուած է Ռուսաց պետական օրէնքով, որով և մենք  
 14 տարի տղայի համար և 12 տարի աղջկայ համար դեկավարում, 80 տարիքն անց մարդուն  
 մար: Լեւոն Իսաւրացին գտնելով որ, այդ տարիքըսակն արգելում է (X հատ. I մ. 4 յօդ.):  
 ները քիչ են, պարտաւորիչ արաւ որ պսակու ը. Համաձայնութիւն եւ ընդհարակ.— Տարիքից  
 տղայի տարիքը լինի ոչ պակաս քան 15-ը և աղետույ ուշարադրութիւն է դարձնում այն բա-  
 ջկանը ոչ պակաս քան 13-ը: Լեւոն Իմաստասէրին թէ արդեօք պսակուողներն իրար փոխադարձ  
 վերստին օրէնսդրական կարգով սահմանից տղայհամաձայնութեամբ են ամուսնանում թէ ոչ, և  
 համար 14 տարի և աղջկայ համար 12 տարի, որդեօք նրանք իրար տեսել, հաւանել են թէ ոչ:  
 հասակներում նոքա չափահաս և ամուսնակա Հայոց եկեղեցին կանոնական առանձին որո-  
 կեանքին ընդունակ էին հաշուում: ումներ ունի այդ կարևոր խնդիրների առթիւ:

Այսքանը բաւական հաշուելով ամուսնացողներ յա Սահակ պարթևի 27 և 28-րդ կանոններով  
 տարիքի ամենաստոր աստիճանի համար եղած օրէնք մաստուն կերպով սահմանում է, որ պսակուող գոյ-  
 ների և սովորութիւնների մասին, այժմ նայենքըը նախ իրար տեսնին անպատճառ, նշանելուց  
 թէ, արդեօք թույլատրելի է ամուսնութիւնը ձեռնաջ իրար հաւանին և սպա թէ միայն նոցա  
 րութեան հասակում: յատկներն օրհնուին: Հայ եկեղեցին այդ հանգա-

Թէ եկեղեցու հայրերը և թէ եկեղեցական  
 խնդրով, թէ մինչի որ հասակը  
 կատարել, չեն զբաղուել: Բար-  
 վաճուի, թողատրելի է պսակ 15 տարեկան տղաներնեղ Մեծն իր քսան չորսերորդ կանոնով սահմա-  
 և 13 տարեկան աղջիկների: Բացի դրանից, թեմանում է մի արգելք, որ վերաբերում է 60 ա-  
 կան առաջնորդներն իրաւունք ունին անհրաժեշտեայ սարկաւազուհիներին, որով դոքա 60 տարի-  
 դէպքերում այդ տարիքը կէս տարիով պակասեցնելըն հասնելուց լետու չպիտի պսակուին: Մեզ թուում  
 այսինքն թույլ տալ պսակներ 14<sup>1/2</sup> տարեկան տղայէ, որ եկեղեցական կանոններն այդ խնդիրը թո-  
 և 12<sup>1/2</sup> տարեկան աղջկայ:

2) Արեւմտեան երկրներում ինչպէս և Ռուսկէտում օրեէ սահման դնելը թերեւս անմիտ լի-  
 ստանում տղայի չափահասութեան տարիք հաշիւը, որտեհետե մէկը կարող է 50—60 տարեկան  
 ուում է 18, իսկ աղջկայ համար 16 տարին: Հասակում արդէն անընդունակ լինել ամուսնական

3. Յունա-բուլղանդական կայսրութեան ժողկեանքին, մինչդեռ ոմանց—70-ից էլ շատ անց է  
 մանակ, Յունաստանի օրով, պետական օրէնքիւր հասնում այդ անընդունակութեան շրջանը:  
 ների մէջ չափահասութեան տարիքը որոշուած է Ռուսաց պետական օրէնքով, որով և մենք  
 14 տարի տղայի համար և 12 տարի աղջկայ համար դեկավարում, 80 տարիքն անց մարդուն  
 մար: Լեւոն Իսաւրացին գտնելով որ, այդ տարիքըսակն արգելում է (X հատ. I մ. 4 յօդ.):  
 ները քիչ են, պարտաւորիչ արաւ որ պսակու ը. Համաձայնութիւն եւ ընդհարակ.— Տարիքից  
 տղայի տարիքը լինի ոչ պակաս քան 15-ը և աղետույ ուշարադրութիւն է դարձնում այն բա-  
 ջկանը ոչ պակաս քան 13-ը: Լեւոն Իմաստասէրին թէ արդեօք պսակուողներն իրար փոխադարձ  
 վերստին օրէնսդրական կարգով սահմանից տղայհամաձայնութեամբ են ամուսնանում թէ ոչ, և  
 համար 14 տարի և աղջկայ համար 12 տարի, որդեօք նրանք իրար տեսել, հաւանել են թէ ոչ:  
 հասակներում նոքա չափահաս և ամուսնակա Հայոց եկեղեցին կանոնական առանձին որո-  
 կեանքին ընդունակ էին հաշուում: ումներ ունի այդ կարևոր խնդիրների առթիւ:  
 յա Սահակ պարթևի 27 և 28-րդ կանոններով  
 մաստուն կերպով սահմանում է, որ պսակուող գոյ-  
 ները նախ իրար տեսնին անպատճառ, նշանելուց  
 ձեռնաջ իրար հաւանին և սպա թէ միայն նոցա  
 յատկներն օրհնուին: Հայ եկեղեցին այդ հանգա-

մանքներին այնքան խստիւ է վերաբերել, որ նոյն իսկ (ս. Սահակի 28-րդ կանոնի վերջին մասը) ոչ միայն այդպիսի սրակ կատարող քահանայի ալ և պսակող գոյգի ծնողների համար պատիժներ է որոշել: Ս. Սահակի այդ կանոնների որոշումները կրկին անգամ խնդիր դառնալով Պունի ը. ժողովի գրադմունքների, նորից հաստատուել է իբր խստի կանոն: Այդ կանոնն ասում է, պսակելու իրու-ւունք ունեցողները նախապէս իրար պիտի տեսնին, եթէ ցանկանում են պսակել, հակառակ դէպքում առանց տեսնելու և առանց իրար հաւանելու եղած պսակը կորստաբեր է և պսակողների և ծնողների համար:

Շատ անգամ թէ անչափահասութեան և թէ ալ դէպքերում ծնողներն ամուսնացող գոյգերի կամքը չեն հարցնում՝ ալ առանց նորանց համաձայնութեան պսակում են, նրանց չտեսած և չհաւանած աղջկների հետ: Այսպիսի լատուկ դէպքերի համար Սահակ Պարթևի 27-րդ կանոնն իր վերջում ասելայցնում է «եթէ ծնողների ստիպմամբն է, մ'պսակէք»: Հրամանը վերաբերում է քահանայներին, ուրիշներն նախ պարտաւոր են պսակից առաջ պսակող գոյգերին հարց ու փորձի ենթարկել և ստուգել թէ արդեօք նրանց ամուսնանալն յօժարակամ է, առանց բռնադատութեան է, թէ ոչ: Այդ կանոնի տրամադրութեամբ, եթէ պսակը պիտի տեղի չունենայ ծնողների ստիպմամբ և պսակողների փոխադարձ համաձայնութեամբ, այդ պսակը պսակի չլիտի կատարել, իբր կանոններին

հակառակ մի գործ: Մենք այստեղ ասում ենք այն, ինչ որ կանոնն է տրամադրում, իսկ թէ կենքի մէջ գործադրում է կանոնը թէ ոչ, դրանով չենք զբաղւի:

Ամեն ազգերի մէջ էլ բունի, հակառակ պսակողների ցանկութեան պսակներն՝ արգելում են, որովհետև ամուսնութեան համար ամեն ժողովուրդների մէջ էլ գլխաւոր պայմանն ամուսնացողների փոխադարձ համաձայնութիւնն է:

գ. Մտաւոր և հոգեկան պակասութիւններ. Հայ եկեղեցին կանոնական սահմանադրութիւն չունի խելագարների, հոգեկան հիւանդների, ապուշների պսակների անթողատրելիութեան մասին, մինչդեռ դոքա ուշադրութեան չառնելու խնդիրներ չէին: Մեզ թւում է, որ Հայ եկեղեցին հիմնական կանոն ընդունելով պսակող գոյգերի փոխադարձ համաձայնութիւնը, իսկ խելագարների, հոգեկան հիւանդների և ապուշների համար այդ պայմանն անհնար է գործադրել, որովհետև, նրանք այդպիսի համաձայնութիւն տալու կարողութիւնից զուրկ են, ուստի և բնականաբար այդ խնդրով չի զբաղւել, ու դրա համար լատուկ կանոններ չէ սահմանել, զտնելով այդ ինքն ըստ ինքեան հասկանալի:

Հռոմէական և Բուզանդական օրէնքներով, բացի անչափահասներից, իրենց կամքով չեն կարող պսակել նաև հոգեկան հիւանդները, որ իրենց կատարած գործողութեան մասին խորհելու, մըտածելու ընդունակութիւնից և կարողութիւնից զուրկ

են: Կաթուղիկ եկեղեցին այդ խնդրում աւելի է առաջ գնում. գրանց շարքն է դասում նաև այն մարդոց, որ գտնուում են հոգեկան անբնական վիճակի մէջ պսակւելու միջոցին, մի գրութիւն, որ նրանց թույլ չի տալ որ և է գործողութիւն կատարել կամովի, մտածած, օրինակ եթէ պսակւողը հարբած է:

Ռուսաց պետական օրէնքով խելագարների և ՚ի ծնէ խենդերի պսակն անվուեր է հաշուում (X հատ. I մաս.): Քարով այն դէպքերին. թէ որևէ մէկին հոգեկան անբնական վիճակում եղած ժամանակ են պսակել, գրա վաւերական և անվուեր լինելը օրէնքը թողնում է դատարանով որոշել:

դ. *Ծնողների համաձայնութիւն.* — Բարսեղ Մեծի 42-րդ կանոնով «պսակւողները հօր կամ տիրոջ համաձայնութիւնը պիտի ստանան միշտ, որ պսակը հաստատուած համարել». որից պարզ է, որ որդին առանց հօր համաձայնութեան, հօր օրհնութիւնն առնելու չի կարող պսակւել: Հայ եկեղեցին ընդունելով Բարսեղի կանոնը, ընդունում է նաև պսակելիս ծնողների նախընթաց համաձայնութիւնը: Ա. պետական օրէնքը մի առանձին յօդւածով (X հատ. I մաս. 6 յօդ.) արգելում է պսակն առանց ծնողների, խնամակալների և հոգաբարձուների նախընթաց համաձայնութեան: Կաթուղիկ եկեղեցին բացի պսակւող անձանց համաձայնութիւնը, ուրիշ կողմնակի մարդոց, նույնիսկ ծնողների, ոչ համաձայնութիւնն է ընդունում և ոչ էլ միջամտութիւնը:

Ե. Հաս ու Հաս. — Սմուսնական խնդիրների մէջ ամենաբարդ և կնճռոտ խնդիրը, հաս ու Հհասի խնդիրն է, որի վրայ կաշխատենք աւելի ուշադրութիւն դարձնել: Մենք չենք գրազի այդ առթիւ եղած ոչ գեղծումներով և ոչ ապօրինութիւններով, դա մեր ծրագրից դուրս է. այս խնդրին մենք կանոնական, իրաւական նրկատումներով կը մօտենանք, առաջ բերելով նախ, որքան հնարաւոր է շատ ազգերի սովորութիւններ և օրէնքներ:

2 հասութեան երեք տարբեր տեսակներ կան 1) արենակցական, 2) կնքահայրական և 3) խրնամիութեան. սկսենք առաջինից:

1. *Արենակցութեան* կամ ազգականութեան Հհասութիւն. — թէ Մովսիսական, թէ քրիստոնեական և թէ մահմեդական կրօնները հաւատարապէս ընդունում են, որ ամուսնութիւնը մերձաւոր ազգականների մէջ արգելւած պիտի լինի մինչև որոշ աստիճան: Քրիստոնէութիւնն յետագայ դարերում արգելքը խտացրել է ու հասցրել 7—8 աստիճանների. սակայն ինչպէս ասացի այդ երեք դաւանութիւններն էլ հիմնականում համաձայն են — թէ մերձաւոր ազգականների պսակը թույլատրելի չէ և մեղք է:

Հայ եկեղեցին ամուսնական իրաւունքի պատմական զարգացման ընթացքում զուգընթացաբար է գնացել մնացած քրիստոնեայ աշխարհի հետ, մինչև մի որոշ աստիճան: Նրա համար էլ ղեկավարող սկզբունքը մերձաւորների ամուսնութիւն

Թույլ չտալն է: Այսպէս 1) առաքելոց վերագրում 34-րդ կանոնն արգելում է ամուսնանալ աղջկա և քրոջ հետ, (I և II աստիճան) լինին դոքա հարազատ թէ խորդ. քրոջ աղջկայ հետ (III աստիճան): 2) Բարսեղ մեծի 23-րդ կանոնով արգելում է կին առնել քենուէն, կամ իր հարսին (I աստիճան)՝ այդպէս անողին ենթարկելով ոչ միայն ապաշխարութեան այլ և պատելիբելով լուծել պատկը: 3) Ներսէս Մեծի օրով — Արտիշատի Ժողովն (365 թ.) արգելել է մօտիկ արենակիցների պատկը: Ժողովի որոշման մէջ չկալ ցուցումն թէ այդ արգելքը որ աստիճանին է վերաբերում, ուստի և այն մեկնութիւնը թէ արգելքը վերաբերում է չորրորդ աստիճանի արենակիցութեանը՝ կամայական է և անապացուց: Այդ արգելքը երրորդ աստիճանի արենակիցական պատկների համար է, որովհետեւ, ինչպէս լետու կը տեսնինք, առաջի սրոշ աստիճանը, որ մեր եկեղեցական կանոնների մէջ գտնուում ենք, դա չորրորդ աստիճանի արենակիցական պատկի մասին է: 4) Շահապիվանի ազգային եկեղեցական ժողովն 447 թ. զբաղւելով նաև չհասական խնդիրներով, բացարձկ կերպով վճիռներ է կայացնում արենակիցական ամուսնութեան թույլատրելի ամենատարին աստիճանի մասին, որից վեր, բոլոր պատկները թույլատրելի է հաշուում բնականաբար: Ժողովն արգելում է որդու և խորդ մօր, հօր և հարսի, հարսի և տաղեր պատկները (12-րդ կանոն): Շարունակելով իր յաջորդ որոշման մէջ գուտ ազգակցական պատկների

արգելւած աստիճանները թւել, ասում է «ոչ ոք չհամարձակւի առնել կին իր քրոջը, կամ քրոջ որդուն, կամ եղբոր որդուն, կամ հօրաքրոջը կամ ազգի մէջ մի այլ սքի մինչի չորրորդ աստիճանը»: Այժմ տեսնինք թէ ինչ աստիճանների արգելք է անում, որպէս զի իմանանք թէ, երբ ասում է մինչի չորրորդ աստիճանը, արգեօք չորրորդն էլ հետն է թէ ոչ: Ժողովն արգելելով քրոջ հետ պատկել, արգելում է երկրորդ աստիճանի արենակցական պատկը, այդ հաշուով հետևեալ արգելքները վերաբերում ենք քրոջ որդուն՝ երրորդ աստիճան, եղբոր որդուն՝ երրորդ աստիճան, հօրաքրոջը՝ երրորդ աստիճան: Առաջ բերած օրինակների մէջ չկալ և ոչ մի խօսք չորրորդ աստիճանի պատկի վերաբերմամբ: Գուցէ «ազգի մէջ այլ սքի» հետ խօսքերը վերաբերին չորրորդ աստիճանին, բայց այն ժամանակ ինչու չի ասում որ «արգելում ենք երկու քրոջ կամ եղբայրների որդոց և աղջիկներին իրար հետ, այլ միայն լատկապէս երրորդ աստիճանի արենակիցների անունն է տալիս: «Ազգի մէջ այլ սք» խօսքերը պարզապէս վերաբերում են մօրաքրոջը, մօրեղբօրը, քրոջ աղջկան, որանց աւանձին չրիշելով ասում է «ազգի մէջ այլ սք մինչի չորրորդ աստիճանը, այսինքն առհասարակ բոլոր արենակիցների առաջին, երկրորդ և երրորդ աստիճանների ամենատեսակ պատկները թույլատրելի չեն: Այս բացատրութիւնից պարզ է, որ չորրորդ աստիճանի արենակցական պատկի արգելքի մասին Շահապիվանի ժողովը կանոն չի սահ-

մանուս. Հակառակ դէպքում նա մէկ մէկ օրինակներ բերելով արգելած աստիճաններից բոլորի մասին, չէր զանց առնի գոնէ մի օրինակ էլ դրա համար բերել: Մեր այս համոզումը կը պարզւի և լետագայ ժողովների որոշմամբ:

5) Պարտաւի ժողովը քիչ համարելով 447 թ. Շահապիվանի ժողովի երրորդ աստիճանի արենակիցների պսակի արգելքը, նոր որոշումն է կայացնում այդ առթիւ, այն է «սրանից լետոյ չորրորդ աստիճանումն էլ (ի ցորրորդ գարմն) չհամարձակին ամուսնանալ»: Այստեղ պէտք է առանձնապէս շեշտել, որ հայ եկեղեցին ամուսնական չհաստիճեանց դէպքում իւրաքանչիւր նոր աստիճան արգելելիս, հետեւել է յունա-բուզանդական եկեղեցուն: Իւրաքանչիւր նոր արգելք արձագանք է գրել հարևան հայ եկեղեցու կեանքում և նա այդ ազդեցութեան տակ, իր կանոնական սահմազրութիւնն անելիս, ուշ կամ շուտ, այնտեղ՝ արևմուտքում արդէն արգելած արենակցական պսակների աստիճանները մտցրել իր եկեղեցու գործադրող կանոնների մէջ՝ նախապէս ազգի և եկեղեցու ներկայացուցիչների կանոնադիր ժողովի հաստատութիւնն ստանալով: Մեր բացատրութիւնը, թէ Շահապիվանի ժողովն արգելել է երրորդ և Պարտաւի (771 թ.) ժողովը չորրորդ արենակցական աստիճանների պսակները, լինում ենք այն հանգամանքի վրա որ 1) Թէոդոս Մեծի յաջորդները, թուլատրել են կայսերական օրէնքներով չորրորդ աստիճանի արենակցական պսակը, իսկ Շահապիվանի

նի ժողովը երրորդ աստիճանի արգելքը դնում է դրանից մօտ 40 տարի լետոյ: 2) Պարտաւի ժողովից մօտ 80 տարի առաջ Տրուլլեան ժողովով (692 թ. Յուստինեանոսի ժամանակ) արգելում է չորրորդ աստիճանի արենակցական ազգակիցների պսակները: Ես կարծում եմ այս համեմատական ցուցումները բաւական են ապացուցելու, որ Շահապիվանի ժողովը արգելում է երրորդ, իսկ Պարտաւի ժողովը չորրորդ աստիճանի արենակիցների պսակները: Իսկ յատկապէս այդ ժամանակները յունա-բուզանդական քաղաքակրթութեան ազդեցութեան ամենալաւ ժամանակներն են եղել հայ ժողովրդի և եկեղեցու համար: Յատկապէս Շահապիվանի ժողովին մասնակցել են մեր թարգմանիչների այն շարքը, որ Բուզանդական բազմամեայ կրթութեամբ սնւած վերագործել էին Հայաստան հայ մտքի լեզվափոխութեան գործին ծառայելու:

Թէ արգեօք հինգերորդ աստիճանի արենակցական պսակի մասին առանձին որոշումն արել է հայ եկեղեցին իր ժողովների միջոցով, այդ յայտնի չէ, մինչև 1243 թ. Սսի ժողովն եղած եկեղեցական ժողովների որոշումների մէջ այդ առթիւ ոչ մի լիշատակութիւն չկայ, ուստի պէտք է ենթադրել, որ եթէ նույնիսկ կեանքի մէջ արդէն գործադրւում էր այդ արգելքը, այնուամենայնիւ նա եկեղեցու լրութեան իրաւասութեանը ենթարկւեց կողմնակի կերպով Սսի, մեր ասած թւականի ժողովի սահմանադրութեամբ, ուր արգելւում է վեցերորդ աստիճանի արենակիցների պսակը: Այստեղ

էլ, եթէ մենք նաչելու լինինք չունա-բուզանդական  
 և Հռոմէական եկեղեցիներն ալդ առթիւ կանոնա-  
 կան սահմանադրութիւններն, կտեսնենք, որ նա-  
 քա վաղուց արդէն արգելել էին ոչ միայն վեցե-  
 րորդ ալլ և 7 — 8 աստիճանների պտակները  
 կաթոլիկ եկեղեցու համար ալդ արգելքն եղաւ  
 1215 թ. ժողովի որոշմամբ Բննովկենտիոս II  
 պապի օրով:

Ինչպէս Սոի որոշումը ցոյց է տալիս, նա-  
 գտել է, որ խիստ է եօթներորդ աստիճանի չհա-  
 լինելը, որ սահմանել են արեւմուտքում և Բու-  
 գանդիայում, և որ իր ընդհանրական թղթի մէջ  
 առաջ է բերել Ներսէս Շնորհալին, ուստի և ի  
 ժողովրդի կեանքի պահանջների հաճախ արգելք  
 վեցերորդ աստիճանից ալն կողմ չի տանում: Այ-  
 տեսակէտից և սահասարակ հայ եկեղեցու իրա-  
 ւունքի վերաբերմամբ Սոի ալդ ժողովը Հայաստա-  
 նեաց եկեղեցու կանոնադիր վերջին ժողովն  
 եղել: Գրանից յետոյ չունինք որև ժողովի արձա-  
 նագրութիւն, որ ամուսնական խնդիրների համա-  
 որևէ կանոն սահմանած լինի, ուստի և ամուսնա-  
 կան իրաւունքի համար առաջ բերածս կանոնակա-  
 սահմանադրութիւններից զուրս հայ եկեղեցի  
 կանոն չունի և չի կարող ընդունել, քանի որ մ-  
 այդպիսի կանոն նրա ներկայացուցիչների իրաւա-  
 սութեանը չի ենթարկուել:

Այստեղ հարկ ենք համարում ասել, որ թէև  
 Շնորհայու արգելքը բնականաբար Սոի ժողովու-  
 մերժել է, սակայն ժամանակի ընթացքում եկե-

ղեցու ներկայացուցիչների քմահաճույքի գօրու-  
 թեամբ զործ է դրել կեանքի մէջ, առաջ բերե-  
 լով դարերի ընթացքում ոչ պակաս դժգոհութիւն-  
 ներ, որին մենք— ներկայ սերունդի ներկայացու-  
 ցիչներս ականատես ենք եղել: Քանելով որ ալդ  
 կանոնի գործադրութիւնը չի համապատասխա-  
 նում ներկայ պահանջներին Ամենայն Հայոց Հայ-  
 րապետ Մկրտիչ I-նը կանոնական կոնդակով վերա-  
 դառնում է եկեղեցու ժողովի թույլատրած կանո-  
 նին՝ արգելելով վեցերորդը և թույլ տալով եօթ-  
 ներորդ աստիճանը արեւակցութեան չհասու-  
 թեան: Ուրեմն ալժմ հայ եկեղեցին կանգ է առել  
 Սոի ժողովի թույլատրելի աստիճանի վրա՝ ապա-  
 ղալին վերապահելով աւելի ստորին աստիճանների  
 թույլատուութիւնը:

Ահա այն բոլորն, ինչ որ մեզ տալիս է Հայ  
 եկեղեցու, մինչի տասներեքերորդ դարի կէսն ու-  
 ղեցած, կանոնական գործունէութեան կեանքը:  
 Եւրջ ինն և կէս դարու ընթացքում արեւակ-  
 ցական պտակների արգելքը երրորդ աստիճանից  
 բարձրանում է մինչև եօթներորդ աստիճանը:  
 Հայ եկեղեցու որոշումներն ու արգելքները մեզ  
 ցոյց են տալիս որ, Հայաստանում սովորութիւն է  
 եղել ամուսնանալ բրջ և եղբոր աղջիկների, հօրա-  
 բրջ, մօրաբրջ քեռու և հօրեղբօր հետ, այսինքն  
 արեւակցական երրորդ աստիճանում: Թէ աւելի  
 հնումը ամուսնանում էին նաև եղբայրներ և քոյ-  
 րեր իրար հետ, դա մեզ անյայտ է, գրա ապա-  
 ցույցներ չունինք:

Մովսիսական օրէնքով կարելի է ամուսնանալ արենակցական շատ մօտիկ աւտիճաններում— մինչի երրորդ աստիճանը, ըստ այդմ արգելուած է պսակը մօր և խորդ տղի, եղբօր ու քույրերի, ինչպէս և խորդ քրոջ հետ, պապին իր թոռան հետ և հօրաքրոջ և մօրաքրոջ հետ <sup>1)</sup> և այլն, մնացեալ արենակցական պսակները թույլատրելի էին:

Մահմետականների մէջ արենակցական հետեալ պսակներն են արգելուած.— հօր և աղջկայ, քրոջ և եղբօր, մօր և տղայի հօրաքրոջ և քեռու հետ, այսինքն մինչի երրորդ աստիճան արենակցական: Թույլատրելի են և քրոջ տղաների և աղջիկների պսակը, եղբօր և քրոջ սրբոց և այլն, այսինքն արենակցականն չորրորդ աստիճանի պսակը:

Համիշական օրէնքով չէր կարելի ամուսնանալ ուղիղ գծով բոլոր աստիճաններում, թէ զէպի վեր և թէ վար, այսինքն հայրն իր սրգու, թոռան, թոռան թոռի և այլն, ինչպէս և որդին իր հօր, պապի, պապի հօր հետ և այլն: Բացի դրանից չէր կարելի ամուսնանալ եղբօր աղջկայ նրա թոռան և նոյն իսկ թոռան թոռի հետ, դրա հակառակ կարելի էր ամուսնանալ հօր եղբօր և քեռու, հօրաքրոջ, մօրաքրոջ տղաների և աղջիկների հետ:

Բուզանդական կայսրութեան ժամանակ, Յուստինեանոս մեծն իր նովելաներով թէև թույլուեց չորրորդ աստիճանի արենակցական պսակներ, սակայն 692 թ. Տրուլլեան ժողովն արգելեց այդ աստիճանի պսակը: Յունա-բուզանդական եկեղեցին

1) Ղևոցց գիրք զւ. 18 5. 6—18.

ժամանակի ընթացքում արենակցական պսակների արգելքի այդ չափով չբաւականացաւ, այլ հետզհետէ անցաւ հինգերորդ վեցերորդ և նոյն իսկ մինչի եօթներորդ աստիճանները:

Ռուսաց եկեղեցին իր կանոնագրքերով արգելում է արենակցական մինչի եօթներորդ աստիճանի պսակները, սակայն կեանքի մէջ, 6 և 7 աստիճանի պսակները անարգել թույլատրում են և այդ աստիճանի արգէն կատարուած պսակները անվաւեր չեն հաշուում: Տեղի են ունենում նաև 5-րդ աստիճանի պսակներ, թէև սակաւաթիւ և ոչ աւանց բարձրագոյն թույլատուութեան:

Կաթոլիկ եկեղեցին այդ կազմից աւելի խիստ դանւեց, նա արգելքը բարձրացրեց մինչի ութերորդ աստիճանը, իսկ երբ աստիճանների հաշուելու զերմանական ձևով երկու ծնունդը մի աստիճան էին հաշուում կաթոլիկ եկեղեցում, այդ արգելքը բարձրացաւ մինչի 14-րդ աստիճանը: Սակայն Իննովկէնտիոս III պապի օրով 1215 թ. Լատերանեան եկեղեցական ժողովում որոշուեց կանգ առնել ութերորդ աստիճանի վրա: Այժմ կաթոլիկ երկիրների մէջ արգելքները այդ խստութիւնը չի զործագրուում, ուր կատարուում են պսակներ շատ աւելի մօտ աստիճանների արենակցութեան:

Յողորական եկեղեցին այդ խնդրում էլ փոփոխութիւններ մտցրեց, նախ վերագառնալով հին կապարանի թույլատրած աստիճաններին: Գերմանական կայսրութեան մէջ պետական օրէնքներով թույլատրելի է ամուսնութիւն արենակցական եր-

րորդ աստիճանում. այսինքն, ոչ միայն երկու եղբոր և քրոջ որդոց ամուսնութիւնը, հօրաքրոջ, մօրաքրոջ, հօրեղբօր, մօրեղբօր որդոց և աղջկերանց հետ կարելի է ամուսնանալ, որ չորրորդ աստիճանն է, այլ նաև եղբօր աղջկայ և աղայի, ինչպէս և քրոջ աղջկայ հետ, որ արենակցութեան երրորդ աստիճանն է: Այս հիման վրա արգելուում է ուրեմն պսակը հօր և աղջկայ, եղբայրների և քույրերի, խորդ քույրերի հետ, մօր, խորդ մօր և որդու հետ:

2. *Կնքահայրութիւն.* — Քրիստոնէութեան հէնց սկզբի դարերից եկեղեցին ահագին նշանակութիւն է տւել կնքահայրութեանը — քաւորութեանը, ներկայացնելով քաւորին իբր երկրորդ հայր ըստ հոգւոյ: Սանիկի վերաբերմամբ եկեղեցին մեծ դեր է տւել կնքահօրը — նա պիտի հոգայ նրա հոգևոր և բարոյական կրթութեան վրա, եկեղեցու պահանջների համաձայն՝ նրան արժանաւոր ժառանգ լինելու համար: Եկեղեցին իր միջոցով մկրտութեամբ սանիկին հոգևոր ազգակից անելով քաւորին, այդ ազգակցութիւնը հաւասար և նոյն իսկ նախապատիւ է հաշւել արենակցական ազգականութիւնից, ուստի և շատ բնական էր, որ ամուսնութեան դէպքում արգելքներ առաջ բերէր սանիկի և քաւորի և նրա սերնդի մէջ:

Հայ եկեղեցին կնքահայրութեան համար իր կանոնական սահմանադրութեանց մէջ ոչինչ չիշատակութիւն չի անում, ոչ մի կանոնական արգելք չի դնում: Չկան այդպիսի կանոններ և Հայ եկե-

ղեցու ընդունած երեք տիեզերական, վեց տեղական, առաքելոց և եկեղեցու ս. հայրերի կանոնական սահմանադրութիւնների մէջ: Այս խնդում նա վարել է աւանդաբար, սովորութեամբ հասած բանաւոր կանոններով: Ահա ղեկավարւելով բերնէ բերան անցած աւանդութիւններով, եկեղեցական վարչութիւնն առանց մի հիմնական, կայունութիւն ունեցող վերաբերմամբ, արգելել է կնքահայրութեան գանազան աստիճաններ՝ տարբեր տեղերում տարբեր կերպով բացատրելով սովորութեան օրէնքի արգելքները՝ նայելով թէ ո՞վ է իւրաքանչիւր տեղի վարչութեան զուլխը: Այլ կերպ ասած, սրոշ գրաւոր՝ եկեղեցու լրութեան կողմից ընդունւած կանոնի բացակայութեան պատճառով, տեղական իշխանութեան ներկայացուցիչներին էր և է թողւած բացատրել ըստ իր կամաց քաւորութեան աստիճանների թույլտուութիւնը: Այս չհասութեան համար Ներսէս երրորդ Աշտարակեցի կաթուղիկոսը, իր կանոնական կոնդակով (1854 թ.) հետեւեալն է ասում «կնքահայրական ազգակցութունը պիտի պահպանեն կնքահօր ըստ մարմնոյ ծնեալ որդոց համար, չտարածելով նորա կնքահայրական ազգակցութիւնը կնքահօր եղբօր կամ քրոջ և կամ հօր եղբօր և մօր եղբօր և ոչ էլ կնքողի աներոջ կամ նոցա սերունդների վրա, այլ միայն կնքողի սրու գաւակների, արենակից ազգականների օրինակի համաձայն»: Հայրապետական այս կոնդակի հիման վրա, կնքահայրական չհասութիւնը երեք ծննդով է սահմանափակւում. այսինքն սանիկը

չի կարող առնել կնքաճօր որդուն, մինչդեռ սանկին կարող է առնել կնքաճօր եղբայրը կամ քույրը:

Թէ յունական եւ թէ կաթողիկէ եկեղեցիները կնքաճայրութեան արեւակցութիւնը սկզբունքով ընդունելով հաւասար ազգակցականին, նոյն տեսակ էլ արգելքներ են սահմանել կանոնական կարգերով: Նրանց մէջ կնքաճայրութեան չըհասութիւնը 5 — 7-րդ աստիճաններում արգելւել է միշտ: Սակայն այս արգելքն այժմ մնացել է իբր արգելք ու առանց կանոնական սահմանադրութեամբ վերանալու, կեանքն ինքը սովորութի օրէնքով չհասութեան այդ աստիճանները մերժել է. իսկ այնտեղ, ուր զոյութիւն ունի քաղաքացիական պսակը, կնքաճայրական չհասութիւնը իսպառ վերացել է:

Հայ եւ օտար եկեղեցիների կանոնական սահմանադրութիւնների տարբեր ու շարժութիւնը կնքաճայրական չհասութեան վերաբերմամբ աչքի ընկնող հանգամանք է. մենք այստեղ առ այժմ թողնում ենք որ եւ է բացատրութիւն տալը, որին կը վերադառնանք, երբ խնամեական չհասութեան մասին էլ մեր ասելիքները կվերջաւորենք. ուստի եւ անցնենք նրան:

3. Խնամիութիւն. — Խնամիներ են կոչուում հարսի եւ փեսայի կողմերի բոլոր ազգականները փոխադարձաբար իրար համար: Օրինակ փեսի եղբոր, քրոջ եւ այլ բոլոր ազգականների համար խնամիներ են հարսի մայրը, քույրերն ու եղբայրները, նրանց որդիք ու կանայք, նրա հայրը, հօր-

եղբայրները, քեռիները, նրանց որդիքն ու կանայք եւ այլն եւ այլն:

2. Հայ եկեղեցին իր կանոնական կարգերի մէջ խնամութեան չհասութեան աստիճաններ չէ սահմանել, ուստի եւ խիտ, հայ եկեղեցու ժողովների կանոնների հիման վրայ լեւաճ կարծիքով, նա բացի այն արգելքները որ դնում է Մովսիսական օրէնքը, Ղևտացոց գրքի մէջ, խնամեական չըհասութեան համար այլ արգելք չի ընդունում: Իսկ որ եւ է արգելք, որ չէ սահմանւած եկեղեցու լրութիւնից — ազգի եւ եկեղեցու ներկայացուցիչների որոշումներով, հակառակ է նրա կանոններին: Ինչպէս կնքաճայրութեան չհասութեան, այնպէս էլ խնամիական չհասութեան վերաբերմամբ եկեղեցին եւ իր վարչութիւնը ղեկավարւել են աւանդաբար իրենց հասած սովորութիւններով եւ եկեղեցու նշանաւոր վարդապետների սահմանած արգելքներով, որոնք եկեղեցու համար պարտաւորական չեն եւ չեն էլ կարող լինել, քանի որ չեն ենթարկւել եկեղեցու կանոնադիր ժողովի քննութեան, որ միակ իրաւատէրն է կանոններ եւ կարգեր սահմանել եկեղեցու ամբողջութեան համար: Այդ հիմնական տեսակէտից՝ որ Հայ եկեղեցու իրաւունքի ամենաէական կէտն է, նայած՝ առհասարակ եկեղեցական կանոնների նկատմամբ որքան էլ սուրբ եւ արժանաւոր լինի մի Շնորհալի, մի Քրիզոստոմոս, մի Երզնկացի, մի Մխիթար Գօշ, մի Ղրիմեցի, այնուամենայնիւ նոքա բոլորն էլ անհատներ են եւ ոչ եկեղեցու լրութիւնը ներ-

կայացնող մի հիմնարկութիւն, ուստի և դոցա սահմանած կարգերը ունենալով մասնաւոր բնաւորութիւն, եկեղեցու համար պարտադիր չեն: Ահա մենք, չչեղելով Հայ եկեղեցու այդ հիմնական սկզբունքից, անուամբ ենք, որ նա խնամութեան չհասութեան և ոչ մի աստիճան չէ սահմանել, բացի այն, որ նա ընդունել է Հին Ուխտից:

Խնամութեան չհասութեան մասին կանոններ սահմանող եկեղեցու վարդապետներից — Մխիթար Գօշ, Երզնկացի Յովհանն և Տաթևացի Գրիգոր — միայն Մխիթար Գօշի դատաստանագիրքը կարող է ուշադրութեան առնել, իբր երկար ժամանակ գործադրւած եկեղեցական կանոնների ժողովածու: Ըստ մեր կարծեաց Մխիթար Գօշի 109-րդ<sup>1)</sup> կանոնով թույլատրւում է քահանայից համար խնամութեան հինգերորդ աստիճանը և աշխարհականաց չորրորդ աստիճանը: Բայց անցնենք, մեր նպատակից դուրս է քննութեան առնել Գօշի այդ կանոնի սահմանումները, որ մի խառնաշփոթութիւն է ներկայացնում բազմաթիւ կրկնութիւններով:

Հայ եկեղեցին հակառակ կանոնների լուսթեան, աւանդութեամբ ղեկավարւելով, խնամեական չհասութեան արգելքները բարձրացրել էր մինչի եօթներորդ աստիճանը, երբեմն թույլ տալով նույն իսկ չորրորդը, հինգերորդը և վեցերորդը, երբեմն էլ արգելելով դոցա հետ միասին և եօթներորդ աստիճանի խնամութեան պատկները: Այդ

1) Մխիթար Գօշ, Դատաստանագիրք երես 225 — 26. 109-րդ կանոն:

խնդիրների լուծման գործում դեր էր խաղում հոգևոր իշխանութեան բարձր ներկայացուցիչների անձնական կարծիքն ու եկեղեցական կանոնների հասկանալու և բացատրելու ընդունակութիւնը: Խնամեական չհասութեան համար այս խառնակ վիճակն էր տիրում մինչի անցեալ դարի իննսական թւականների սկիզբները, երբ ձգտումներ եղան թույլատրելի հաշւել խնամեական հինգերորդ աստիճանի պատկներ: Այդ խնդրի վերջնական լուծումը տեղի ունեցաւ Ամենայն Հայոց Հայրապետ Մկրտիչ I-ի կանոնական կոնդակի հրատարակումով (1899 թ. յունիս 30. № 797): Այդ կոնդակով վերացւում է խնամեական հինգերորդ աստիճանի չհասութիւնը:

Մովսեսական օրէնքով արգելւում է խնամեական առաջին աստիճանի և երկրորդ աստիճանի պատկները: Արգելւում էր առնել հարսը տագերը, և հարսը կեսրարին: Մնացեալ աստիճանները թույլատրելի էին:

Մահմետականների մէջ եղբօր մահից յետոյ հարսին կարող է առնել տագրը (երկրորդ աստիճան): Կարող են առնել երկու եղբայր երկու քրոջ (երրորդ աստիճան) և այլն:

Յունա-Բուզանդական եկեղեցին չորրորդ աստիճանի խնամեական պատկն արգելում է 692 թ. Տրուլլեան ժողովի կանոններով (53 կանոն): Կրթութից յետոյ զանազան ժամանակներում այդ արգելքները նա բարձրացրել է մինչի եօթներորդ աստիճանը:

Կաթողիկէ եկեղեցին արգելում էր, ինչպէս  
 և բոլոր եկեղեցիները, պսակը խորդ որդու կնոջ,  
 խորդ աղջկայ, խորդ մօր հետ: Զանազան ժամա-  
 նակներում սահմանում կանոններով այդ արգելքը  
 բարձրացու համարեան թէ համահաւասար արեւակ-  
 ցական պսակների արգելում աստիճաններին: Սա-  
 կայն այժմ մնում են նոքա իբր արգելքներ, ու  
 կեանքի մէջ գործադրում է անարգել կերպով  
 նրա պահանջների հիման վրա առաջացած կանոն-  
 ներ, որ այդ խիստ արգելքները չի ճանաչում, ու  
 չի էլ ուզում եկեղեցու իրաւասութեանը ենթարկել:

Գերմանական կայսրութեան մէջ տիրապե-  
 տող օրէնքներով արգելում են միայն պսակները  
 խորդ աղջկայ, խորդ աղայի, խորդ մօր, գոնքանչի,  
 և հարօի հետ. մնացած խնամեական աստիճան-  
 ների բոլոր պսակները թույլատրելի են:

Ռուսաց եկեղեցին իրենց Սինոդի ուկագնե-  
 րով (1841 և 1859 թ.) թույլատրելի է համարում  
 կրկնակի խնամութիւն երկրորդ և երրորդ աստի-  
 ճանները թէև կանոնական կարգով անթույլատրելի  
 են, ինչպէս և արեւակցական չորրորդ և հինգ-  
 երորդ աստիճանների պսակները: Սակայն կեանքի  
 մէջ այդ պսակների թույլատուութիւնը հնարաւո-  
 րութեան սահմանումն է, որ տրւում է եկեղեցու  
 բարձրագոյն իշխանութեան կողմից՝ ոչ օրինակ ալոյց:

Աւետարանական եկեղեցին խնամեական չը-  
 հասութիւն՝ երրորդ աստիճանից բարձր չընդունեց,  
 իսկ սկզբներում այդ խնդիրների առթիւ նոյն իսկ  
 օրոշ կանոնական սահմանադրութիւն չկար, ամեն

տեղ տարբեր կարգեր էին տիրում. մի տեղ թույլա-  
 տրելի էր երրորդ աստիճանի խնամեական պսակ,  
 մի այլ տեղ նոյնիսկ քենու վրա կարելի էր ամուսնա-  
 նալ: Գերմանական կայսրութեան մէջ, ինչպէս  
 արդէն տեսանք, օրէնսդրական կարգով այդ խառ-  
 նաշփոթութիւններին վերջ է տրւած՝ ընդհանուր  
 կանոնների հրատարակմամբ:

գ. Ամուսնանալ չեն կարող լուսաւո.— 1) կոյ-  
 սերը, 2) կուսակրօն կամ վանական հոգևորակա-  
 նութիւնը և 3) կրկնամուսնութեան իրաւունքից  
 զրկուած են աշխարհի հոգևորականները— քահա-  
 նաները, քարկաւագները՝ քանի այդ կոչման մէջ  
 են և կամ ուզում են այդ կոչման մէջ մնալ:  
 Այն դէպքում, եթէ յիշեալներից որ և է մէկն ա-  
 մուսնանայ, կամ պէտք է պսակը անվաւեր, լուծ-  
 ւած համարել և կամ կարգը պիտի լուծել:

է. Պսակի վաւերականութիւնը.— Պսակը վա-  
 ւերական է, եթէ կայացել է եկեղեցում, վկանե-  
 րի ներկայութեամբ և քահանաների ձեռքով եկե-  
 ղեցու թույլատրած կանոնների համաձայն: Պսակի  
 իբր գործողութիւն կատարւած լինելու և ցուցա-  
 կազրելու իրաւունքը բուզանդական կայսրութեան  
 մէջ վերջնականապէս տրւած էր եկեղեցուն և  
 եկեղեցական վարչութեանը: Հայաստանումն էլ  
 պսակն իբր եկեղեցական— կրօնական— արարողու-  
 թիւն, եկեղեցու իրաւասութեան է ենթարկւած  
 եղել և է: Ռուս. պետական օրէնքով քրիստոնեա-  
 ների պսակների արձանագրութիւնը անոււմ և  
 պահպանուում է իւրաքանչիւր գաւանութեան ամեն

մի եկեղեցու միաբանութեան ձեռքով: Այն երկրներում, ուր քաղաքացիական պսակն է մուտք գործել՝ պսակն ու նրա արձանագրութիւնը վերապահւած է քաղաքական իշխանութեան:

4) Թէ ինչո՞ւ Հայ եկեղեցին խնամուածեան եւ կնքահայրութեան աստիճաններ չէ որոշել. — Երօք սա խիստ ուշագրաւ բան է: Երբ տեսնում ես, որ նա պարբերաբար, ժողովների միջոցով ի միջի այլ եկեղեցական խնդիրների կարգաւորում է և արենակցական չհասութեան խնդիրները: Երբ տեսնում ես, որ նա մէկը միւսի ետեւից այդ չհասութեան աստիճաններն երրորդից մինչի վեցերորդն է հասցնում՝ թող տալով ամուսնութիւն եօթներորդ աստիճանում, բնականաբար հարց է ծագում, թէ ինչպէս է, որ Հայ եկեղեցին մօտացութեան է տւել նոյնպիսի միջոցներ ձեռք առնել նաև կնքահայրութեան և խնամութեան պսակնիրի վերաբերմամբ: Եւ արդեօք սա մօտացութեան գործ է, թէ կամովի անուշազրութիւն, որով կարծես ասելիս լինին, թէ կարիք չեն զգացել այդպիսի արգելքների: Տեսնենք. —

Ինչպէս արդէն տեսանք, արեւմուտքում, Յունա-Բուզանդական եկեղեցում չորրորդ դարում արդէն արգելում էր երրորդ աստիճանի արենակից ազգակոնների պսակները, որի արձագանքն ենք հաշուում Ներսէս Մեծի հրաւիրած Աշտիշատի ժողովի որոշումը, թէ մերձաւորների հետ չպէտք է պսակել: Երրորդ աստիճանի արենակցական պսակի արգելքը և չորրորդի թողաւութիւնը պետական

օրէնքով հաստատեցին Թէոդոս մեծի յաջորդները, և պարտադիր արին: Դրանից տասնեակ տարիներ յետոյ նոյն արգելքը կրկնեցին Նահապիվանի ժողովի կանոնները: VII դարի վերջերքին 692 թւին Բուզանդական եկեցեցին արգելեց IV աստիճանի արենակցական և IV աստիճանի խնամեական պրսակները: Մօտ 80 տարի յետոյ Հայ եկեղեցու ազգային ժողովը (Պարտաւ քաղաքում 771 թ.) անխախտ հետեւելով հարեան եկեղեցու որոշմանը, արգելում է պսակ կատարել չորրորդ աստիճանի արենակցութեան դէպքում: Յունական և Հրոմէական եկեղեցիները մինչի XIII-րդ դարու սրկզները այդ արգելքները բարձրացրին մինչի VIII-րդ աստիճանը: Հայոց եկեղեցին 1243 թ. մօտաւորապէս, բարւոք համարեց այդ արգելքը հասցնել մինչի վեցերորդ աստիճանը՝ եօթներորդը թող տալով: Այս զուգահեռական ընթացքը չենք կարող պատահական հաշւել այն գլխաւոր պատճառով, որ չենք կարող ուրանալ մեր յարաբերութիւնները դէպի արեւմուտքը. չենք կարող ուրանալ, որ մինչի այդ ժամանակների մեր լաւագոյն հոգեւորականներն ու կրթութեան տէր անձինք բուզանդական ուսմունքով և գիտութեամբ էին սնւած, ուստի և շատ բնական էր, որ կանոնական այդ խնդրում Հայ եկեղեցին հետեւէր արեւմուտքին և նրանից կտրեւոր օրինակներ վերցնէր: Արենակցական չհասութիւնների վերաբերեալ մեր եկեղեցու արգելքներն արդիւնքն են արեւմուտքի ազդեցութեան: Բայց չէ որ նոյն արեւմուտքը այդ-

պիտի կանոններ է դրել և կնքահայրութեան և խնամութեան համար, որ արգէն մենք առաջ ենք բերել: Ինչպէս որ, Պարտաւի ժողովականները հետևողութեամբ Տրուլեան ժողովի որոշման, արգելք են դնում արենակցութեան չորրորդ աստիճանի պատկների վրա, իսկ նոյն ժողովի խնամեալիան չորրորդ աստիճանի պատկի արգելքն անուշազիր են թողնում: Գուցէ կասկած լինի, որ այդ եկեղեցու ժողովների կանոնները յայտնի չեն եղել Հայերին. բայց սա զուր է, որովհետև այժմ զուլութիւն ունեցած ձեռագիր կանոնագրքերը զրա հակառակն են ապացուցանում:

Անկասկած է, որ XIII դարի կիսին, երբ Սոխ ժողովի մէջ արգելք էր դրուում արենակցական վեցերորդ աստիճանի պատկի համար, ժամանակի հայ եկեղեցու հայրերին յայտնի են եղել օտար եկեղեցիների կանոնները:

Արենակցական աստիճանների վրա արգելք դնող ժողովները չէին կարող մոռանալ եկեղեցու համար այնքան նշանաւոր կնքահայրութեան չհասութեան և խնամեալիան պատկները: Այո չէին կարող մոռանալ, մի հանգամանք՝ որ մեզ բերում է միակ հնարաւոր եզրակացութեան թէ, Հայ եկեղեցին չէ ցանկացել այդ օրինակ պատկների համար արգելքները շատացնել՝ թողնելով իւրաքանչիւր պատկուղի խղճին՝ ամուսնանալ իր ստնիկի հետ թէ ոչ, որին իրեն որդի է համարում ըստ հոգւոյ. իր սանիկին կին ուզել իր որդու համար, թէ ոչ, որ գէպքում իր ըստ հոգւոյ զա-

ւակը կին պիտի դառնար իր ըստ մարմնոյ որդուն: Կամ թէ առնել երկու քույր իր երկու որդիներին (III աստիճ. խնամութիւն), որով երկու քույր մի ընտանիքի անգամ էին դառնում, լինելով երկու եղբօր կին և այլն և այլն: Սոցա հետ ամուսնութիւնը մերձաւորի անկողին պղծել չի հաշուել հայ եկեղեցին, ուստի և արգելքներ, կանոնական սահմանադրութիւններ չէ արել: Այլ բան է արենակցական ամուսնութիւնը. այնտեղ ՚ի ծնէ մի ընտանիքի անգամներ պիտի մերձենային միմեանց, մի անկողին պիտի մտնէին. եկեղեցին չէր կարող զիջող լինել այս խնդրում և իրօք նա արգելքներ դրել է. նա սահմանել է որ մի եղբօր թոռը առնի միւս եղբօր թոռնորդուն և ուրիշ ոչինչ: Հէնց նոյն իսկ այս խնդրում, մինչ միւս եկեղեցիները խստութիւնը բարձրացնում էին մինչի եօթներորդ աստիճանը և աւելի հեռուն նոյն իսկ, բայց Հայ եկեղեցին առանց ժողովների որոշման լուռ կերպով ասել է, բաւական է խնամութեան համար Մովսեսական օրէնքը, նրանից բարձրը, հեռուն, ով ինչպէս կամենայ: Եւ իրօք ինչ արգելք կարող է լինել երրորդ և մանաւանդ չորրորդ աստիճանների խնամութեան պատկների համար: Մեր եկեղեցին կանոնական որոշումներ, արգելքներ չի դրել ոչոցա համար, ուստի և թույլատրելի պիտի լինին:

Մեզ յայտնի են շատ գէպքեր, որ Ամենայն Հայոց Հայրապետ Մկրտիչ I-նը թույլ է տւել երրորդ աստիճանի և նամանաւանդ չորրորդ աստիճանի խնամեալիան չհասութեան պատկներ: Այդ

գէպքերը ցոյց են տալիս, որ կեանքն ինքը վերացնել է ձգտում այդ արգելքները, որ եկեղեցու վարչութիւնն առանց իրաւունք ունենալու դրել է իր առաջ, քանի որ այդ արգելքները եկեղեցու լրութեամբ չեն սահմանւած: Դոքա այնպիսի պահանջներ են որ պիտի բաւարարութիւն տալ, ինչպէս և խոհեմ կերպով բաւարարութիւն է տալիս Ազգիս Ներկայ Կաթուղիկոսը, սակայն այդ բաւարարութիւնը 'ի միջի այլոց, կամ իբր բացառութիւններ չպէտք է անել, այլ մի ընդհանուր կանոն: Այստեղ Հայրապետների իրաւասութեան խորնդիր չի կարող ծագել այն պատճառով, որ Հայ եկեղեցու ժողովներն արգելք չեն դրել, որ այդ արգելքը վերացնելու խնդիր ծագի ու գրա հետ էլ իրաւասութեան գործ. այլ միայն եղած կանոնների բացատրութիւն, աւելի ճիշտն ասած ճըշմարիտ անշեղ գործադրութիւն՝ և ահա երբորդ և չորբորդ աստիճանի խնամեական պատկերի արգելքը ինքնիրեն վերացած է: Այդ արգելքը դրել է մի սովորութիւն, մի Հայրապետ, եկեղեցու մի բարեպաշ վարդապետ, իսկ այն, ինչ սահմանել է մասնաւոր ձեւ քով, կարող է եկեղեցու ծայրագոյն մի Հայրապետ վերացնել նոյն իրաւունքով, որ իրենից ասաջ է նոյնպիսի մէկը սահմանել, միայն թէ իւրաքանչիւր այդպիսի մի գործողութիւն լինի Հայ եկեղեցու ժողովների իրաւասութեամբ որոշւած խնդիրների շրջանակում անպայման կերպով որովհետեւ Հայոց Հայրապետը այդ ժողովների, Հայ եկեղեցու լրութեան սահմանած կանոնների, դա-

ւանութեանց, կարգերի և այլն աւանդապահն ու ծայրագոյն հսկողն է միայն:

Դառնալով բուն խնդրին, կրկնում ենք, Հայ եկեղեցին ըստ մեր հայեցողութեան, կարիք չէ զգացել դժւարութիւններ յարուցանել կրնա՞հայրութեան և խնամութեան պատկերի համար՝ սահմանելով կանոնական արգելքներ:

5) Թէ ինչպէս պիտի որոշել չնաստիճեան որ և է պատկի աստիճանները. — Խօսելով հաս ու չհասի մասին, մեր գործը ըստ կարելոյն լրիւ չէր լինի, եթէ մենք չցոյց տայինք գործնականօրէն, թէ ինչպէս պէտք է հաշուել չհասութեան ճիւղագրութեան աստիճանները: Ուստի ստորևում ասաջ կրեբենք բացատրութիւններով հանդերձ հնարաւորին չափ շատ և բազմատեսակ ճիւղագրութեան օրինակներ, յատկապէս ուշագրութիւն դարձնելով բարդ ձևերի ճիւղագրութիւնների վրա:


ա. Արենակցութեան ճիւղագրութեան աստիճանները. — Արենակցական կամ ազգականութեան ճիւղագրութեան աստիճանները հաշուում են երկու տեսակ, մէկն ուղղագիծ՝ վերեւից ներքև և ներքևից վերև, կամ ծագմանկէտից վար սրդին ու թոռներն և այլն և վարի աստիճաններից — թոռներից դէպի հայրերն ու պապերը — դէպի ծագման կէտը, իսկ միւսը կոզմնակի գծերով:

№ 1. ուղղագիծ օրինակ Կիւակոս (նալր) 1. ասիճան.  
 Թովհանէս (սրդի) 2. ասիճան.

- Տիրուհի (քուն) 3. ասիւնան.
- |
- Գուրգէն (քունուրդի) 4. ասիւնան.
- |
- Մարիամ (քունաքոռ) 5. ասիւնան.
- |
- Սմբատ (ծոռնր) 6. ասիւնան.
- |
- Մկրտիչ (ծոռնուրդի) 7-րդ ասիւնան եւ այլն.

Ուղիղ գծով արենակցական աստիճաններից և ոչ մի անհատ չի կարող ամուսնանալ ոչ ստորե գտնուած և ոչ գէպի վեր եղած միւս սր և է անհատի հետ. այսինքն հայրը չի կարող ամուսնանալ իր ազգկալ, իր թոռան, թոռնորդու և այլն հետ, նոյն և մայրը. ինչպէս և թոռը չի կարող ամուսնանալ իր պապի, պապի հօր, պապի պապի հետ: Այս կանոնն ընդհանուր է բոլոր քրիստոնեայ ազգերի, մահմետականների, հրէաների համար:


Արենակցական աստիճանների հաշուելու երկրորդ ձևը կողմնակի գծով ծնունդներինն է: Այդ գծով հաշուում են մի հօրից սերած երկու եղբայրների կամ քույրերի սերունդները. այսպէս.




Արենակցական չհասուածեան նկարագիրն անելիս ասացինք, որ Ստի ազգային ժողովի կանոնով

արգելում է արենակցական վեցերորդ աստիճանի պսակը, և թայլ արոււմ եօթներորդը:

Եղբայրներ.



Քոյր եղբայր



№.№ 3 և 4 օրինակներից առաջինն արենակցական եօթներորդ աստիճանի ճիւղազրուածիւն է, ու թոյլատրելի — թոռնորդին առնում է եղբոր թոռանը: Երկրորդ օրինակը վեցերորդ աստիճանի արենակցութիւն է, որ անթոյլատրելի է — քույր և եղօր, երկու եղբօր կամ երկու քրոջ թոռներն իրար չեն կարող առնել: Չեն կարող իրար առնել (№ 3 օրինակ) Սթեփենիկը Սմբատին (հինգերորդ աստիճան), Մարիամը Յովհաննէսին (չորրորդ աստիճան) և այլն:

Եկեղեցու ընդունած ճիւղազրական աստիճանները հաշուելու կանոնով մի գույլ ամուսիններ մի սրտա, մի աստիճան են: Վերևի բերած օրի-

նակները ցոյց տւին, որ միւսնոյն հօր երկու որդիքը, հօր նկատմամբ առաջին աստիճանն են, նրանց որդիքը երկրորդ և այլն, ուստի և եթէ որդին ամուսնացած է նրա կինն իր հօր համար առաջին աստիճանի չհաս է. և որովհետեւ պսակւածները արեւակիցներ են հաշուում իրենց ծնողաց համար ինչպէս և ուղղագիծ բոլոր ազգականներին, այդ պատճառով էլ եղբօր կինը եղբօր համար նոյն աստիճան է արեւակցութիւն է համարուում ինչ որ եղբայրը: Եղբօր մահից լետոյ նրա կինը չեն կարող առնել ոչ նրա եղբայրը, ոչ եղբօր որդին, ոչ թուռը, թուսնորդին և այլն, որովհետեւ դրանց համար նա արեւակից է: Կինը մեռելուց լետոյ փեսան չի կարող առնել իր քենուն, նրա հօրաքրոջը, մօրաքրոջ նրանց աղջիկներին, հօրեղբօր աղջկան, աներորդու աղջկան և այլն: Այդ ազգակցութիւնը չի տարածուում փոխադարձաբար հարսի ու փեսայի ազգականութեան վրա, այնտեղ նոքա փոխադարձաբար կարող են ամուսնանալ, որ լինում է արգէն խնամութիւն՝ թոյլտարելի բոլոր աստիճաններում:

Մինչի այժմ առաջ բերած օրինակները ցոյց են տալիս, որ ճիւղագրութիւն կազմելիս և աստիճաններ որոշելիս, նախ և առաջ իրար տակ պիտի ծննդեան կարգով գրենք հօրից սկսած մինչի մեր ցանկացած ծնունդը, օրինակի համար (№ 3) Յովհաննէսի թուսնորդին Յովսեփը ուղում է պսակւել. նախ գրում ենք իրեն, լետոյ հօրը, լետոյ պապին և լետոյ պապի հօրը, որի եղբօր թուսնը ինքը

պիտի առնի ապա գրում ենք նրա եղբօր, նրա որդու և ապա նրա թուսնը Մարիամին — հարսնացուին: Այսպէս գրելուց լետոյ նայում ենք թէ քանի ծնունդ ենք ստացել. այդ հաշուով էլ, որքան ծննունդ ենք ստացել, այնքան էլ աստիճան կլինի: Ասել է այդ հաս ու չհասի մէջ որքան ծնունդ կայ, այնքան էլ աստիճան: Արեւակցական ազգականութեան մէջ, թէ Ստի 1243 թ. ժողովի կանոնով և թէ վերջերքս Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակով, որ մուսացութեան տւած ազգադիր կարգը վերականգնեց, պսակ կատարելիս երկու կողմնակի զժերով վեց ծննունդ պիտի հաշուել որից լետոյ եօթներորդ ծնունդը վեցերորդին հաս է:

2) Այժմ անցնենք կնքահայրութեան շրջանութեանը: Քրիստոսէական եկեղեցու հնաւանդ սովորութեան համաձայն կնքահայրութիւնը հաշուում է հոգևոր արեւակցութիւն, որ գնւում է աւագանի մկրտութեամբ ուստի և իբր արեւակցութիւն ըստ հոգւոյ՝ դրանց — կնքահօր և կնքամօր, կնքահօր և սանիկի և այլն մէջ պսակ թույլտարելի չէ: Ի երենք օրինակներ. —

	հաւոր	սանամեր.	հաւոր	սանիկ.
№ 8.	2,	Կարսպեց Եղիսաբեթ	№ 9.	Վարդան 4, Անուշ 3,
		1, Յարութիւն 3,	Շուշանիկ 1,	Յակովբ 1, Լուսիկ 2,

Առաջ բերած ճիւղագրութիւնների համաձայն 1) Կարսպեթը չի կարող առնել իր կնքամօրը — Եղիսաբեթին, և ոչ էլ իր սանիկ Շուշանիկին, 2) Յարութիւնը չի կարող առնել Եղիսաբե-

թին և ոչ էլ Շուշանիկին, որ իր հօր սանիկն է, և իր քույրացուն ըստ հոգևոց արենակցութեան: 3) Վարդանը չի կարող առնել իր սանիկ Անուշին և ոչ էլ նրա աղջիկ Լուսիկին. 4) Յակովբը չի կարող առնել Անուշին. 5) Յակովբը կառնի Լուսիկին, որ չորրորդ աստիճանի հոգևոր ազգակցութիւն է: Շատ առաջներում մեր մեջ այդ էլ չբնականութիւն էր: Երրորդ աստիճանի կնքահայրութեան չհասութեան թույլատրելի լինելու մասին արդէն ասել եմ, ասել եմ և այն, որ այդպիսի պատկանելի թույլատուութիւնը Հայրապետական իշխանութեան գործ է: Ինչպէս արենակցական №№ 4 — 7 օրինակներում, այնպէս էլ կնքահայրական արենակցութեան մէջ չհասութիւնը վերաբերում է քաւորի և սանամօր ու նրանց սերնդներին և ոչ կողմնակի ազգականներին, այսինքն քաւորի եղբայրներին և քույրերին, ինչպէս և սանիկի եղբայրներին, քույրերին և առհասարակ այլ ազգականներին: Սանիկի քույր ու եղբայրը, եթէ սանիկներ չեն, նոյն քաւորի որդոց, եղբայրների և աղջկերանց կառնին առանց արգելքի. իսկ աւելի հեռավոր ազգականների հետ պակասելիս որ և է արգելքի մասին խօսք մինչև իսկ չի կարող լինել:

3) *Խնամեական հասութիւն.* — Խնամեական չհասութիւնը իստ բազմութիւ տեսակների է բաժանուած՝ խանութիւնը որ ճիւղաւորութեամբ: Մենք կաշխատենք հնարաւոր եղածին չափ շատ և բարդ ճիւղագրութեան օրինակներ տալ: Խնամեական ճիւղագրութիւնը լինում է պաշտ, երբ երկու իրար

հետ ազգակցական կապ չունեցող ընտանիքների որդին ու աղջիկը կամենում են ամուսնական կապով միանալ. և կրկնակի, երբ երեք ընտանիք են նոյն կապերով կապուած իրար հետ: Բերենք օրինակներ. —

եղբայրներ	այր և եղբայր
№ 5. 1, Միւսա—2, Յովսէփ 3, Կարապետ—4, Շուշանիկ	
ա ու ե լ է	

№ 6. 2, Միւսա—Յովսէփ	4, Կարապետ—3, Շուշանի
1, Մխիթար	
ա ու ե լ է	

Առաջին դէպքում կազմուած է չորս աստիճանի խնամութիւն, երկրորդ դէպքում հինգ աստիճանի:

եղբայրներ	եղբայր և այր.
№ 7. 2, Միւսա—3, Յովսէփ 4, Կարապետ—3, Շուշանիկ	
1	ա ու ե լ է
1, Գեորգ	6, Անուշ.
կամենում է առնել.	

եղբայրներ	
№ 8. 1, Գասպար—2, Մեխակ 3, Ասղիկ—4, Արեւիկ	
	5, Սարգիսիկ 6, Մարիամիկ
ա ու ե լ է	
կամենում է առնել.	






ուչ գործակարների հրամանով, այլ կոնսիստորեաների և Սինոդի թույլատուութեամբ: Մենք կոմպետենցեայի (իրաւասութեան) մասին այստեղ խօսելու կարիք չունինք, այդ խնդիրը չէ որ գբաղեցնում է մեզ, այլ այն, թէ առհասարակ որպիսի ճիւղագրութեան պսակներ թույլատրելի են և որպիսիք անթույլատրելի: Մեր բերած օրինակները վերաբերում էին կրկնակի խնամութեան այդ տեսակի թույլատրելի ճիւղագրութեամբ պսակների վերջին սահմանին: Ինչ կասկած, որ հինգերորդ և աւելի աստիճանների պսակներն անխափան կատարում են, ու նոյն իսկ քահանայից յայտարարութեանց մէջ, որով խնդրում են պսակի թույլատուութիւն, չեն գրում, ու կարիք էլ չկայ գրելու, եթէ միայն պսակող քահանան չի տարակուսում թույլատրելի լինելու մասին:

Կրկնակի խնամութեան ճիւղագրութեան հետեւեալ օրիւրակները այդ տեսակի խնամութեան երրորդ աստիճանին են վերաբերում.

№ 19 օրինակի մէջ Գասպարն իր քոյր Անուշին ուզում է տալ իր քենեկալին, որի կինը՝ Աշխէնը վաղճանած է: № 20-ի մէջ Գասպարը իր կին Մարիամի վախճանելուց յետոյ ուզում է առնել իր աներորդու քենի Շուշանին: № 21-ի մէջ Գասպարը իր եղբայր Մարգարին ուզում է առնել իր աներորդի Սարգսի (վախճանած) կնոջը: Այս և սոցանման բոլոր դէպքերն էլ կրկնակի խնամութեան երրորդ աստիճանը լինելով՝ անթույլատրելի են, չամենայն դէպս Սինոդի, բայց մանաւանդ Հայոց Հայ-

րապետի վճռահատութեանը պիտի դիմել, որի իրաւասութեանն են վերաբերում այդ խնդիրները: Ահա և օրինակները. —



Բերենք կրկնակի խնամութեան ճիւղագրութեան թույլատրելի օրինակներ. —

<p>№ 22. 1, Մարգիս 2, Աշխեն (վախճ.) 3, Շուշան 4, Քասպար 5, Անուշ անայեր</p>	<p>եղբայր եւ քոյր եղբայր եւ քոյր</p>	<p>եղբայր եւ քոյր եղբայր եւ քոյր</p>	<p>եղբայր եւ քոյր եղբայրներ</p>
<p>ա ն ե լ է</p>	<p>ա ն ե լ է</p>	<p>ա ն ե լ է</p>	<p>ա ն ե լ է</p>
<p>կամենում է աննել</p>	<p>կամենում է աննել</p>	<p>կամենում է աննել</p>	<p>կամենում է աննել</p>
<p>6, Մոֆա.</p>	<p>6, Աննա</p>	<p>6, Մինա.</p>	<p>6, Մինա.</p>

№ 22 օրինակի մէջ Քասպարն իր բրոջ աղջիկն է տալիս իր այրի քենեկային: № 23-ի մէջ Քասպարը (այրի) առնում է իր աներորդու քենու աղջկան: № 24-ի մէջ Քասպարն իր եղբոր սրդուն առնում է իր վախճանած աներ սրդու կնոջը: Երեք

դէպքն էլ կրկնակի խնամութեան չորրորդ աստիճանի ճիւղագրութիւններ են և թույլատրելի:

Աւելորդ եմ համարում ոչ միայն օրինակներ բերել այդպիսի խնամութեան աւելի շատ—հինգերորդ և վեցերորդ աստիճանների ճիւղագրութիւններ, այլ և մանրամասն բացատրութիւններ անել, որ այդպիսի աստիճանների խնամութեան պսակները թույլատրելի է. դա նարդ է ու հասկանալի, որովհետեւ, եթէ չորրորդ աստիճանը թույլատրելի է, ուրեմն հետեւեալ աւելի շատ աստիճանների մասին արգելքներ չեն կարող լինել:

Արեւնակցութեան և կնքահայրութեան աստիճանները որոշելիս, ինչպէս տեսանք, ղեկավարում ենք մի սկզբունքով — սրբան ծնունդ կայ առաջ բերած ճիւղագրութեան մէջ, այնքան էլ աստիճան հաս ու չհասի, մինչդեռ խնամութեան ճիւղագրութիւնների աստիճանները հաշուելիս տարբեր սկզբունքի ենք հետևում: Արեւնակցական ճիւղագրութեան մէջ № 4 օրինակի առթիւ արդէն ասել ենք, որ մի զոյգ ամուսիններ հաշուում են մի աստիճան — մի պարտ: Խնամութեան պարզ ճիւղագրութեան (օրինակներ 5—15) միայն մի զոյգ ամուսնացածներ կան, ուստի և, եթէ մեզ աւել են խնամութեան անորոշ աստիճանի ճիւղագրութիւն, հաշուելու համար թէ հաս է, թէ չհաս, մենք նախ պիտի հաշուենք թէ քանի ծնունդ կայ (օր. № 8—10). և որովհետեւ խնամութեան պարզ ճիւղագրութեան մէջ միայն մի զոյգ ամուսնացածներ կան, ուստի և մէկի միացած

լինելով գառնուժ է հինգ, ասել է մեզ տւած ճիւղազբուժիւնը հինգերորդ աստիճանի խնամութիւն է: Այդ հիման վրա էլ, եթէ խնամութեան պարզ ճիւղազբուժեան մէջ ծնունդները հինգ են, ասել է չորրորդ աստիճանն է, եթէ եօթն է, ասել է վեցերորդ աստիճանը: Պարզ ասած խնամութեան աստիճանները որոշելիս պիտի հաշուենք նախ ծնունդները, ստացած թւից մէկը դուրս գալով, ինչ որ մնաց ասել է այդ խնամութիւնն այդքան աստիճանի է:

Խնամութեան բարդ ճիւղազբուժիւնների մէջ, ինչպէս առաջ բերածս օրինակները ցոյց են տալիս, երկու զուգ ամուսնութիւն կայ, ուստի և հետեւելով նախընթաց որոշումներին, եթէ մեզ տւած է խնամութեան բարդ ճիւղազբուժիւն նախ պիտի հաշուենք, թէ քանի՞ ծնունդ կայ ստացած թւից պիտի հանենք երկու — որովհետեւ ծնունդներից երկուսը կապւած են արդէն ամուսնութեամբ — որքան մնաց, այնքան էլ աստիճան կլինի: Օրինակ № 18-րդ ճիւղազբուժեան մէջ ծնունդ կայ, նրանցից երկու զուգը — Սարգիսն ու Աշխէն, և Շուշանն ու Գասպարը միացած են ամուսնութեամբ, ուստի և կազմում են մի մի աստիճան: Մնացածներից Մանուկն ու Անուշը, որ ուզում են իրար առնել, երկու ծնունդ են, ուրեմն երկու աստիճան. այդ երկու աստիճանի վրա աւելացնելով երկու զուգ ամուսնութիւնից առաջ եկած երկու աստիճանը՝ կստանանք չորս աստիճան: Ծնունդը վեց էր, ստացանք չորս աստիճան:

որ առաջ եկաւ երկու զուգ ամուսնացածներին երկու պորտ, կամ երկու աստիճան հաշուելուց: Աստեղից ուրեմն ընդհանուր կանոն. — կրկնակի խնամութեան հաս ու չհասի աստիճանները որոշելիս, նախ պիտի հաշուել, թէ քանի՞ ծնունդ կայ և ապա ստացած թւից հանել արդէն ամուսնացած զուգերի թիւը, ինչ որ մնաց, այնքան էլ աստիճան է տւած կրկնակի խնամութեան ճիւղազբուժիւնը:

4. *Մորդուլթիւն*. — Մի քանի խօսք էլ խորգութեան մասին: Խորգ են կոչուում այն ծնունդները, երբ նոքա միւսնայն հօրից կամ միւսնայն մօրից չեն այլ տարբեր: Կան նա և որ խորգ են և հօրից և մօրից, դոքա այսպէս ասած հետ բերովի, այսինքն այլի մօր հետ եկած աղջկերքն ու տղայքն են, որոնք իրենց խորգ հօր առաջին կնոջից եղած տղաների համար կլինին իսպառ խորգ:

Մովսեսական օրէքով խորգ եղբայրներն ու քույրերը առհասարակ չէին կարող ամուսնանալ. ինչպէս և որդին չէր կարող առնել իր խորգ մօրը. խորգ հայրը խորգ աղջկան, նրա դստերը փեսան զոնքանչին և ուլն:

Հոռոմէական օրէնքով խորգ մայրը չէր կարող առնել խորգ աղջկայ ամուսնուն և խորգ հայրը՝ խորգ որդու կնոջը:

Գերմանական ներկայ գործադրող օրէնքով խորգ եղբայրներն ու քույրերը չեն կարող ամուսնանալ իրար հետ. ինչպէս և խորգ հայրը խորգ

աղջկայ, խորդ մայրը խորդ որդու, փեսան զոն-  
քանջի հետ և կեսրարը հարսի հետ:

Թէ յունա-բուզանդական և թէ այժմ Ռուս,  
եկեղեցիների կանոնով թոյլատրելի են կրկնակի  
խնամիութեան երրորդ աստիճանների պատկները,  
որի մէջ մտնում է նա և խորգութիւն:

Հայոց եկեղեցին, նամանաւանդ առաջներում,  
խիստ էր վերաբերում խորգութեան խնդիրին՝  
նրան համարեա թէ հաւասար գնելով արենակ-  
ցութիւնը: Ինչպէս բոլոր եկեղեցիները, այնպէս  
էլ Հայ եկեղեցին ընդունում է Հին-Ուխտի առա-  
ջարկած խորգութիւնների չհասութիւնը:

Կանխատրեաների և Սինոգի վերջին տարի-  
ների գործողութիւնները ցոյց են աւելիս, որ Հայ  
եկեղեցու վարչութիւնը հնարաւոր է համարում  
արենակցական ճիւղագրութեան մէջ վեցերորդ աս-  
տիճանի պտակը թոյլ տալ, եթէ պտակողների մէջ  
խորգութիւն կայ հօր կողմից կամ մօր կողմից:  
Այսպէս.—

№ 25. Ալմաստ                      Յակովբ                      Շուշանի (վախճանեալ)

ա    ե    լ    է                      ա    ե    լ    է    ր

- |           |              |
|-----------|--------------|
| 3, Գրիգոր | 4, Յովհաննէս |
| 1         | 1            |
| 2) Մանուկ | 5, Արշակ     |
| 1         | 1            |
| 1, Անս    | 6, Մարիամ.   |

կամեցում է առնել

Նայնը կարող է և մօր կողմից խորդ լինել: Սովոր-  
ութիւն է գառած հօր կողմից խորդ լինելուն

առելի նշանակութիւն տալ, և եթէ մէկը հօր  
կողմից է խորդ, դա խիստ թուլացնում է արե-  
նակցական կապերը: Եւ իրօք, տարբեր մայրերից  
ծնածները լինելով մի հօր գաւակներ, կրում են  
նոյն անունը, ու ժառանգում հաւասարապէս հօր  
կայքն ու ստացւածքը, մինչդեռ խորդ հայրերի  
ժառանգները, թէև ծնում են մի հօրից, սակայն  
կրում են ամենն իր հօր անունը և դասակարգւին  
կոչումը ու ժառանգում իրենց հայրերին, չունե-  
նալով խորդ հօր ստացւածքի վրայ և ոչ մի իրա-  
ւունք: Այսպէս ուրեմն, կեանքն ինքը ցոյց է տա-  
լիս այդ տարբերութիւնը և տօն տալիս դէպի  
խորդ որդիների տարբեր վերաբերմունքին: Անշահ  
չէ այստեղ չիշելը, որ հօրից խորդ եղբայրներն  
ու քոյրերը հաւասար կերպով ժառանգ են իրենց  
մօր անձնական կարողութեանը:

Սովորայթի օրէնքով մեր մեջ հօրից և մօրից  
խորդ որդիքը իրար չեն առնում.—


№ 26. Աննա, կին 2, Մարգարի, Մերուհի, կին Վարդանի  
(վախն.)                      1 առել է                      1(վախն.)

1, Արսաւես                      3, Աշխէն  
չի կարող առնել.


Այս օրինակը ցոյց է տալիս, որ Մարգարն իր  
առաջին կնոջից ունի մի որդի Արտաշէս անունով:  
Կրկին Աննայի մահից յետոյ առնում է այլի Սըր-  
բուհուն, որ իր նախկին ամուսին Վարդանից ունի  
մի դուստր՝ Աշխէն անունով: Այս դէպքում, երբ  
Մարգարն առել է Սըրբուհուն, նա իր որդի Սը-

տաշէսի համար խորդ մայր է, իսկ Աշխէնը խորդ մօր աղջիկ, որ խնամեական երրորդ աստիճանն է: Աշխէնին չի կարող առնել նաև Մարգարի եղբայրը, որի համար նա կլինէր խնամութեան երրորդ աստիճանը: Այգպիսի մի պսակի համար Ամենայն Հայոց Հայրապետի լուծմանը (գիսպեհնացիային) պէտք էր գիծել, որ 'ի դէպ է ասել դժուար ձեռք բերելի է:



Հաս կարող է լինել այգպիսի խնամեական խորդութեան հետևեալ ճիւղագրութիւնը.



Սա հինգերորդ աստիճանի այգպիսի խնամեական խորդութեան ճիւղագրութիւն է, ուր խորդ հայրն ու մայրը, առանց անունները տալու, իբր մի զոյգ ամուսիններ, մի աստիճան եմ հաշուել:




Մինասի և Աշխէնի ամուսնութիւնը կլինի չորրորդ աստիճանի խորդութիւն խնամեական ճիւղագրութեամբ պսակ, որ թոյլատրելի է: Բերենք այլ օրինակներ:



№ 29 օրինակը խորդութեան երրորդ աստիճանի ճիւղագրութիւն է. Աստղիկն Արտաշէսի խորդ մօրաքույրն է, չհաս է, որովհետև երկու քույր չեն կարող հայր ու որդի առնել: № 30-նը կրկնակի խնամութեան չորրորդ աստիճանն է, Շուշանին կարող է առնել Արտաշէսը, Շուշանի մօրաքրոջ խորդ որդին: Շուշանին կարող է առնել և Արտաշէսի հօրեղբօր, Մարգարի եղբօր որդին, որի համար այդ ճիւղագրութիւնը կլինի պարզ խնամեական հինգերորդ աստիճանի չհասութիւն, մինչդեռ Մարիամի եղբօր համար Շուշանը չհաս է, որովհետև Շուշանն իր եղբօր — Մարգարի քենու աղջիկն է, ուրեմն չորրորդ աստիճանի պարզ Խրնամութիւն:

Բերենք այդ տեսակի խորդութեան մի հետաքրքրական օրինակ. —



Այս օրինակի մէջ Մարիամն (1 ծնունդ) առել է Արտաշէսին (2 ծնունդ), որ Աշոտի (3 ծնունդ) առաջի կին Աննայից է (4 ծնունդ). նրա եղբայր Գրիգորը (5 ծնունդ) կամենում է առնել Աշխէնին (6 ծնունդ) որ խորդ կեսուր Սօնայի (7 ծնունդ) առաջին ամուսնուց է եղել:

Որոշելու համար, թէ այս զէպքում քանի աստիճանի խնամութեան ճիւղազրուծիւն է, պէտք է առհասարակ խնամութեան ճիւղազրուծեան աստիճանները հաշուելու կանոնը մտներս բերենք, ուր իւրաքանչիւր մի գոյգ ամուսնութիւն մի աստիճան էինք հաշուում: Այդ հիման վրայ № 31-ը ունի եօթը ծնունդ, որոնց մէջ երեք գոյգ ամուսնութիւն, որը դուրս գալով ստացած ծնունդների թւից, կտեսնենք, որ Աշխէնի և Գրիգորի մէջ չորրորդ աստիճանի խորդութիւն և կրկնակի խնամութեան չհասութիւն կայ, որ թույլատրելի է անպայման: Այդ նոյն հիման վրայ Մարիամի (1 աստ.) եղբայր Գրիգորը (2 աստ.) կարող է առնել իր քրոջ խորդ կեսուր Սրբուհու (3 աստ.) քրոջ Ալմաստին (4 աստ.): Բերենք ճիւղազրուծեան օրինակը՝ աւելի պարզ, տեսանելի անելու համար:

1, Արտաշէս (որդի Մարգ. առ. կնոջից.) <u>առել է</u>	2, Մարգար (այրի) <u>կամենում է առնել</u>
3, Մարիամ (այրի) <u>կամենում է առնել</u>	
4, Սրբուհու (այրի) <u>կամենում է առնել</u>	
5, Ալմաստ (այրի) <u>կամենում է առնել</u>	
6, Մարգար (այրի) <u>կամենում է առնել</u>	

որ կրկնակի խնամութեան խորդութեամբ հան-

դերձ չորրորդ աստիճանի ճիւղազրուծիւն է և թույլատրելի անպայման:

Բերենք խորդութեան մի օրինակ:

1, Աշխէն (խորդ դուստր) <u>առել է</u>	2, Սրբուհու (այրի) <u>կամենում է առնել</u>
3, Ալմաստ (այրի) <u>կամենում է առնել</u>	
4, Սրբուհու (վախն.) <u>առել է</u>	
5, Գրիգոր (այրի) <u>առել է</u>	
6, Ալմաստ (վախն.) <u>կամենում է առնել</u>	

№ 33 զէպքում այրի Գրիգորն իր կին Աշխէնի մահից լետոյ կամենում է առնել իր խորդ զոնքանչի քրոջը, որ կրկնակի խնամութեան երրորդ աստիճանն է:

№ 34-ի մէջ Գրիգորը իր կին Ալմաստի մահից լետոյ կամենում է առնել իր հարազատ քենի Սրբուհու խորդ դուստր Աշխէնին, որ դարձեալ խնամութեան խորդութեամբ հանդերձ երրորդ աստիճանի չհասութեան ճիւղազրուծիւն է:

1, Ալմաստ (այրի) <u>կամենում է առնել</u>	2, Սրբուհու (այրի) <u>կամենում է առնել</u>
3, Ալմաստ (այրի) <u>կամենում է առնել</u>	
4, Սրբուհու (այրի) <u>կամենում է առնել</u>	
5, Գրիգոր (այրի) <u>կամենում է առնել</u>	

1, Աշխէն (խորդ դուստր) 4, Սրբուհու

ճօրից եւ մօրից խորդ փոյրեր.

№ 36, 2, Արբուսի 3, Ալմաստ (վախս.) 3, Գրիգոր  
ա ո ե լ ե ր

1, Աւխնի (խորդ դուստր 4, Արբուսի)  
կամենում է առնել.

ճօրից մօրից խորդ փոյրեր

№ 37. Պօղոս 2, Աղաւ 3, Շուշան 4, Մարգարիտ  
ա ո ե լ ե

կամենում է առնել

№ 35. օրինակի մէջ Մինասն առել է Սլրբուհու խորդ աղջկան՝ Աշխէնին, իսկ նրա հայր Գրիգորը կամենում է առնել իր որդու խորդ գոնքանջի քրոջը կամ իր հարսի խորդ մօրաքրոջը, որ խորդութեամբ հանդերձ չորրորդ աստիճանի ճուղագրութիւն է:

№ 36-ի մէջ Գրիգորն առել էր Ալմաստին, որի վախճանելուց յետոյ կամենում է առնել իր իսպառ խորդ քենի Սրբուհու խորդ աղջկան՝ Աշխէնին, որ կրկնակի խորդութեամբ երրորդ աստիճանի խնամիութիւն է:

№ 37-ի մէջ երկու հօրից եւ մօրից խորդ քոյրեր կամենում են առնել երկու հարազատ եղբայրների:

Բաւական հաշուելով առաջ բերած օրինակները, դրանով վերջաւորում եմ այս բաժինն ու անցնում հետեւեալ մասերին: Այստեղ միայն կասեմ, որ պարզ խնամիութեան չորրորդ աստիճանի,

կրկնակի խնամիութեան երրորդ աստիճանի, խնամութեան եւ կրկնակի խորդութեան եւ առհասարակ կրկնակի խնամութեան եւ խորդութեամբ երրորդ աստիճանների եւ արեւակցական վեցերորդ եւ խորդութեան արեւակցական հինգերորդ եւ վեցերորդ աստիճանների պատկենրի թույլտուութեան խնդիրներն Ամենայն Հայոց Հայրապետի լուծման են ենթակալ ու նրան պիտի դիմել: Իսկ մնացեալ չհաստիական բոլոր խնդիրները լուծում են կոնսիստորիաներն ու Էջմիածնի Սինօզն՝ եթէ անդական իշխանութիւնները տարակուսում են թույլ տալ որ եւ է չհաստիական պսակ:

Այս էլ աւելնորդ չեմ համարում ասել, որ առաջ բերած օրինակների մեծագոյն մասը ոչ թէ նրա համար են, որ հրահանգեմ թէ ինչ աստիճանն է թույլատրելի եւ ինչը, ոչ. այլ գլխաւորապէս նրա համար, որ ցոյց տամ, թէ ինչպիսի բարդութիւններով ճիւղագրութիւններ կարող են պատահել եւ թէ ինչպէս պիտի կազմել որ եւ է չհաստիական ճիւղագրութիւն ու ինչպէս հաշուել աստիճանի որ եւ է չհաստիական ճիւղագրութեան աստիճանները:

Հինգերորդ գլխի նկարագրութիւնը ցոյց տւեց, թէ պատկուողների առաջ երբեմն ինչպիսի դժուարութիւններ կարող են հանել՝ հաս ու չհասի մասին սահմանուած եկեղեցական կանոնները, որոնց համեմատութեամբ, միւս արգելքները շատ պարզ եւ հասարակ են:



### ԱՄՈՒՍՆԱԼՈՒԹՅՈՒՆ

II

Ամուսնալուծութիւնն եկեղեցական պատկեր  
ամենաճանր և հրատապ խնդիրներից մէկն է որ  
լուզում է ամբողջ հասարակութիւնների կարծի-  
քներ, սկսած թատերական բեմից մինչի հասարակ  
խրճիթը, և ազգտաի խուղից մինչի արքայական  
պալատները: Նա դարերի ընթացքում գրանցել  
է լաւագոյն օրէնագէտների և պետական օրէնագիր  
մարմինների. սակայն այդ խնդրի վերջնական բա-  
ւարարութիւն բաժանել ցանկացող ամուսնացած  
զույգերի համար դեռ չկայ, այնպիսի մի բաւարար-  
ութիւն, որ իզէալական լինի, հաւասար լինի  
երկուսի համար: Բայց անցնենք ամուսնական իրա-  
ւունքի եկեղեցու մէջ ունեցած պատմութեանը  
ամուսնութեան լուծելի լինելու և չլինելու վե-  
րաբերմամբ:

Քրիստոնէական եկեղեցին մի պատճառ էր  
ճանաչում լուծելու ամուսնութիւնը. դա պատմի-  
կութիւնն է— ամուսնական անհաւատարմութիւնը:  
Եկեղեցու հիմնադիրը իսկապէս ամուսնալուծու-

թեան և ոչ մի օրէնք, սահմանադրութիւն չէ արել, այլ ասել է, «Ով կնոջը կարձակէ ոչ նրա անհաւատարմութեան համար, նա նրա անառականարուն պատճառ կտայ, և ով արձակածը կաննի, նա էլ պոռնիկութիւն արած կլինի»: Մատթէոսի Աւետարանի (գլ. 5-րդ, հ. 32) այդ խօսքերն ապագայ մեկնիչներին համար հիմք է ծառայել հետեւեցնելու, որ Յիսուս սահմանադրել է ամուսնալուծութիւն ամուսնական անհաւատարմութեան համար: Այստեղ հարկաւոր է ասել, որ նա, ով ասել է ամուսնական կապի համար «Որ Աստուած է զուգել, մարդ չհամարձակի քանգել», սրով ամուսնութիւնը մի Աստուածազիր սրբութիւն, անքակտելի զուգաւորութիւն է հռչակում, նա չէր կարող և չէր սահմանի այդ Աստուծոյ սահմանած կապի լուծումը մարդկանց ձեռքով: Սակայն իրողութիւնն այն է, որ եկեղեցին ընդունել է և ընդունում է ամուսնալուծութիւն: Եկեղեցու բռնած գիրքն ամուսնալուծական խնդրում, մի արձագանք էր կեանքի այն պահանջների, որ թելադրում էր արձակել, հեռացնել իրանից այն կնոջը, որ ամուսնական անկողնին հաւատարիմ չէր մնում, որ պղծում էր ամուսնական կապի սրբութիւնը: Եկեղեցին չէր էլ կարող այլ կերպ վարել բոլոր այն գէպքերում, երբ անհրաժեշտ հարկի մէջ էր գրանուում կեանքի այս և այն առաջ բերած խնդիրների և պահանջների առաջ: Եթէ եկեղեցին, իբր մի պահպանողական հիմնարկութիւն, միշտ չէ էլ ընդառաջ գնացել իր իրաւասութեան շրջ-

ջանում գտնւած խնդիրների նկատմամբ կեանքի, իրականութեան դրած կարիքներին, պահանջներին, սակայն բոլորովին էլ խուլ չէ գտնւել: Ահա ամուսնալուծութիւնն էլ իրականութեան այդպիսի մի պահանջ էր, ու անտաճգելի, անհրաժեշտ պահանջ, որին քրիստոնեայ եկեղեցին ընդառաջ է զնացել և աշխատել բաւարարութիւն տալ նրան: Այլ խնդիր է, թէ արգեօք եկեղեցին իր կանոնական սահմանադրութեամբ կարողացել է լուծել այդ խնդիրն իր բազմատեսակ ուսումներով, թէ նրա գործունէութիւնը սահմանափակել է նեղ շրջանակում, ու նրա ձեռք առած միջոցները, կանոնական կարգերը կիսամիջոցներ են եղել: Մենք լատկապէս այդպիսի գնահատութիւնը թողնում ենք, մեր ասելիքը կայանում է նրանում, թէ եկեղեցին ընդունել է ամուսնալուծութիւնը, թէ ոչ: Մրան կպատասխանենք, այո, քրիստոնեայ եկեղեցին, ի բաց առեալ կաթողիկոսութիւնը, բաձարձակապէս ընդունել է ամուսնիների պակի լուծումը: Կաթողիկոսութեան մասին էլ, իր տեղում կրտեսնենք, որ պապի իրաւունքների մէջ մտնում է նաև պակը լուծելու ծայրագոյն իշխանութիւնը:

Այժմ համառօտակի անցնենք ամուսնալուծական խնդրի նկատմամբ զանազան ազգութիւնների և եկեղեցիների սահմանած կանոններին, ու նրա լուծելու զանազան պատճառներին:

ա. Հայ եկեղեցի. — Թէ հին Հայոց մէջ, նախ քան քրիստոնէութիւնն ինչ վիճակի մէջ էր ամուսնալուծութեան խնդիրը, դրա մասին պատմա-

կան փաստեր պատկասուած են մեզ, ռւստի և ան-  
շահ եզրակացութիւններէից և ենթադրութիւննե-  
րէից մենք խուսափուած ենք: Մենք այստեղ կզբաղ-  
ւենք այդ խնդրի ընթացքով, Հայ եկեղեցու սահ-  
մանուած, և օտար եկեղեցիներէից ընդունած կանոն-  
ների համաձայն: Արդ, սկսենք այդ կանոններէից:

Հայ եկեղեցու կանոնների մէջ ժամանակա-  
գրական կարգով առաջին տեղը բռնուած են Գրիգոր  
Լուսաւորչին ընծայուած կանոններն այդ խնդրի  
նկատմամբ:

Հայոց եկեղեցու Լուսաւորչի 6-րդ կանոնով  
եթէ մէկն երկրորդ կինը թողնի և գնայ առաջին  
արձակած կնոջն առնի նորից, թողաւորելի է, սա-  
կայն եօթը տարի եկեղեցու դրսում և մի տարի  
էլ ներսում պիտի ապաշխարի: 9-րդ կանոնով,  
եթէ մէկն աղջիկ փոխցնէ ու պսակի, պսակը  
լուծելի, ու պսակածը ում որ կամենայ, նրան գնայ:  
23-րդ կանոնով թող է տալիս արձակել կնոջը  
պոռնկութեան համար, միայն մի տարի ապաշխար-  
ութիւն է որոշուած արձակողին:

Բարսեղ մեծի 9-րդ կանոնով կնոջը թող է  
տրւում արձակել անհաւատարմութեան համար,  
միայն վերջն աւելացնում է, սովորութիւնը  
տրամագրում է որ, մարդու անհաւատարմութեան  
դէպքում, կինը պարտաւոր է մնալ ամուսնու մօտ:  
Նոյնը կրկնում է և 21-րդ կանոնում: 23-րդ կա-  
նոնով ամուսնալուծութիւն է տրամագրում այն  
դէպքի համար, եթէ մէկն առնում է իր քենուն  
կամ երբ հարսն ամուսնանում է տագեր հետ:

35-րդ կանոնով թող է տալիս կրոջը թողնել  
իր ամուսնուն եթէ պատճառ կայ, իր խօսքերով  
ասած «եթէ կինը թողել է մարդուն, պէտք է  
ուշադրութեան առնել պատճառները, և եթէ կե-  
րևայ, որ նա թողել է առանց պատճառի, այն  
ժամանակ նա (մարդը) արժան է ներողամտու-  
թեան, իսկ կինն ապաշխարանքի: Իէպի նա նե-  
րողամտութիւնը նրանում է, որ նրան թող է  
տրւում հաղորդակցութիւն եկեղեցու հետ»: Ինչ-  
պէս պարզ երևում է, այս կանոնը հակասում է  
9-րդ և 21-րդ կանոններին, որոնցով կինը չի կա-  
րող թողնել ամուսնուն:

Նոր Կեսարիայի ժողովի 11-րդ կանոնն ա-  
մուսնական անհաւատարմութեան համար թող է  
տալիս արձակել կնոջը, վերջինս զրկելով ամուս-  
նանալ քանի ամուսինը կենդանի է: Մինչ-դեռ  
մարդու նկատկամբ խիստ զիջողաբար է վարվում,  
թող տալով նրան ամուսնանալ մի տարի ապաշ-  
խարելուց յետոյ:

Գանարի ժողովի 10-րդ կանոնն ամուսնուց  
բաժանուած կնոջը պատժի և նզովքի է ենթարկում:

Յատկապէս Հայ եկեղեցու կանոնական սահ-  
մանադրութեանց մէջ առաջին անգամ այդ խընդ-  
րով զբաղվել է Շահապիվանի եկեղեցական ժողովը,  
որ ամուսնալուծութեան համար մի քանի որոշում-  
ներ է թողել: Մի առանձին տեղի թողնելով Հայ  
եկեղեցու սահմանած, ամուսնալուծութեան խընդ-  
րին վերաբերեալ կանոնների գնահատութիւնը,  
անցնենք այդ կանոններին:

Շահապիվանի ժողով. — Այդ ժողովի 4-րդ կանոնն ասում է, որ ով կնոջը թողնի առանց անհաւատարմութեան պատճառի կամ մարմնական արատի համար, նա պէտք է իր ստացւածքը և որդիքը հաւասար կերպով բաժանէ իւր և կնոջ մէջ: Բացի դրանից մարդն ենթարկուած է նա և տուգանքի:

5-րդ կանոնով ամուսնութիւնը կարող է բաժանել նաև ամուլութեան, կնոջ չբեր լինելու պատճառով, որ դէպքում կինն իր հետ վերցնում է այն բոլորն, ինչ իրեն է պատկանում: Կանոնի շարունակութիւնն ասում է «Եթէ բացի ամուլութիւնից այլ արատ չկայ, կնոջը տուգանք ևս վրձարէ թող, նրան հասցրած անարգանքի փոխարէն...»

6-րդ կանոնի մէջ պտակի լուծման մասին չի խօսուած, այլ այն դէպքի մասին, թէ կինն անզգամ է և հեռացել է մարդուց: Այդ դէպքի համար ասում է կանոնը, որ բռնեն և տանեն մարդուն: 7-րդ կանոնով առևանկութեան ժամանակ կատարած պտակը լուծուած է, եթէ ծնողների համաձայնութեամբ չէ եղել:

Գուհի 648 թ. ժողովի 7-րդ կանոնով նրանք որոնք 5—7 տարի չեն համբերել ամուսինների վերադարձին ու պտակել են, այդ ժամանակը չլրացած եթէ ամուսինները գանձ պատելու են է երկրորդների թողնեն և վերադարձածներին գնան, հակառակ դէպքում նրանց ամուսնութիւնը պղծելու կը հաշուելի. իսկ որոշուած ժամանակից յետոյ թող է տալիս լուծել և նորից պտակել:

Պարտաւի ժողովի 13-րդ կանոնով երրորդ ամուսնութիւնը պիղծ բան է հաշուում և ասում է պիտի բաժանել:

Առաջ բերածս կանոններից Լուսաւորչի 9-րդ, Շահապիվանի 7-րդ, Գուհի 7-րդ և Պարտաւի 13-րդ կանոններն իսկապէս վերաբերում են ոչ ամուսնալուծութեանը, այլ կատարուած պտակի անվաւեր լինելուն, որ տարբեր նշանակութիւն ունի քան ամուսնալուծութիւնը: Իսկ մնացած բոլոր կանոնները վերաբերում են ամուսնալուծութեանը:

Ահա այն բոլորն, ինչ որ Հայ եկեղեցին սահմանել է ամուսնալուծութեան և պտակի անվաւեր լինելու համար՝ իր այդ խնդրում օրէնսդրական դործունէութեան պատմական կեանքի ամբողջ ընթացքում: Ըստ այդ— առաջ բերած կանոնների, պտակն անվաւեր է հաշուում. 1) եթէ նա չէ եղել ծնողների համաձայնութեամբ. 2) անվաւեր և անկանոն է, եթէ երրորդ պտակն է, 3) եթէ ամուսիններից մէկը չսպասելով իր անյայտ բացակայող ամուսնու վերադարձին՝ նախքան օրէնքով սահմանուած ժամանակի լրանալն՝ ամուսնանում է ուրիշի հետ: 4) եթէ պտակը կատարել է առևանկութեան ժամանակ:

Յատկապէս ամուսնալուծութեան են վերաբերում հետևեալ պատճառները. — 1) ամուսնական անհաւատարմութիւնը. 2) Ամուլութիւնը. 3) Եթէ ամուսիններից մէկն անյայտ բացակայութեան մէջ է գտնուում այլ և այլ պատճառներով 5—7 տարուայ ընթացքում 4) մարմնական արատ:

Հայոց եկեղեցու ամուսնական իրաւունքի համար ամուսնալուծութեան այլ հիմքեր անձանօթ են, ինչպէս օրինակ ամուսնական կենսակցութեան անընդունակութեան (առնական անկարողութեան), եթէ մարմնական արատը չհաշուենք, որ դրան էլ է վերաբերում: Իսկապէս հարկ էլ չկար, որ բոլոր պատճառերի մասին յիշատակութիւն լինէր, երբ նրա կանոնները (Շահապիվանի ժողովի 4, 5 կանոններ) արամայրում են արձակել կնոջը նոյն իսկ առանց որ և է պատճառի:

Ոչ մի եկեղեցու կանոնների մէջ չենք տեսնի ամուսնալուծութեան վերաբերեալ այնպիսի կանոններ, որ Հայ եկեղեցին է սահմանել: Ոչ մի եկեղեցու կանոնական սահմանադրութիւն նոյն իսկ չէ ձգտումներ ցոյց տւել պաշտպանել կրնն արձակող մարդու բռնութեան դէմ նրա թույլ կողակցին, ինչպէս Հայ եկեղեցին: Բոլոր եկեղեցիների կանոնների ամբողջ խտութիւնը կնոջ նկատմամբ է եղել. կինը մեղաւոր թէ անմեղ՝ միշտ զրկւած կողմն է եղել: Մի խօսքով չեմ ասում մարդասիրութիւնը, այլ Հայ եկեղեցու ցոյց տւած արդարադատութիւնը դէպի կնոջ իրաւունքների պաշտպանութիւնն՝ անձանօթ են եղել քրիստոնէեալ բոլոր եկեղեցիներին: Այդ կանոններից մէկն ասում է, եթէ դու կնոջդ կարձակես առանց պատճառի կամ մարմնական արատի համար, դու պարտաւոր ես բաժանել քո կողակցի հետ, որովհետեւ նա քո հաւասարն է, ոչ միայն օրգիքդ, որ հաւասարապէս պատկանում է երկուսիդ էլ, այլ նա

և քո կայքը, հողը, ջուրը: վերջապէս ինչ որ դու ունիս:

Մի այլ կանոնով մարդուն թոյլ տալով, որ ամուլ կնոջն արձակէ, պատւիրում է, եթէ նա բացի ամուլութիւնից ուրիշ արատի տէր չէ, այն ժամանակ, այն, ինչ որ պատկուելիս նա իր հետ բերել է քո տունը, և այն, ինչ որ նրան է պատկանում, նա պիտի տանի անարգել, բացի դրանից, նաև պարտաւոր ես, նրան հասցրած այդ անարգանքի համար, տուգանք վճարել. եթէ ազնական ես 1200 դրամ, իսկ եթէ զիւղական՝ 1000 դրամ:

Այսպիսի արդարադատութիւնը Հայոց եկեղեցու իրաւունքի ամենափայլուն կողմերից մէկն է: Նա ընդունելով որ, մարդը կարող է դժգոհ լինել կնոջից ու ցանկանալ բաժանւել նրանից, թէկուզ և ոչ շատ յարգի պատճառներից զրգւած, դրանով կնոջը ձգում էր անարգանքի մէջ: Բաժանւելով նրանից այդպիսի հանգամանքներում նա ստեղծում էր կնոջ համար տնտեսական այնպիսի դրութիւն, նիւթական այնպիսի վիճակ, որին արժանի չէր նա իր անմեղութեամբ:

Այդ պայմանն ինքը եկեղեցին չէր ստեղծել, չէր էլ կարող ստեղծել: Ամուսնական կապի այդպիսի հեշտութեամբ քանդելը դէմ էր եկեղեցու հիմնադրի քարոզած սկզբունքներին: Դա հայկական կեանքի իրականութիւնն էր, դա հայ ժողովրդի ամուսնական կապի վրա ունեցած հայեացքն էր: Այդպիսի ամուսնալուծութիւն թելադրում էր զարբերի հնութիւնից եկած սովորովի օրէնքը:

Եկեղեցին կանգնած էր այդ իրականութեան առաջ, նրա անողոք պահանջի առաջ, որ եկեղեցու ոգուն հակառակ էր, այն եկեղեցու՝ որ տուում էր «անառակութեան համար միայն իրաւունք ունիս կինդ արձակել», որովհետեւ ինչ որ Ստուած է գուգաւորել մարդը, բացի այդ պատճառից, այլ պատճառով չպիտի համարձակուի քանդել:

Սակայն հայ կեանքի ամուսնալուծութեան համար առաջ բերած այդպիսի սովորութիւններն ու հայացքը Մովսիսական օրէնքի խստասրտութիւնը չունէր: Նա դրա հետ զուգնթացաբար և մշակել էր իր պատմական կեանքի ընթացքում նոյն սովորութի ձևով մի շարք այլ պայմաններ, որ իւրաքանչիւր ամուսնալուծութեան դիմող տղամարդը պարտաւորապէս պիտի ՚ի նկատի ունենար: Նրան ամուսնալուծութեան թոյլ տւող պայերի սովորութի օրէնքը, որքան հեշտութեամբ իրաւունք էր տալիս քաղաքացիական այդ դաշնը լուծել, այնքան խստութեամբ էլ հարկադրում էր բաւարարութիւն տալ անմեղ տեղ արձակւած կնոջը: Հայկական ամուսնութեան սովորութի օրէնքի պատիժն էր դա, որ ուղղւած էր դէպի մեղաւոր կողմը: Սովորութի այդ օրէնքը պարտաւորեցնում էր կնոջը թողնող ամուսնուն ապահովել նրա նիւթական դրութիւնը, տալ նրան իր ունեցածի կէսը:

Հայ եկեղեցին ահա կանգնած էր այդ սովորութի օրէնքի առաջ: Կեանքերն էր պահանջում և եկեղեցին պարտաւոր էր բաւարարութիւն տալ այդ պահանջին ու տւեց: Նա Շահապիվանի ժո

ղովի կանոններով սրբացրեց սովորութի օրէնքը և իբր եկեղեցական մի սահմանադրութիւն՝ տւեց իր ամբողջութիւնը կազմող ժողովրդին: Այսինքն եկեղեցին օրինաւորեց այն, ինչ որ միայն սովորութիւն էր:

Բայց անցնենք միւս եկեղեցիների և ազգերի ամուսնալուծական սահմանադրութիւններին:

Բ. Հռոմայեցիք. — Հռոմուսի օրէնքը թոյլ էր տալիս ամուսնուն արձակել կնոջը անառակութեան, թոյն պատրաստելու և կեղծ բանալիքներ պատրաստելու համար, առանց կնոջը նոյն իրաւունքը տալու մարդու վերաբերմամբ: Հռոմէական հին օրէնքի հիման վրա գերի ընկած կամ անյայտ բացակայած զինւորի կինը իրաւունք ունէր ամուսնանալ, որովհետեւ օրէնքն այդ ամուսնութիւնը լուծւած էր հաշոււմ, եթէ անյայտանալու օրից անցել էր հինգ (5) տարի: Չորրորդ դարի սկզբում Կոստանդեանոս մեծ Կայսրը անյայտ բացակայութեամբ ամուսնութիւնը լուծելու ժամանակամիջոցը հնգից իջեցրել 4-ի, որ արգարութեան աւելի մօտ էր:

Քրիստոնէութեան առաջին դարում Օգոստոս կայսեր օրէնքները թոյլ էին տալիս ամբողջ կայսրութեան մէջ լուծել ամուսնութիւնը, եթէ ամուսինները, իրենց ամուսնութիւնը լուծելու յատարարութիւնն անէին, Հռոմի քաղաքացիութեան կոչումն ունեցող եօթը չափահաս մարդոց ներկայութեամբ: Օգոստոս կայսեր այդ օրէնքը չէր պահանջում ամուսնալուծութեան համար յտուկ

ծանրակշիռ պատճառներ, բաւական էր, եթէ ամուսինները փոխադարձաբար համաձայնութեան գային այդ խնդրի առթիւ: *ամուսնացում*

Հոռոմէական օրէնքն առհասարակ բոլոր խըտութիւնները կնոջ նկատմամբ էր սահմանել: Նրա հիմնական սկզբունքն այն էր, որ կինը մեղաւոր եղած դէպքում, մարդն իրաւունք ունէր նրան արձակել: Օգոստոս կայսրից շատ առաջ, դեռ Հոռոմէական հասարակապետութեան ժամանակ ամուսնալուծութեան հետեւեալ պատճառներն էր ճանաչում Հոռոմէական օրէնքը, որոնք բոլորն 'ի նկատի են առնում միայն կնոջ գործած լանցանքները: Մարդը կարող էր ըստ այդմ արձակել կնոջը 1) եթէ արհեստական կերպով վիժումն է առաջ բերել նա. 2) եթէ օտար մարդոց հետ բազմիքում է եղել, 3) եթէ կողմնակի մարդոց հետ է ճաշել մարդու ցանկութեան հակառակ. 4) եթէ նա հասարակական խաղերին է ներկայ եղել. 5) թէ նա գիշերն անց է կացրել ամուսնու տնից դուրս: Ինչպէս յետոյ կտեսնենք Յունա-բուզանդական կայսրների ժամանակ այդ պատճառների վրա աւելացան և մի շարք այլ պատճառներ:

գ. *Կաթոլիկ եկեղեցի*.— Կաթոլիկ եկեղեցին, հետեւողութեամբ քրիստոնէական սկզբի դարերի ընդունած կարգերին և ամուսնութեան եկեղեցու խորհուրդ հռչակելուց յետոյ նամանաւանդ, ամուսնութիւնն անլուծելի է ընդունում նոյն իսկ անհաւատարմութեան դէպքի համար ևս: Ամուսնական իրաւունքի մէջ սա կաթոլիկ եկեղեցու

հիմնական սկզբունքն է: Ամուսնալուծութեան փոխարէն կաթոլիկութիւնն ընդունում է ամուսնական անկողնի և սեղանի բաժանումն. այսինքն կաթոլիկ դաւանութեան մի գոյգ ամուսին, եթէ չեն կարող, չնայելով պատճառների լրջութեանը, պատկը լուծելու իրաւունք ձեռք բերել, կարող են սպրել ջոկ, ջոկ, իրարից հեռու, առանց իրաւունք ունենալու ամուսնանալ ուրիշի հետ:

Չնայելով կաթոլիկ եկեղեցու այս խիստ օրէնքին, այնուամենայնիւ, Պապն իբր այդ եկեղեցու զլուխ, խիստ բացառիկ հանգամանքներում, լուծում է պատկներ, առանց նայելու նոյն իսկ, թէ արդեօք երկու ամուսինն էլ հաւատարապէս համաձայնութիւն են տւել լուծելապակը թէ ոչ: Կաթոլիկ եկեղեցին առանց որ և է արգելքի լուծում է պատկն այն մարդու, որն ուզում է վանք մտնել:

դ. *Յունա-բուզանդական եկեղեցի և բուզանդական կայսրութեան օրէնքներ*.— Ամուսնալուծութեան համար, նախքան Յուստինեան շրջանում, եկեղեցու համար գործադրելի հետեւեալ պատճառներն էին յայտնի. 1) եթէ մարդը սպանութիւններ էր կատարել 2) եթէ թունաւոր ճարեր էր պատրաստել 3) եթէ գերեզմանատեղերի և տապանաքարերի անձեռնմխելիութիւնն էր ոտնատակ տւել, այս շարքը վերաբերում էին միայն մարդուն. դոցա համեմատ, եթէ մարդն այդ լանցանքների տէրն էր, ամուսնութիւնը կարող էր լուծւել: Հետեւեալ երեք պատճառներն էլ վերաբերում են կանանց, որոց համար մարդուն իրա-

ուենք էր տրուում լուծել պսակը 1) եթէ թու-  
նաւոր ճարեր էր պատրաստել և 3) եթէ կաւա-  
տուութիւն էր արել: Ինչպէս տեսնոււմ էք, մարդու  
անհաւատարմութեան համար և ոչ մի խօսք, մինչ  
դեռ նոյն լանցանքի համար կինը պատժի է են-  
թարկուում: Ամուսնալուծութեան առաջ բերող  
այդ պատճառների մէջ, առանձին ուշադրութեան  
արժանի է կնոջ կաւատուութիւն անելու լանցանքը,  
որ նորութիւն էր ցայդ ժամանակ եղած բոլոր  
օրէնքների մէջ: Ըստ այդմ, եթէ ամուսին ունե-  
ցող մի կին կաւատութիւն անի, այսինքն կանանց  
և տղամարդոց մէջ սիրային շարաբերութեանց  
համար միջնորդի դեր կատարի, այլ կերպ ասած  
ծախի, այդպիսի մի ստոր գերի համար ամուսինն  
իրաւունք ունի լուծել պսակը:

*Ամուսնալուծութիւնն իր գարգացման շարժանում, Յուստինեանոս կայսեր եկեղեցուն վերաբերեալ նովելաներում պսակի լուծման գործն այս պատճառներն է ճանաչում. 1) եթէ կինը գիտէ կայսեր կեանքի դէմ դաւադրութեան մասին տեղեկութիւն և չի յայտնի ամուսնուն. 2) եթէ կինն անհաւատարիմ է իր ամուսնուն 3) եթէ կինն ամուսնու կեանքի դէմ փորձ է արել, կամ գիտէ որ նրա կեանքի դէմ դաւադրութիւն կայ և չի յայտնի իր ամուսնուն, 4) այնպիսի փաստեր կամ հանգամանքներ, որ կարող են կողմնակի կերպով ապացուցանել կնոջ անհաւատարմութիւնը. օրինակ, եթէ մարդու կամքի հակառակ, կողմնակի մարդոց հետ ճաշկերոյթի է գնացել. եթէ օտար*

մարդու հետ բաղնիք է գնացել, եթէ եղել է հա-  
սարակաց խաղերի ներկայ և այլն. 5) եթէ փոր է  
փչացրել այսինքն արհեստական կերպով վիժումն  
է առաջացրել. 6) եթէ մարդը մասնակցում է  
կայսեր կեանքի դէմ եղած դաւադրութեանը, կամ  
գիտէ, տեղեկութիւն ունի այդպիսի մի դաւադրու-  
թեան մասին, ու չի յայտնում իշխանութեանը.  
7) եթէ ամուսինը դաւ է սարքել կնոջ կեանքի  
դէմ, կամ տեղեկութիւն ունի այդպիսի մի դաւի  
մասին և չի յայտնում կամ կնոջը և կամ իշխա-  
նութեան. 8) եթէ է ամուսինը ուզում է կամ փոր-  
ձել է ծախել կնոջ պատիւը ուրիշին, կամ կաւա-  
տութիւն անել ձգտում. 9) եթէ ամուսինը մե-  
ղադրում է կնոջը անհաւատարմութեան համար, որ  
չի ապացուցւում, կամ չի կարողանում ապացու-  
ցանել. 10) եթէ մարդը սիրուհիներ է պահում.  
11) եթէ մարդը անընդունակ է ամուսնական կե-  
նակցութեան, այսինքն եթէ նա զուրկ է առնա-  
կան ընդունակութիւնից. 12) եթէ պատերազմի  
ժամանակ գերի ընկած կամ անյայտ բացակայող  
ղինւորը մինչի 10 տարի անյայտութեան մէջ է:  
Կոստանդեանոս մեծն այս ժամանակամիջոցը ինչ-  
պէս նախընթացում արդէն տեսել ենք, 4 տարիի  
էր իջեցրել, իսկ Յուստինոս այդ ժամանակա-  
շրջանը քիչ հաշւելով աւելացրել է ևս 6 տարի, որ  
բաւականին խիստ է և անարդար: 13) բոլոր եկե-  
ղեցիների կանոններով քաւորը սանամօրը չի կա-  
րող առնել, որովհետև այդտեղ հոգևոր չրհասու-  
թիւն է ընդունուում, այդ հիման վրա էլ, եթէ

մարդու հետ բաղնիք է գնացել, եթէ եղել է հա-  
սարակաց խաղերի ներկայ և այլն. 5) եթէ փոր է  
փչացրել այսինքն արհեստական կերպով վիժումն  
է առաջացրել. 6) եթէ մարդը մասնակցում է  
կայսեր կեանքի դէմ եղած դաւադրութեանը, կամ  
գիտէ, տեղեկութիւն ունի այդպիսի մի դաւադրու-  
թեան մասին, ու չի յայտնում իշխանութեանը.  
7) եթէ ամուսինը դաւ է սարքել կնոջ կեանքի  
դէմ, կամ տեղեկութիւն ունի այդպիսի մի դաւի  
մասին և չի յայտնում կամ կնոջը և կամ իշխա-  
նութեան. 8) եթէ է ամուսինը ուզում է կամ փոր-  
ձել է ծախել կնոջ պատիւը ուրիշին, կամ կաւա-  
տութիւն անել ձգտում. 9) եթէ ամուսինը մե-  
ղադրում է կնոջը անհաւատարմութեան համար, որ  
չի ապացուցւում, կամ չի կարողանում ապացու-  
ցանել. 10) եթէ մարդը սիրուհիներ է պահում.  
11) եթէ մարդը անընդունակ է ամուսնական կե-  
նակցութեան, այսինքն եթէ նա զուրկ է առնա-  
կան ընդունակութիւնից. 12) եթէ պատերազմի  
ժամանակ գերի ընկած կամ անյայտ բացակայող  
ղինւորը մինչի 10 տարի անյայտութեան մէջ է:  
Կոստանդեանոս մեծն այս ժամանակամիջոցը ինչ-  
պէս նախընթացում արդէն տեսել ենք, 4 տարիի  
էր իջեցրել, իսկ Յուստինոս այդ ժամանակա-  
շրջանը քիչ հաշւելով աւելացրել է ևս 6 տարի, որ  
բաւականին խիստ է և անարդար: 13) բոլոր եկե-  
ղեցիների կանոններով քաւորը սանամօրը չի կա-  
րող առնել, որովհետև այդտեղ հոգևոր չրհասու-  
թիւն է ընդունուում, այդ հիման վրա էլ, եթէ

մէկն իր սեփհահան երեսի համար կնքահայր էր լինում, բուզանդական կայսրութեան օրէնքներով, այդ սանիկի հայրն ու մայրն իբր քաւոր և սանամէր իրաւունք էին ձեռք բերում բաժանել: Ուրեմն եթէ սանիկի հայրն ու մայրը միաժամանակ և կնքահայր և կնքամայր էին: 14) Լևոն Իմաստասէրի նովելայով ամուսնութիւնը կարող է լուծուել, եթէ նոցանից մէկը խելագար էր. 15) կրկին Յուստինեանոսի նովելաներով եթէ մէկը կուսակիւրօն էր դառնում, կամ վանք մտնում. 16) Տրուլլեան ժողովի կանոնով, եթէ ամուսինը ընտրուած է եպիսկոպոս: Այս դէպքում, 'ի դէպ է ասել, որ նոյն օրէնքը պարտաւորեցնում էր կնոջը վանք մտնել, սակայն իր նախկին, արդէն այժմ եպիսկոպոս ամուսնու վիճակից հեռու մի վանք:

Մեր առաջ բերած պատճառներից մի շարքը հին Հռոմէական ամուսնական իրաւունքին յայտնի պատճառներ են, միքանիսը նոր, իսկ յատկապէս երկուսը—կայսեր կեանքի դէմ փորձ անելու պատճառը բոլորովին անձանօթ են եղել Հռոմէական օրէնքներին ըստ մեր դասաւորութեան երկրորդ և իններորդ պատճառները ըստ երևույթին արտաքուստ նման պատճառներ են, երկուսն էլ ամուսնու — կնոջ անհաւատարմութեանն են վերաբերում, սակայն նոցա տարբերութիւնը խիստ մեծ է: Մէկով արդէն ապացուցուած անտաւակութեան համար է լուծում, իսկ միւսով լուծման հիմքը լոկ կասկածն է, որ կամ չէ ապացուցուել որ և է փաստով և կամ զժլար է ապացուցանելը: Վեր-

ջին պատճառը կարող է և անհիմն, լոկ կասկածով վրա յինւած ամուսնալուծութիւն առաջ բերէ, բայց և այնպէս օրէնքն իրաւունք է տալիս կասկածող ամուսնուն, արձակել իր կնոջը:

Յուստինեան նովելաները ամուսնալուծութեան մասին իրենց հայեացքով համեմատութեամբ հռոմէական հին օրէնքներին, շատ ու շատ արդարաբանութեամբ է վերաբերում դէպի կինը, հաւաստարպէս նրան էլ իրաւունք տալով ամուսնալուծութեան դատ սկսել իր վատ մարդու դէմ:

Մեզ մնում է միայն այս համառօտ ակնարկներից յետոյ ասել, որ բուզանդական կայսրների օրէնսդրական գործունէութիւնը թէ առհասարակ ամուսնական խնդիրների և թէ 'ի մասնաւորի նրա ամուսնալուծական բաժնի նկատմամբ անփոփոխ են իրենց մէջ այն շարք կանոնները, որ յատկապէս եկեղեցու համար են սահմանուած:

Ե. Աւետարանական կամ բողոքական եկեղեցի. — Լիւտերի առաջ բերած կրօնական մեծ յեղափոխութիւնից յետոյ, բողոքական եկեղեցին առհասարակ նոր հայեացքներ մտցրեց նաև ամուսնական հիմնարկութեան վերաբերմամբ: Ամէնազլխաւոր նորութիւնը որ մտցրեց այդ խնդրի մէջ, դա այն էր, որ կաթոլիկութիւնից նոր բաժանուած այդ եկեղեցին ընդունեց ամուսնական կապի լուծելի լինելը: *անհրաժեշտ է բանը*

Նոր եկեղեցին իր կանոնական կարգերի մէջ ամուսնալուծութեան դէպքում սահմանեց մեղաւոր մարդուն իբր պատիժ՝ զրկել կրկին ամուսնա-

նալու իրաւունքից: Պսակը քանդելու իբր պատճառներ ընդունւած էին 1) ամուսնական անկողնին անհաւատարմութիւն. 2) ամուսիններից մէկի իսպառ հրաժարւելը կենակցել միւսի հետ և թողնել հեռանալը. 3) ամուսնու հետ վատ վարւելը և նրա կեանքի դէմ փորձ անելը: Բայց առհասարակ բողոքական եկեղեցին իր սկզբնական շրջանում ամեն տեղ մի ընդհանուր սկզբունքով կամ կանոնով չէին ղեկավարուում, այլ տարբեր տարբեր: Սակայն բողոքական եկեղեցին, ինչպէս և պետութիւնները չմնացին ամուսնալուծական խնդիրներում այդ աստիճանի վրա: Ամուսնալուծական օրէնսդրութիւնն այնտեղ իր յաջորդ գործացման շրջանում, պսակը քանդելու համար մի շարք նոր հիմքեր ու պատճառներ առաջ բերեց: Սենք չենք վերցնի նրա զարգացման ամեն վայրկեանները, այլ կը դիմենք Ռուս. պետական օէնսդրական XI հատորի I մասին, ուր օտարազաւաններին վերաբերեալ օրէնքների մէջ կը գտնենք համարեա այն բոլոր հիմքերը, որոց հիման վրա աւետարանական-լիւտերական եկեղեցին լուծում է ամուսնական կապը: Յամենայն զէպօ առաջ բերածս կլինի այն բոլորն, ինչ պատճառներով որ Ռուսաստանում այդ դաւանութեան եկեղեցու պատկանող անձինք կարող են ամուսնալուծական դատ բաց անել մեղաւոր կողմի դէմ և ինչ պատճառներով որ Ռուսաստ. այդ դաւանութեան վարչութունները լուծում են պսակալուծութեան վերաբերեալ յարուցւած խնդիրները: Ահա այդ հի-

մունքները. 1) ամուսնական անհաւատարմութիւն. 2) ամուսիններից մէկի միւսին թողնել հեռանալը. 3) հնգամեայ բացակայութիւն ամուսիններից մէկի, թէ և այդ բացակայութիւնը լինի հակառակ նրա կամքի. 4) զգւանք զէպի ամուսինը կամ ամուսնական կենակցութեան անընդունակութիւն. 5) անբուժելի վարակիչ հիւանդութիւն. 6) խելագարութիւն. 7) անբարոյական կեանք. 8) ամուսնու կողմից միւս ամուսնու կեանքին վտանգ սպառնացող և դաժան վերաբերմունք, հայհոյեանքներ և այլ զգալի վիրաւորանքներ. 9) եթէ դատաստանական վճռով հաստատուել է, որ ամուսիններից մէկը միւսին պատուից ուղեցել է զրկել և 10) ծանր յանցանքներ, որի հետեանքն է աքսոր. այդ ծանր յանցանքների մէջ պէտքէ հաշւել նաև բնութեան հակառակ արատներ:

Ամուսնութիւնը օրինական լինելու համար պահանջւում է, որ ծնողների ու խնամակալների համաձայնութեամբ լինի: Ամուսնութիւնը կը լուծւի կամ անվաւեր կը հաշւի, երբ պսակը կատարւել է հակառակ պսակւողներից մէկին ու մէկի ցանկութեան, երբ կատարւել է եկեղեցու կանոնով անթույլատրելի չհասութեան աստիճաններում. երբ ոչ միայն պարզ ապացոյցներ կան ամուսիններից մէկի անհաւատարմութեան մասին, այլ և այն դէպքում, երբ իրատ զօրեղ կասկած կալ այդ առթիւ, հաւասարազօր յայտնի փաստի: Ամուսնութիւնը կը լուծւի, երբ յայտնւի, որ ամուսիններից մէկը, նախքան ամուսնութիւնը յարաբերու-

Թեան մէջ է եղել ուրիշների հետ: Բացի այս պատճառներից 377 յօդւածում (XI հատ. I մ.) գտնում ենք նաև մի շարք այլ պատճառներ, որոնցով պսակի լուծումն է տեղի ունենում: Այն է. 1) երբ ամուսիններից մէկը մի տարուայ ընթացքում հրաժարուում է յամառապէս կատարել ամուսնական կենսակցութեան գլխաւոր պայմանը: 2) երբ ամուսիններից մէկը դիտմամբ արգելք է լինում յղիութեան առաջ գալուն. 3) երբ ամուսիններից մէկն անընդունակ է ամուսնական կենսակցութեան. այս դէպքում այդ անընդունակութիւնը կարող է լինել բնական և պսակից յետոյ առաջ եկած, այդ ընդունակութիւնը կորցրած ամուսնու մեղքով: Այս պատճառով պսակի լուծումը կարելի ամուսնութիւնից կամ աւելի ճիշտն ասած անընդունակութեան յայտնի լինելուց երեք տարի յետոյ:

Այստեղ հարկ ենք համարում ստել, որ Ռուսաստանում գոյութիւն ունեցող բոլոր քրիստոնեայ գաւանութեանց մէջ բողոքական եկեղեցին միակն է, որ այդքան ազատ հայեացք ունի ամուսնալուծութեան մասին, և պսակը քանդելու համար այդքան բազմատեսակ պատճառներ է 'ի նկատի առնում:

գ. Ռուսաց եկեղեցի եւ պետական օրէնքներ: — Ռուսաստանում քրիստոնէութեան սկզբի դարերում, Յարոսլաւին վերադրած կանոններով էին ղեկավարում ամուսնալուծական խնդիրներում: Պսակը քանդելու համար այդ կանոնները հետև-

եալ պատճառներն են ճանաչում, 1) եթէ կինը չի յայտնում ամուսնուն թագաւորի կամ իշխանի կեանքի դէմ, իրեն յայտնի դաւադրութեան մասին. 2) եթէ կինն անհաւատարիմ է. 3) եթէ կինը դաւ կը սարքէ իր ամուսնու կեանքի դէմ կամ կը գիտենայ այնպիսի մի դաւադրութեան մասին ու չի յայտնի նրան. 4) եթէ կինն ամուսնու կամքի հակառակ կողմնակի մարդոց հետ կեր ու խում կանի, կամ խաղերի կը մասնակցի և այլն. 5) եթէ կինը հակառակ ամուսնու յորդորներին և խրատներին խաղատեղեր կը յաճախի. 6) եթէ կինն անձամբ կամ ուրիշների միջոցով կը կողոպտի ամուսնուն կամ եկեղեցի: Այդ բոլորի մէջ, ինչպէս ակնյայտնի երևում է, տուժողը կինն է, ամուսնութիւնը լուծւում է միմեայն նրա գործած յանցանքների համար: Յարոսլաւի կանոնները մարդու գործած յանցանքների մասին լուռ են: Եթէ այս պատճառները համեմատենք Հռոմէական և Յուստինեան օրէնքների հետ, կը տեսնենք որ, զոքաքաղւած են նրանցից համարեալ թէ բառացի կերպով. նոր է եկեղեցի և ամուսին կողոպտելու համար առաջ բերած պսակը լուծող պատճառը: Իսկապէս վէճ էլ չի կարող լինել Յարոսլավին վերադրած կանոնագրքի Յունա-բուզանդական օրէնքներից քաղւածական մի գործ լինելու մասին:

Յաջորդ դարերում, համարեալ մինչի Պետրոս Մեծը, Ռուս. եկեղեցին բացի այդ պատճառներից, ամուսնութիւնը լուծում էր և ամուսինների փոխադարձ համաձայնութեամբ, որ Բուզանդական

օրէնքներով արգելւած էր: Այդ շրջանում առհասարակ այնպիսի անորոշութիւն և խառնակ վիճակ էր տիրում ամուսնական խնդիրների նկատմամբ, որ ժողովրդի մէջ սովորութիւնն արդէն ընդունել և սրբազործել էր այսպէս ասած «արձակման թղթերը», որ եկեղեցու ամեն մի սրբազնագործ պաշտօնեայ և նոյն իսկ ստորին աստիճանաւոր կարող էր տալ և տալիս էր իրեն դիմող ամեն ամուսնու: Այդ «արձակման թղթերն» ստացողն ազատ էր ամուսնական կապից, դրանով լուծուած էր նրա պսակը:

*Հասարակական*

Յետագայ ժամանակներում թէ եկեղեցին և թէ պետութիւնը մասամբ կեանքի պահանջների և նրա մէջ տիրող անկանոնութիւններին վերջ տալու համար, մասամբ արեւմտեան պետութիւնների օրէնսդրական գործունէութեան արդիւնքները — օրէնքներն ՚ի նկատի առած, ամուսնալուծական խնդիրներն աշխատեց կանոնաւորել և այժմ պետութեան մէջ գործադրւող օրէնքներով պսակն անվաւեր հաշւելու և լուծելու համար հետեւեալ պատճառներն են ճանաչուած. 1) եթէ պսակն եղել է ստիպմամբ կամ պսակւողներից մէկն ու մէկը խելագար է եղել. 2) եթէ պսակւողներն եկեղեցու կանոններով չհաս համարած արեւակցութեան, հոգևոր ազգակցութեան և խրնամութեան աստիճաններումն են. 3) եթէ պսակւողն ամուսնացած է եղել ու առաջին ամուսնութիւնը չի լուծւած. 4) եթէ օրէնքով մէկին արգելւած է եղել պսակել, և նա պսակել է. 5)

եթէ անչափահաս է, 80 տարեքից անց ծերունի է և կամ չորրորդ անգամն է ամուսնացել. 6) եթէ կուսակրօն, քահանայ կամ սարկաւազ է՝ ու չի թողնում կարգը. 7) եթէ պսակել է ոչ քրիստոնէի հետ. 8) եթէ ամուսիններից մէկն անհաւատարիմ է. 9) եթէ անընդունակ է ամուսնական կենակցութեան. 10) եթէ ամուսիններից մէկը դործել է այնպիսի ծանր յանցանք, որի հետեւանքն է կամ դատակարգային կոչման իրաւունքներից զրկումն, կամ զրկումն առհասարակ իրաւունքների և աքսոր զէպի Սիբիր. 11) եթէ ամուսիններից մէկը անյայտ բացակայել է առնւազն հինգ տարի շարունակ, առանց իր մասին ու գտնւած տեղի մասին որ և է լուր կամ տեղեկութիւն տալու \*):

*պսակելու և արգելելու  
 Բողոքային օրէնքով  
 ընդունուած է*

1) Քաղաքացիական օրէնք. Ռուս. կայսրութեան X հատ. I մ. 37 45 յօդ.

ՔԱՂԱՔԱՅԻՆԿԱՆ ՊՍԵԿ

III

Ամուսնութեան մասին, մեր առանց այն էլ համառօտ ակնարկները լրիւ չէին լինի, եթէ մի- քանի խօսք էլ չասէինք քաղաքացիական պատկի մասին, այսինքն այն պատկի մասին, որ եկեղեցու միջոցով չի կատարուում, որ եկեղեցին չէ վաւերացնում, այլ քաղաքական կամ աշխարհական իշխանութիւնը:

Անշահ չէ ասել, որ մեզանում առհասարակ այն սխալ միտքն է տարածւած միջին և ստորին հասարակութիւնների մէջ, թէ քաղաքացիական ամուսնութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազատ սէր, մարդու և կնոջ ազատ կենակցութիւն, և ոչ թէ ամուսնացողների վրա փոխադարձաբար պայմաններ և պարտաւորութիւններ դնող մի դաշն, մի կապակցութիւն, որից բաժանւելու համար հարկ լինի որ և է միջոցի դիմել: Այդ սխալ հասկացողութեամբ քաղաքացիական ամուսնութեամբ միացողներն ազատ են երբ կամենան թողնեն իրենց ամուսնուն և գնան մի ուրիշին: Պարզ է, որ այդ-

պիսի ծուռ հասկացողութիւնը կազմել էս խալ տեղեկութիւնները վրա և առանց խորը մտածելու: Քաղաքացիական ամուսնութիւնն էլ նոյնպիսի մի ամուսնութիւն է, ու նոյնքան օրինաւոր օրէնքի առաջ, այն երկրներում, ուր ամուսնութեան այդ կարգն է տիրում, ինչպէս և եկեղեցական ամուսնութիւնը: Քաղաքացիական ամուսնութեամբ կապւածները պատասխանատու են իրենց վրա դրւած որոշ պարտաւորութիւնների նկատմամբ, միմեայն պետական օրէնքների առաջ, իսկ եկեղեցական պսակով ամուսնացածները պատասխանատու են եկեղեցու և պետութեան օրէնքների առաջ: Քաղաքական պրսակով ամուսնանալ ցանկացողները պիտի ՚ի նկատի առնին այն արգելքներն ու (պարտաւորութիւնները) պահանջները, որ դնում են իրենց առաջ երկրի միմիայն պետական օրէնքները, իսկ եկեղեցական պսակով ամուսնանալ ցանկացողները, այդ պսակը պարտադիր ընդունող երկրներում, պիտի ՚ի նկատի ունենան այն բոլոր արգելքներն ու պահանջները, որ նրանցից անում են եկեղեցու սահմանած կանոններն ու պետութեան օրէնքները:

Վերցնենք մի օրինակ. — Մի հայ, որի, եկեղեցական կանոններով, ամուսնութիւնը վաւերական է, երբ եկեղեցին է կատարում, որն այդ եկեղեցու կանոններով չի կարող ամուսնանալ արենակցական և խնամեական որոշ աստիճաններում, լինելով ֆրանսահայտակ, նրա համար պարտադիր է քաղաքացիական ամուսնութիւնը. իսկ քաղաքական իշխանութեան համար ոչ մի նշանակու-

թիւն չունին, այդ ամուսնացողի գաւանութեան եկեղեցու որոշած արգելքները, այդ խնդրում նա պսակողին է թողնում ղեկավարել ինչպէս ինքը կը ցանկայ, մի պայմանով միայն, որ նրա ամուսնութիւնը ֆրանսական պետական օրէնքների որոշումներին համապատասխան լինի: Գիցուք ֆրանսահայտակ մէկ հայ ուզում է ամուսնանալ իր եղբոր քենու հետ, կամ մօրաբրջ աղջկալ հետ, չնայելով որ այդ աստիճանների պսակներն իր եկեղեցին արգելում է, սակայն քանի որ նա պսակում է ֆրանսական օրէնքների համաձայն քաղաքացիական պսակով, այդ արգելքները նրա համար գոյութիւն չունին: Քաղաքական իշխանութիւնն այդ առթիւ չգտնելով իր օրէնքների մէջ որ և է արգելք, կկատարի ամուսնութեան գործողութիւնն առանց նայելու թէ, պսակողի գաւանանքն ինչ կասէ այդ պսակի դէմ. նա նոյն իսկ չի էլ հարցնի այդ մասին, դա նրա հոգը չէ, բաւական է, որ պսակողը ֆրանսահայտակ է, ու պսակը կատարում է երկրի օրէնքներով: Ըստ այդմ իւրաքանչիւր պսակ, որ կկատարւի ոչ համապատասխան այդ օրէնքների, այլ պսակողների գաւանանքի համաձայն՝ չի կարող օրինական լինել, որովհետև ամուսնութիւնից ծագող պարտաւորութիւններն ու իրաւունքները ճանաչոււմ և պաշտպանոււմ են քաղաքական օրէնքների հիման վրա այն ժամանակ, երբ նա կատարւել է այդ օրէնքներով: Այսպէս ուրեմն հայ ֆրանսահայտակը ամուսնանալով իր գաւանած եկեղեցու կանոններին հակառակ,

ըստ այդ կանոնների նրա պսակն անվաւեր է նախ նրա համար, որ իր — եկեղեցու ձեռքով չէ կատարւել, և եթէ նոյն իսկ քաղաքական պսակից լետոյ ինքն էլ օրհնի այդ պսակը, սակայն պետութեան օրէնքի առաջ այդ պսակը վաւերական է ոչ թէ իր — եկեղեցու կնքածը լինելու համար. երկրորդ, որ կատարւել է չհաս աստիճանում: Սակայն որքան էլ հայ եկեղեցու կանոններով այդ պսակն անվաւեր լինի, այնուամենայնիւ նա անգօր է որ և է կերպ զրկել այդ պսակողներին, լուծել նրանց պսակը: Մի բան որ եկեղեցին կարող է անել այդ պսակողի դէմ, դա իր միջից հեռացնելն է, բանագրանքի տակ ձգելն է և այլն, այսինքն այնպիսի միջոցներ, որ օրէնքի առաջ ոչ մի նշանակութիւն չունին և չեն կարող ունենալ:

Մեր խօսքը նրան չի վերաբերում, թէ արդեօք, ո՞ր պսակն է լաւ, քաղաքացիականը, թէ եկեղեցականը, այլ նրան, թէ նախ, նա էլ մի ամուսնութիւն է օրէնքի առաջ ճանաչւած իբր օրինաւոր և վաւերական այն երկրներում, ուր ամուսնութեան այդ ձևը գոյութիւն ունի. թէ նա էլ կարող է տեղի ունենալ պետական օրէնքների միայն թոյլ տւած ձևով և թէ նա էլ նոյնքան ամուր է և պարտաւորութիւններով ծանր, ինչքան և եկեղեցական պսակը. և վերջապէս նա ազատ սէր կամ ազատ կենակցութիւն չէ:

Քաղաքային ամուսնութեան գաղափարը նոր չէ, այլ հին: Այն հասկացողութիւնը, թէ պսակը մի քաղաքացիական ակտ, գործողութիւն է, բըղ-

խում է հենց ամուսնութեան էութիւնից, որովհետեւ երկու անհատ, մարդ և կին, կազմում են մի ընկերութիւն, մի ընտանիք, որ կապւած են իրար հետ այնպիսի շահերով, որ եկեղեցու կամ կրօնի հետ ոչ մի առընչութիւն չունին: Արդիք ծնելը, նրանց պահելն ու մեծացնելը, ապրուստի համար աշխատելը և այլն և այլն մարդու և ընտանեական կեանքի մէջ այնպիսի պայմաններ են, որ առաջ են եկել ոչ թէ կրօններից կամ կրօնական հասկացողութիւններից: Ամուսնութիւնն իր ամեն հանդամանքներով և հետեանքներով առաջ է եկել կեանքի և գոյութեան բնական օրէնքների և տնտեսական պայմանների ազդեցութեան տակ, թէ և դոքա գունաւորւած էլ լինին որոշ կրօնական հասկացողութիւններով:

Ամուսնութեան քաղաքացիական մի գործողութիւն լինելու հասկացողութիւնը դարերի ընթացքում զանազան կաշկանդումների ենթարկւելուց լետոյ, վերջապէս այսօր ստացել է իր քաղաքացիական գոյութեան իրաւունքն ու հաստատութիւնը՝ համահաւասար եկեղեցական ամուսնութեան՝ ճանաչելով վերջինիս չափ կանոնաւոր և վաւերական:

Արևելքում Յունա-բուզանդական օրէնքներով և 'ի միջի այլոց Հայոց եկեղեցու կանոններով պսակն օրինաւոր և վաւերական էր, եթէ պարտաւորապէս կատարւել էր եկեղեցու միջոցով:

Արևմուտքում կաթոլիկ եկեղեցին XVI դարում միայն Տրինդինեան եկեղեցական ժողովով

սահմանեց պարտադիր եկեղեցական պսակ, որին բողոքական նորածին եկեղեցին անհամաձայն գրտնեց, ու ամուսնութեան գուտ կրօնական բնաւորութիւն ունենալը չընդունեց: Բողոքական եկեղեցու համար, թէև մնաց իբր մի քաղաքացիական գործողութեան իւրաքանչիւր կատարած պսակ հարսի և փեսայի մէջ, սակայն որ պսակը կամ այդ դաշնը անպատճառ եկեղեցու օրհնութեամբ պիտի կատարուի՝ ընդունելի մնաց և նրա համար:

Միջին դարերում, մինչի կաթողիկ եկեղեցու այդ վճռական որոշումը, ոչ քաղաքացիական պսակ ներկայ մտքով և ոչ էլ պարտադիր եկեղեցական պսակ կար: Ամուսնութիւնն ըստ հնաւանդ սովորութեան կապուում էր փոխադարձաբար իրար մէջ կրնալ համաձայնութեամբ, իբր մի դաշն կամ ընկերակցութիւն երկու ամուսնացող կողմերի համար, առանց որ քաղաքական իշխանութիւնը կամ եկեղեցական վարչութիւնն ստիպմամբ, օրէնքի ուժով միջամտէին ամուսնութեան գործողութիւններին: Այդ կապակցութեան հաստատութեան համար ընդունուում էր և եկեղեցու օրհնութիւնը, որ միջին դարերի ամուսնանալու կարգի մէջ կազմում էր մի վերջին գործողութիւն. սակայն ամուսնութեան համար դա ոչ մի հիմնական սկզբունք չէր կամ ստիպողական անհրաժեշտ պահանջ: Այդ վերջին գործողութեան էութիւնը կայանում էր նրանում, որ եկեղեցու ներկայիչը հարսին յանձնում էր փեսային: Յաջորդ XVII և XVIII դարերում սակայն, այդ սովորութիւնն այնքան ամ-

րաւնդւեց, կեանքի մէջ այնպիսի ուժ ստացաւ, իբր մի անհրաժեշտ պահանջ, ու այնքան ծանրակշիռ, որ նոյն իսկ պետական օրէնքներն ընդունեցին նրան իբր անհրաժեշտ պայման: Եկեղեցու կողմից այդ վերջին կնիքը դնելու սովորութիւնն ու օրէնքը Գերմանական կայսրութեան մէջ վերջնականապէս գուրս ձգւեց պետական օրէնքների ժողովածուից նախ Պրուսեայում 1874 թ. և ապա ամբողջ Գերմանական կայսրութեան մէջ 1875 փետր. 6-ի օրէնքների գորութեամբ:

Ամուսնութեան հետ կապւած են մի շարք պարտաւորութիւններ և իրաւունքներ, օրինակ ժառանգութեան նկատմամբ: Այդ գուտ քաղաքացիական գործերի համար պահանջում են ոչ միայն պսակի օրինապէս կատարւելու համար անհրաժեշտ վկայաթղթեր, այլ և տպացուցներ, որ գործի տէր անձը յատկապէս այդ ծնողներից է, կամ ծագում է ժառանգութիւնը թողած անհատներից և այլն և այլն, մի շարք բարդ պայմաններ, որոնք այնքան վճռական նշանակութիւն ունին, որ անհրաժեշտաբար կարիք են առաջ բերում գրի առնել և պահել ոչ միայն ծնունդն ու ամուսնութիւնը, գոցա մանրամասն արձանագրութեամբ, այլ և մահը: Այդ բանը յարմար էր որ անէր այն հիմնարկութիւնը, որի ձեռքով և կատարում էին այդ գործողութիւնները: Սակայն եկեղեցին շատ էլ կարիք չունի մտածելու ապագայում առաջ գալիք գուտ քաղաքացիական հանգամանքների մասին. դա նրա գործը չէ, դա գաւանանքի հետ կապ չունի:

Գեո XVI-րդ դարում (1538 թ.) և ապա 1671 թ. Անգլիայում են առաջին անգամ ձեռք առնում միջոցներ պսակի ծննդեան և մահւան արձանագրութիւնները քաղաքացիական իշխանութեան ձեռքում կենդրոնացնել, որոնք այնքան անհրաժեշտ էին խճճուած ժառանգական և այլ խնդիրների համար, որ ծագում էին և կարող են ծագել միշտ անընդհատաբար.

Անգլիայի սկսած գործն իր հետևողներն ունեցաւ, նա կամաց կամաց անցաւ դէպի մայր ցամաք և տարածւեց ամբողջ արևմտեան Եւրոպայում, ինչպէս և Ամերիկայում և Աւստրալիայում: Ռուսաստանում միայն պետական օրէնքներով պսակի, ծննդեան և մահւան արձանագրութիւնը թողնւած է քրիստոնեայ դաւանութեան եկեղեցիների միաբանութեանը:

Այն երկրներում, ուր շարունակ անհաշտ մաքառումն է եղել պետութեան և հոգևոր իշխանութեան մէջ, այդ մաքառումը որքան զօրեղ է եղել, այնքան պետութիւնն աշխատել է իր միջի այդ անկախ և ինքնազուլի իրաւունքները և միջամտութիւնները հասարակական գործերում կրճատել: Այդ երկրներում ահա, ամուսնութիւնը՝ քաղաքացիական իրաւունքների վրա հիմնւած բազմատեսակ հետևանքներով և խնդիրներով, տանելի չպիտի լինէր, որ գտնւէր այդ, իր հետ մաքառման մէջ գտնուող, հիմնարկութեան ձէռքում ամբողջապէս. մի մարմին որ տարբեր շահեր ունի՝ քան պետութեան ձգտած շահերն են:

Սա արդէն վերջնական քայլն էր, սա ընդհատրացիայի (արձանագրելու) խնդիրը չէր, որի համար մարմնաւոր իշխանութիւնը միշտ զօրեղ միջոցներ կը գտնէր պարտաւորելու հոգևոր իշխանութեանը, անթերի կատարել այդ գործը: Դա ամուսնութեան հիմնարկութեան զուտ քաղաքացիական գործողութիւն դարձնելու ձգտման իրականացումն էր, որին հասաւ պետութիւնը: *ուշ քայլ*

Քաղաքացիական ամուսնութիւնն այլ շատ հասարակական նշանակութիւններ ունենալուց յետոյ, պետական միութեան սկզբունքի համար նըշանակութիւն ունէր և մի այլ տեսակէտից: Ներկայ պայմաններում, երբ կրօնների կատարեալ ազատութիւն է, մեծ դժւարութիւններ և հակասութիւններ կարող էին առաջ գալ, եթէ պետական օրէնքներն ամեն կրօնի և ամեն դաւանութեան համար տարբեր տարբեր օրէնքներ և կանոններ սահմանէր, կամ ճանաչէր և համաձայն այդ կրօնների տրամադրութեան թող տար պսակներ և նրանից հետևող քաղաքացիական իրաւական յարաբերութիւններ: Քաղաքացիական իրաւունքների միատեսակութեան և հաւասարութեան համար այդ տեսակ մի դրութիւն մեծ անյարմարութիւններ ունէր. մինչ գեո, երբ պետութիւնն իր բոլոր հպատակների համար սահմանէր միատեսակ օրէնքներ ամուսնութեան և նրա հետ յարընթաց իրաւական յարաբերութիւնների համար, դրանով հասած կլինէր մի ընդհանուր նպատակի—որ բոլոր պսակողներն իր հպատակներն են ու ճանաչում

են իրենց կեանքի գլխաւոր խնդիրներէն մէկի համար ևս մի ընդհանուր պետական օրէնք՝ հաւասար բոլորի համար, առանց խտրութեան կրօնների:

Պետութեան այդպիսի մի սկզբունք սահմաններուց յետոյ, արդէն միւս խնդիրները— թէ իր հպատակներէն մէկը կամուսնանայ իր հօր եղբօր թուան հետ, թէ նրա աղջկայ հետ, և այլն, և այլն, նրա համար չեղած են, դա թողնում է պրասակուդի խղճին, նրա հասկացողութեանը և նրա կրօնի տրամադրութեանը: Այդ խնդիրներում իր հպատակն ինքնիշխան է. երբ հերթը գայ պսակելուն, նրա պսակը պիտի համապատասխանէ օրէնքների պահանջներին և ոչ իր կրօնի:

Ահա ձեզ ներկայ քաղաքացիական պսակն իր համառօտ հայեացքով. Սակայն կրօններն այնքան խոր արմատ են ձգած ժողովուրդների մէջ, որ մի երկրում, ուր կայ քաղաքացիական պսակ, այդ պսակով ամուսնացած մարդն իր հոգեկան աշխարհին որոշ բաւարարութիւն տալու համար դիմում է նրանից յետոյ եկեղեցուն, որ նա էլ իր խորհուրդը կատարէ, որ արդէն ձեական մի նշանակութիւն ունի: Քաղաքական իշխանութիւնն այդպիսի մի անմեղ ձեականութեան առաջ արգելքներ չի հանում, թոյ տալով, որ մարդիկ իրենց պապերից եկած այդ հին հասկացողներին էլ իրենց հարկը տան:

Քաղաքացիական պսակ գոյութիւն ունի Փրանսիայում, Գերմանիայում, Բելգիայում, Չուեցերիայում, Իտալիայում, Իսպանիայում, Բուսնիայում և այլն. այս երեք վերջին երկրներում

ընդունւած քաղաքացիական պսակն այն մի շեղումն ունի ընդհանուր ձեւից, որ օրէնքով է արդէն պահանջուած, որ քաղաքացիական պսակից յետոյ տեղի ունենայ նաև եկեղեցական պսակ:

Քաղաքացիական երեք տեսակի պսակ կայ. մի տեսակի մասին, որ պարտադիր է բոլոր հպատակների համար, այդ պսակն ընդունող պետութեան մէջ, արդէն ասացինք վերևում:

Կան երկրներ, ուր հաւասարապէս ընդունւած է երկու պսակն էլ, և հպատակների կամքին է թողած՝ պսակել եկեղեցական պսակով, թէ քաղաքացիական պսակով՝ երկու պսակն էլ ընդունելով օրինաւոր և վաւերական օրէնքի առաջ: Սա քաղաքացիական պսակ ընդունելու երկրորդ ձևն է, որ կոչոււմ է ֆակուլտատիւ քաղաքացիական պսակ: Այդպիսի ոչ պարտադիր քաղաքացիական պսակ գոյութիւն ունի Անգլիայում:

Միացեալ նահանգներում գործադրուած է դեռ հին Անգլիական Ետտլանդական ամուսնական իրաւունքը, որի հիման վրա ամուսնութիւնը տեղի է ունենում առանց ձեական համաձայնութեան և նոյն իսկ առանց վկաների: Իրա հետ զուգընթացաբար գոյութիւն ունին նաև եկեղեցական պսակը ու քաղաքացիական պսակը: Ամերիկայում քաղաքացիական պսակը կատարուած է և հաշտարար դատաւորի և բարձր դատարանի անդամների և քաղաքացիական վարչութեան առաջ:

Կայ և քաղաքացիական պսակն ընդունելու մի երրորդ ձևը, որ կայանում է հետևեալումը.—

Այն դէպքերում, երբ կամ եկեղեցին չէ թույլ տալիս և արգելքներ է լարուցանում պսակը կատարելու դէմ, կամ իրենք պսակողներն այս կամ այն պատճառով չեն ցանկանում, չեն համարձակուում եկեղեցական պսակին զիմել \*), հպատակներին իրաւունք է տրուում զիմել քաղաքացիական պսակին:

Այսպիսի հանգամանքներում միայն քաղաքացիական պսակի զիմելու իրաւունք ունենալը գոյութիւն է ունեցել Նիտերլանդիայում 1580 թ. սկսած. որ յետոյ ընդունել և Աւստրիական կայսրութեան մէջ: Իսկապէս զա առաջին քաղաքացիական պսակն էր, որ ընդունւեց պետական օրէքների միջոցով և որի հայրենիքն այդպիսով հանդիսացաւ Նիդերլանդիան: Այդ երկրում պարտադիր քաղաքացիական պսակն ընդունւեց մօտ 250 տարի յետոյ 1833 թ. լին:

Փրանսիայում Լուդովիկոս XVI-րդի ժամանակ XVIII դարում շատ կարճ ժամանակամիջոցում ընդունւեց Ֆակուլտատիւ քաղաքացիական պսակ, բայց վրա հասնող յեղափոխութիւնն ամեն բան տակն ու վրա անելուց յետոյ 1791 թ. սա համադրութեամբ պսակն հրատարակեց մի հասարակ քաղաքացիական դաշնադրութիւն: 1792 թ. օրէնքով պսակողները քաղաքային վարչութեան մէջ պիտի ընդունէին ամուսնութիւնն, այդ մասին որոշած ձևականութեան համաձայն: Սակայն դեռ սոքա

\*) Այդ դէպքում արգելքները կարող են լինել կամ այլ և այլ դաւանութիւնների պտականիլը պսակողների և կամ եկեղեցու անթոյլատրելի ատիճաններումն է կատարելու պսակը:

պարտադիր քաղաքացիական պսակներ չէին: Այդպիսի պսակն օրէնքով ընդունւեց Սեծն Նապօլէօնի քաղաքացիական օրէնքների ժողովածուով: Փրանսիայում այդ պսակը կատարուում է այդպէս. — Պսակող գոյգը, վկաների ընկերակցութեամբ գալիս են քաղաքացիական վարչութեան դահլիճը, լիս են քաղաքացիական վարչութեան պաշտօնեայի այդ մասին լսում պատշաճաւոր պաշտօնեայի այդ նոքա փոխկազմած արձանագրութիւնը և սպա նոքա փոխնեփոխ յայտարարում են այսպէս «ես յայտարարում եմ, որ ընդունում եմ ամուսնութիւն (անուն ամուսնու) հետ», որից յետոյ պաշտօնեան յայտնում է, որ պսակը կատարւած է:

Իտալիայում առաջին անգամ պարտադիր քաղաքացիական պսակն ընդունւեց 1806 թ. իսկ վերջնականապէս 1866 թ.

Այդ կողմից Անգլիան մի քանի անգամ թեր և դէմ օրէնադրական կարգեր է սահմանել: Այնտեղ ոչ պարտադիր պսակն ընդունելուց յետոյ, Կրոմվելի ժամանակ ընդունւեց պարտադիր քաղաքացիական պսակ, որ 1653 թ. տարածւեց և Շօտլանդիայի և Իւլանդիայի վրա: Ստիւարտների ժամանակ քաղաքացիական պարտադիր պսակն ինքն իրեն վերացաւ. սակայն դեռ մօտ 100 տարի եկեղեցական պարտադիր պսակն ընդունւած չէր օրէնքով, որ տեղի ունեցաւ 1753 թ. լին: 1856 թ. օրէնքով հաւասար կերպով օրինական ճանաչւեցին այն բոլոր պսակները, որ կը կատարէին եկեղեցիներում, աղօթատներում և պսակը կատարելու գործողութիւնն արձանագրող շրջանական պաշտօնեա-

ների զիւանատանը: Նօտլանդիայում ամուսնութիւնը կատարուում է և հաշտարար դատաւորի մօտ: Մի հին սովորութեամբ, այնտեղ ընդունւած է պսակը կատարել նաև ծածուկ, առանց վրկաների ներկայութեան, բացի պսակող քահանայից որի անունը նոյն իսկ կարող է անյայտ մնալ: Այդպիսի պսակից յետոյ պսակողները պարտաւոր են գնալ հաշտարար դատաւորի մօտ և յայտնել, որ իրենց պսակել է մի քահանայ և ապա այդ ձևի կատարել տւածը պսակի համար օրէնքով որոշած տուգանքը վճարելուց յետոյ, դատաւորն արձանագրում է պսակը և տալիս պսակի վկայական ըստ այդ արձանագրութեան: Այս ձևի պսակի մէջ, ճշմարիտ է, կարող է խաբեբայութիւն մտնել, սակայն ոչ Բրիտանիայում, ուր քաղաքացիական պարտաճանաչութիւնը և ազատ հիմնարկութեանց սրբութիւնը մարմին և արիւն է դառած:

Իռլանդիայում 1844 թ. ի վեր գոյութիւն ունին համահասար կերպով և քաղաքացիական և եկեղեցական պսակները: Քաղաքացիական պսակն ընդունված է Անգլիական բոլոր գաղութներում:

Տւածս տեղեկութիւնները շատ են համառօտագուցէ և սրկասներ կան, սակայն նախառակից դուրս էր քաղաքացիական ամուսնութեան մասին լրիւ ուսումնասիրութիւն տալ, այլ միայն համառօտակի գծագրել այդ պսակի էութիւնը, երբ ծագելն և ընթացքը քաղաքակիրթ երկրներում. ուրիշ ոչինչ:

Յ Ա Ի Ե Լ Ի Ա Ծ Ն Ե Ր

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ,  
ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ,

ԾՆՈՂՆԵՐԻ, ՈՐԴՈՅ ԵՒ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅ.  
ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐ.

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ.

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾԱԿԱՆ ԴԱՏԱԻԱՐՈՒԹԻՒՆ.

ԿԱԶՄԵՏ ԱՐՄԷՆ ՎԱՐԳԱՊԵՏ ՎԼԳՃԵԱՆ.

Ա. Լ. Բ. Ս. Ա. Ն. Գ. Բ. Ա. Պ. Ե. Լ.

Տպարան Յակովբ Ղառապեանցի.

1904

Дозволено Цензурою. 15 Апр, 1904 г. гор. Тифлисъ.

**Ա. ԹՈՒՍԱՅ ՊԵՏՈՒԹԵԼՆ ՕՐԷՆՔՆԵՐ.**

Քաղաածք X 6. I մասի յօդածներից

Գլուխ I. պրակ I. ամուսնանալու մասին.

2. Վանականներին, քահանայութեան և սար-  
աւագութեան կարգի ընդունածներին, քանի որ  
որա այդ աստիճանի մէջ են գտնուում, արգել-  
ուում է իսպառ ամուսնանալ, եկեղեցական սահ-  
մանադրութեանց համաձայն:

3. Արգելուում է արական սեռի պսակը տասն-  
ութ տարեկանից առաջ և իգական սեռի պսակը  
տասնվեց տարեկանից առաջ: Բայց անդրկողմասի  
միակներին թոյլ է տրուում փեսացուին տասն-  
հինգ և հարսին տասներեք տարեկան դառնա-  
լուց յետոյ:

Ծանոթութիւն. — Թեմական առաջնորդներին է  
թողնուում անհրաժեշտ դէպքերում ըստ իր հայեցո-  
ղութեան թոյլ տալ պսակ, երբ փեսացուն կամ հարս-  
նացուն այդ առթիւ որոշւած շափահասութեան  
տարիքից պակաս են ոչ աւելի քան կէս տարի:

4. Ութսունից աւել տարիք ունեցողին արգելու՞մ է պսակել:

5. Արգելու՞մ է խելագարների և ապուշների պսակը.

6. Արգելու՞մ է առանց թոյլատուլթեան ծնողների և խնամականների պսակել.

9. Թէ քաղաքացիական և թէ զինուորական ծառայութեանց մէջ գտնուած անձանց արգելու՞մ է պսակել առանց իրենց իշխանութեան թոյլատուլթեան, յայտնուած գրաւոր վկայութեամբ:

12. Պսակը չի կարող օրէնքով կատարուած լինել առանց պսակողների փոխադարձ և յօժարակամ համաձայնութեան. ըստ այսմ արգելու՞մ է ծնողներին իրենց որդոցը և խնամականներին իրենց հոգացողութեան տակ գտնուող երեխաներին ստիպամբ պսակել, հակառակ նրանց ցանկութեան:

19. Բանդարկեաների պսակների վերաբերեալ սահմանափակումը, որ պահուած են ուղղութեամբ րաժնու՞մ, նրանց այդ բաժիններում գտնուած ամբողջ ժամանակում, որոշու՞մ են հսկողութեան տակ գտնուողների մասին կանոնադրքով: Աքսորուածների ամուսնանալու մասին կանոնները գրեթէ ծաղրուած են Աքսորականների վերաբերեալ կանոնադրքում:

20. Արգելու՞մ է նախկին՝ օրէնքով չըլու՞ած պսակի գոյութիւն ունեցած ժամանակ, նորից ամուսնանալ:

23. ~~11/20/11~~ — 117 —

21. Արգելու՞մ է չորրորդ անգամ պսակել:

22. Կրկնակի և չորրորդ պսակների առաջնանելու համար որոշու՞մ է:

1) Վաճառականներին, քաղաքացուց և զինուորացուց, կամ առևտրի և կամ աշխատանքի պատահաւոր բացակայելու համար տրուած անցազրեաների մէջ նշանակել, ամուրի է թէ պսակուած, եթէ այլի է, քանի՛եքորդ պսակն է:

2) Փամանակաւոր կամ մշտական որ և է տեղ բնակութեան համար երկու սեռի անձանց տրուած անցազրեան և այլ վկայազրեան վրա քահանան պիտի իր ձեռքով նշանակէ թէ ո՞ւմ նկատ, և որ և որ եկեղեցու՞մ է կատարել պսակը: Այս նկատողութիւնների համեմատ, զինուորական և քաղաքական իշխանութիւններն անցազրեան փոխելու կամ նորոգելու ժամանակ, նշանակուած նրա մէջ այդ մարդու ամուսնական վիճակը, որին որ տրու՞մ է անցազրեան:

3) Զինուորների այրիներին պսակել եթէ արտապէս ցոյց կտան քահանային իրենց ամուսնու մահան վկայազրեան:

23. Արգելու՞մ է եկեղեցու թոյլ չու՞ած արևակցական և խնամիական չհասութեան աստիճանների պսակը:

24. Պսակների վերաբերեալ նախընթաց յօդուածների գրեթէ արգելքների խախտումը և վիճակը, որ կը ծագին ամուսնական գործերից, նախարկու՞մ են հոգևոր կամ մարմնաւոր դատաստան:

տանի, գատավարութեան օրէնքների մէջ նշանակած կանոնների համաձայն (Քաղ. Դատավ. կանոնագ. յօդ. 1337—1356. Քաղ. Դատ. Օր. յօդ.—440—457. Քր. Դատ. կան. յօդ.—1001—1003. 1012—116. Օր. Քր. Դատ. յօդ. 692—699.)

Պրակ II պսակների կատարելու մասին.

25. Պսակելի ցանկացողը պարտաւոր է իր ծխական բահանային յայտնել զբաւոր կամ բանաւոր իր կոչումն ու աստիճանը, անունը, հայրանունը և ազգանունը, նոյն տեղեկութիւնները նա և հարսնացուի մասին:

30. Քրէական օրէնքների առաջ. պատասխանատուութեան երկիւղով արգելուով է ստիպել բահանային պսակ կատարել՝ հակառակ վերելուով նշանակած, եկեղեցու կամ պետութեան կանոնների կամ արգելքների:

31. Օրինաւոր պսակը մասնաւոր մարդոց մէջ կատարուով է եկեղեցուով, պսակւողների ներկայութեամբ, զրա համար նշանակած օրերում և ժամանակում, երկու կամ երեք վկաների ներկայութեամբ...: Իւրաքանչիւր պսակ արձանագրուով է ծխական արձանագրական գրքի մէջ:

Պրակ III ամուսնական կապի ապացոյցի մասին.

34. Ամուսնական կապի զլխաւոր ապացոյցը ծխական արձանագրական մատեաններն են:

35. Այն ղէպըում, եթէ արձանագրութեանց մասին կասկած ծագի, կարող են ծառայել 1) խոստովանութեանց մատեանները. 2) արձանագրութեան զիւրը 3) քաղաքացիական վաւերաթղթերը, եթէ նրանցից կերևայ, որ անանւած ամուսինները, իբր այդպիսիներ—ամուսիններ են ճանաչուած եղել ատենական տեղերում, և անվիճելի կերպով օգտուել են քաղաքացիական իրաւունքներով և արտօնութիւններով, որ կախած են օրինական ամուսնութիւնից և 4) քննութեամբ:

36. Քննութիւնն իր մէջ պիտի պարունակի՝ եկեղեցու միաբանութեան վկայութիւնը, որ պրսակը կատարել է. պսակի վկաների և առասարակ պսակի ճշտապէս կատարուած լինելու մասին եղած վկաների ցուցմունքը: Բացի սրբադնագործ պաշտօնեաներից, պսակւողներից, որոց մասին որ է գործը և նրանց ծնողներից. բոլոր միւս վկաները ցուցմունքները տալիս են երդմամբ:

Պրակ IV պսակն անվաւեր ճանաչելու եւ լուծելու եւ դադարելու մասին.

1. Պսակը անվաւեր ճանաչելու մասին.

37. Օրինական և վաւերական չեն ճանաչուով 1) այն անձանց ամուսնութիւնը, որ կատարուել է բռնի կերպով և կամ պսակւողներից մէկի կամ երկուսի խելագարութեան ղէպըում. 2) այն անձանց ամուսնութիւնը, որ զտնւում են

մօտիկ, այսինքն եկեղեցու կանոններով արգել-  
 ւած արենակցական, հոգևոր ազգակցութեան  
 և խնամեական աստիճաններում. 3) այն անձանց  
 ամուսնութիւնը, որ արդէն գտնուում էին նախ-  
 քան այդ՝ իրենց եկեղեցական իշխանութեան  
 կողմից չլուծւած ամուսնական կապերի մէջ. 4)  
 այն անձանց ամուսնութիւնը, որոց նախկին ամուսնութիւնը լուծելուց յետոյ, արգելւել է ամուսնանալ նորից. 5) այն անձանց ամուսնութիւնը, որ եկեղեցու որոշած տարիքին չեն հասել, կամ ութսունից աւելի տարիք ունին և կամ չորրորդ անգամ են պսակւել. 6) կուսակրօնների, ինչպէս և բահանաների-և սարկաւազների պսակը, բանի զեռ գտնուում են այդ կոչման մէջ. 7) ուղղադաւանների ամուսնութիւնը ոչ բրիտանացիների հետ:

*Կրթութեան նախարար*

Մանօրութիւն. — Այս յօդուածի (37) 7-րդ կէտի կանոնը չի տարածւում այն զէպքերի վրա, երբ ամուսինները, երկուսը կամ մէկը ընդունել են ս. մրկրտութիւն ամուսնանալուց յետոյ: Այս զէպքերը ՚ի նկատ են առնում առանձին և հոգևոր իշխանութեան կողմից թոյլ են տրւում եկեղեցու կանոնների համեմատ:

*Սարգստ*

38. Այն անձինք, որոց պսակը պատշաճաւոր հոգևոր դատաստանով ճանաչւել է անվաւեր և ապօրինի, անմիջապէս, հոգևոր իշխանութեան տեղական քաղաքացիական իշխանութեան հետ բանակցելուց յետոյ, հեռացւում են իրար կենակ-

ցութիւնից: Դատաստանով յանցաւոր ճանաչւածները ապօրինի պսակի համար, ենթարկւում են եկեղեցական ապաշխարութեան, իսկ օրէնքով որոշւած մի բանի զէպքերում, նա և որոշ պատժի:

*Սարգստ*

39. Այն անձինք, որոց պսակը ճանաչւել է ապօրինի և անվաւեր, բացի նրանցից, որ դատաւարուած են անպսակ մնալու, իրաւունք ունին պսակւել ուրիշների հետ օրինասահման ձեով: Նրանք, որոնք բաժանւել են եկեղեցական չափահասութիւն շուներալու պատճառով, կարող են, եթէ քաղաքացիական չափահասութիւնից յետոյ կամենան շարունակել եղած ամուսնութիւնը. — այս զէպքում նրանց կապը նորից հաստատուում է եկեղեցում, այս մասին կարգւած ծիսակատարութեան համեմատ:

40. Կենակցութիւնից գատւած անձինք, որովհետև նրանց պսակը կապւած է եղել, օրինական ձեով չը լուծւած և չղաղարած ամուսնական կապի գոյութիւն ունեցած ժամանակը, կարող են շարունակել իրենց նախկին պսակով ամուսինների հետ կենակցութիւնը, եթէ դրան, իրենց թողած անձերը համաձայնին, բայց չեն կարող և այդ անձանց մահից յետոյ, մասնի որ և է նոր ամուսնութիւն:

41. Եթէ ընդ հակառակը, թողնւած անձը չուզենայ ամուսնացած հաշւել այն անձի հետ, որ իրեն թողնելով և նախկին պսակի գոյութիւն

ունեցած ժամանակ մտել է նոր ամուսնութեան մէջ, այն ժամանակ նա իրաւունք ունի խնդրելու իր թեմական իշխանութիւնից նոր ամուսնութեան թոյլտուութեան մասին, որն այս դէպքի նկատմամբ վարում է եկեղեցու կանոնների համաձայն: Պսակի գոյութիւն ունեցած ժամանակ, նորից ամուսնացող և ամուսնուն թողնող մեղաւոր ամուսինը, եթէ նախկին պսակով իր թողած ամուսնու համաձայնութիւնը չստանայ, ինչպէս և այդ մասին հոգևոր իշխանութեան թոյլտուութիւնը, դատապարտում է մշտական ամուրիութեան: Նոյն բանին է ենթարկում և այն ամուսինը, որ թողել է ամուսնուն և հինգ տարուց աւելի է ծածկում է անյայտութեան մէջ: Նոյնը չի վերաբերում գինւորական վարչութեան ստորին գինւորներին, որ հինգ տարուց էլ աւելի գտնւել է գերութեան մէջ կամ պատերազմում անյուր բացակայութեամբ. նրանց չի արգելում, վերադարձից յետոյ նորից ամուսնանալ, եթէ նրանց նախկին պսակն արդէն լուծւած է:

42. Նախկին պսակի գոյութիւն ունեցած ժամանակ, նոր ամուսնութեան մէջ մտնելու համար երբ երկու կողմերն էլ յանցաւոր են, վերջին պսակը լուծւելուց յետոյ, ճանաչում է նոցա նախկին պսակը, իսկ եթէ ամուսիններից մէկի մահով այդ պսակը դադարի գոյութիւն ունենալուց, կենդանի մնացած ամուսինն իրաւունք չունի խնդրել ոչ վերականգնել լուծւած

պսակը և ոչ էլ թոյլտուութիւն՝ նորից պսակելու:

II. Պսակի դադարելու մասին.

43. Պսակը դադարում է գոյութիւն ունենալուց ինքն իրեն՝ ամուսնու մահւամբ:

44. Ամուսիններից մէկի մահից յետոյ, կենդանի մնացած ամուսինն իրաւունք ունի նորից պսակել, եթէ օրինական արգելք չկայ:

III. Ամուսնալուծութեան մասին.

45. Ամուսնութիւնը կարող է լուծւել միայն հոգևոր դատարանով, ամուսիններից մէկի խնդրի համաձայն. 1) միւս ամուսնու ապացուցւած անհաւատարմութեան և ամուսնական կենակցութեան անընդունակութեան համար. 2) այն դէպքում՝ երբ միւս ամուսինը դատապարտւած է պատժի, որից հետևում է զստակարգային կոչման բոլոր իրաւունքների գրկումն, կամ արտոր գէպի Սիբիր, հանգերձ առանձին իրաւունքների և արտօնութիւնների գրկումով. 3) միւս ամուսնու անյուր բացակայութեան դէպքում:

46. Եւ ոչ մի դէպքում չի թոյլատրում պսակի լուծումն ամուսինների փոխադարձ համաձայնութեամբ միայն, ինքնակամ, առանց դատարանի: Հաւասարապէս չի թոյլ տրւում և այլ և այլ պարտաւորագրեր կամ գործողութիւններ ամուսինների մէջ, որ պարունակեն նրանց առանձին ազրելու պայմաններ, և կամ այնպիսի այլ բաներ, որ տրամադրում են ամուսինների

մէջ բաժանուան: Քաղաքացիական վարչութեան ատեաններն և անձինք չպէտք է հաստատին կամ վկայարանին այդ տեսակի ակտերը: Սրբազնագործ պաշտօնիաներին և դպիրներին նոյնպէս արգելում է, դատարանի երկիւղով և կարգի գրկումով, գրել ինչ և է ձեռով և ում և համար, արձակման թղթեր:

47. Մեղաւորի սեփական խոստովանութիւնն ամուսնական անկողնի սրբութեան խախտելու մասին յարգի չէ ընդունում, եթէ նա չի համաձայնի գործի հանգամանքներին և չի գնա զուլընթացաբար այդ բանը անկասկած կերպով հաստատող ապացոյցների հետ:

48. Ամուսիններից մէկի ամուսնական կենսկցութեան անընդունակութեան պատճառով ամուսնալուծութեան պահանջը կարող է միայն պսակը կատարելուց երեք տարի յետոյ սկսել:

49. Նախընթաց յօդւածի (48) մէջ բացատրւած պատճառի վրա չի կարելի այդ պահանջը հիմնել, եթէ ամուսիններից մէկի անընդունակութիւնը բնական չէ, կամ սկսել է արդէն պսակից յետոյ:

50. Եթէ ամուսիններից մէկը ենթարկւած է դատակարգային կոչման իրաւունքներից զրոււելու պատժին, այն ժամանակ միւս ամուսինը եթէ չցանկանայ կամովին հետեւի մեղադրածին, շարունակելու ամուսնական կենսկցութիւնը նրա հետ, կարող է, Պատժական Օրէնսգրքի 27-րդ

յօդւածի հիման վրա (1885 թ. հր.) խնդրել հոգեւոր վարչութեան պսակը լուծելու մասին և թոյլ տալ նորից ամուսնանալ:

52. Մեղադրւած ամուսնուն նրա համար նշանակած տեղը հետեւելու պատճառով իր գօրութեան մէջ մնացած պսակը կարող է, անմեղ ամուսնու խնդրանքով լուծւել, եթէ դատակարգային կոչման իրաւունքներից զրկւելու դատապարտւած ամուսինը նոր յանցանքի համար կենթարկւի ընտանեկան իրաւունքները բանդող դատավճռի: Այս հիման վրա կարող են ամուսնալուծութիւն խնդրել անմեղ ամուսիններից նորա, որոնք պրսակւած են արդէն դատակարգային կոչումից զուրկ անձանց հետ, եթէ այդ վերջինները կրննին նորից յանցանքի մէջ, որ կը հետեւցնէ դատակարգային կոչման բոլոր իրաւունքների գրկումն:

53. Արքորանքից Բարձրագոյն ոլորմածութեամբ վամ դատարանի նոր վճռով վերադարձածների կանայք, եթէ նրա ամբողջ ընթացքում, պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ պսակը բանդելու նրա կարգադրութիւններին չեն հետեւել, և նորա պսակի լուծումը չեն խնդրել, կարող են իրենց նախկին պսակով անբաժան մնալ: Նոյնն և ենթադրում է մարդոց մասին, որոնց կանայք դատարանի վճռով ենթարկւել են արքորի՝ կոչման բոլոր իրաւունքներից զրկւելու հետ միասին:

կան Խորհրդի բարձրագոյն հաստատուած կարծիքով, այս (53) յօդուածի մէջ ասուած կանոնի ազդեցութիւնը տարածուած է և այն անձանց կանանց վրա, որ արտօրի տեղ, զինուորական ծառայութեան են տրուած:

54. Եթէ ամուսիններից մէկը որ և է դէպքով բացակայում է իր բնակութեան տեղից և հինգ և ավելի տարիների ընթացքում կը գտնուի բոլորովին անլուր անյայտութեան մէջ, այն ժամանակ, մնացած ամուսնուն թոյլ է տրուում խնդրել իւր թեմական իշխանութեանը, լուծել պսակը և իրաւունք տալ նոր ամուսնութեան:

56. Ծառայութիւնից փախած, պատերազմի մէջ անլուր կորած, թշնամուց գերի վերցւած զինուորների կանանց թոյլ է տրուում, կորելու, փախչելու, և գերի ընկնելու օրից հինգ տարին անցնելուց յետոյ խնդրել լուծել պսակը, եթէ նրանք (ամուսինները) չեն գտնուած: Յիշուած կանայք հոգևոր իշխանութեանը տուած խնդրագրի հետ ներկայցնում են այն տեղերի քաղաքային կամ գաւառական ոստիկանական վարչութիւնների՝ ուր իրենց ամուսինը ծառայութեան է մտել, փախչելու, պատերազմի ժամանակ անյայտ կոչելու և թշնամուց գերի վերցւելու ժամանակի մասին վկայագրերն, ինչպէս և այն մասին, որ այդ անձինք չեն գտնուած: Այդ վկայականները տրուում են զօրքի առանձին մասերի գլխաւորների՝ ոստիկանական վարչութիւններին հասցրած տեղեկութիւնների հիման վրա:

57. Ամուսիններից մէկի անլուր բացակայելու դիպուածի համար ամուսնութիւնը լուծելու մասին տրուած խնդրի մէջ պէտք է ցոյց տրուի, երբ յատկապէս բացակայող կինը կամ մարդը հեռացել է իւր բնակութեան տեղից և արդեօք տրեւել է յայտագիր խնդիր այդ մասին. վերջին դէպքում նաև այդ խնդրի վաւերացրած պատճէնը կցել:

58. Երբ թեմական իշխանութիւնը խնդրատուի և բացակայողի պսակի իսկութիւնը չի կասկածում, այն ժամանակ զիմում է քաղաքային վարչութեանը, որ հոգևոր իշխանութեան պատգամաւորի ներկայութեամբ հարցնէ բացակայողի ազգականներին, ինչպէս տեղական նա և շրջակայքի բնակիչներին, չդիտեն արդեօք նոցանից և ոչ որ բացակայողի բնակութեան տեղի մասին, նրա մասին չէ եկել որ և է լուր, երբ է նա հեռացել, ինչպէս էր պահում իրեն և արդեօք խնդրատուն ինքը չէ տւել տեղիք նրան թողնելու վերաբերմամբ:

59. Եթէ անլուր բացակայող անձը իր կոչմամբ կարող է ապրել Ռուսաստանում ուր և կամենայ, նրա անյայտութեան ըննութիւնը (հետախուզութիւնը) այն ժամանակ միայն բաւարար կարող է ճանաչել, երբ բոլոր նահանգական վարչութիւններից խնդրուած տեղեկութիւնների համաձայն նրա բնակութեան տեղը չի բացւի:

60. Բացակայողի ուր գտնուելու տեղի մասին

ճշգրիտ լուր ստացելու դէպքում՝ գործը կարճ-  
ւում է. հակառակ դէպքում, թեմական իշխանու-  
թիւնը խնդրատուի պսակը լուծելու մասին որո-  
շումն է անում և թոյլ տալիս նրան նորից ար-  
մուսնանալ \*):

Գլուխ II. Այլապաւան քրիստոնեաների իւր մէջ եւ Ուղ-  
ղաբաւանների հետ պսակների մասին.

Պրակ I այդ պսակների մասին.

61. Առհասարակ Քրիստոնեայ բոլոր դաւա-  
նութիւնների անձինքներին չի արգելոււմ ամուս-  
նանալ իրենց դաւանութեան եկեղեցիների կա-  
նոնների և ծէսերի համաձայն, առանց այդ մա-  
սին քաղաքական իշխանութեան թոյլատու-  
թիւնը խնդրելու, բայց պահելով այն սահմանա-  
փակումները, որ օրէնսդրուել են այդ դաւանու-  
թիւնների համար:

62. Սրանից վերև առաջին դիտում՝ սահմա-  
նադրուած արգելքները, ինչպէս են 1) պսակել  
ստիպամբ, առանց փեսայի և հարսի համաձայ-  
նութեան և ամուսնանալ խելագարների և ապուշ-  
ների հետ, 2) ամուսնանալ առանց ծնողների,  
խնամակալների կամ հոգաբարձուների համա-  
ձայնութեան և առանց իր իշխանութեան թոյլ-  
տուութեան. 3) ամուսնանալ՝ նախկին պսակի գոյ-

\*) Ռուսաստանում Հայ-լուստորչական թեմական իշխանութիւն-  
ները պսակալուծութեան մասին իրենց որոշումներն ուղարկում են Ս.  
Էջմիածնի Սինոդի հայեցողութեանը:

ութիւն ունենալիս, տարածոււմ են բոլոր առ-  
հասարակ քրիստոնեայ դաւանութիւնների պսակ-  
ների վրա այն չափով, ինչպէս որ սորա օրինա-  
դրուած են այդ դաւանութիւնների համար:

63. Արական սեռի անձանց պսակը տասն  
և ութ տարեկանից սուաջ, իսկ կանանց սեռի  
պսակը նախքան տասն և վեց տարիքը հասնե-  
լու արգելքը տարածոււմ է այն անձանց վրա,  
որոնք պատկանում են Հռոմ-կաթոլիկ, Աւետա-  
րանական և Հայ-լուստորչական դաւանութեանը,  
ի բաց առեալ Անդրկովկասի բնիկներին, որոնց  
թոյլ է տրոււմ պսակել՝ փեսային տասն և հինգ  
և հարսին տասն և երեք տարիքը հասնելիս:

64. Առհասարակ բոլոր Քրիստոնեայ դաւա-  
նութիւնների մէջ արգելոււմ է կատարել պսակ-  
ներ այդ եկեղեցու չթոյլ տուած արեւակցական  
աստիճաններում, որին պատկանում են պսակուղ  
անձինք:

65. Առհասարակ բոլոր Քրիստոնեայ դաւա-  
նութեան անձանց պսակները պէտք է կատար-  
ւին այն եկեղեցու օրէնքով, որին պատկանում  
են պսակաւորները. բայց այս պսակները վաւե-  
րական կը հաշուին նաև այն ժամանակ եթէ  
այն տեղերում, ուր կատարուել են նորա, իրենց  
դաւանութեան բահանայ կամ պատուը չլինելու  
պատճառով, պսակը կատարէ ուղղափառ եկե-  
ղեցու բահանան, բայց այս դէպքում պսակների

կատարումն ու լուծումը կլինի ուղղափառ եկեղեցու կանոններով ու ծէսերով:

Ծանօթութիւն. — Խնդրի քննութիւնը, որ կը պահանջեն ղէպքերը, կատարել է արդեօք օտար զաւանութիւնների անձանց պսակները օրինապէս և նրա լուծելու պատճառների յարգելիութեան մասին որոշումները, կատարում են Քաղաքացիական Գաաւարութեան մասին Օրէնքների զրած կանոնների համաձայն:

66. Գիպլոմատիական ծառայութեան մէջ եղած աստիճանաւորների պսակներն օտարահպատակուհիների հետ, ոչ միայն զրա համար նորա պարտաւոր են նախապէս իրենց իշխանութեան թոյլտուութիւնը խնդրել, յայտնելով և այն մասին թէ ինչ կալածք է օժիտ ստանում և թէ օտար երկրներում չկան ՚ի նկատի ժառանգութեան իրաւունքներ, այլ և պիտի հարմնացուի ստորագրութիւնը ներկայացնի զրա հետ, այն բանի մասին, որ ամուսնացած լինելով զիպլոմատիական աստիճանաւորի հետ, նա պարտաւոր է ծախել օտար երկրներում ունեցած իր կալածքը, հակառակ ղէպքում, նրա ամուսինը պարտաւոր է իւր այդ տեսակի պաշտօնը թողնել:

67. Եթէ հարսը կամ փեսան պարտականում են ուղղափառ զաւանութեան, այս ղէպքում ամեն տեղ բացի Ֆինլանդիայից պահանջում են 1) որ ուրիշ զաւանութեան անձինք որոնք ամուսնանում են ուղղափառների հետ, ստորագրութիւն

տան, թէ իրենց ամուսիններին ուղղափառ լինելու համար չեն նախատի. գրաւանքներով և այլ կերպով նրանց չեն տրամադրի իրենց հաւատն ընդունելու և որ այդ ամուսնութիւնից ետ զած որդիքը մկրտելու են և կըլծելու ուղղափառ զաւանութեան կանոնների համաձայն. այս ստորագրութիւնը, որ քահանան... վերցնում է պսակը կատարելուց առաջ, պսակից յետոյ ներկայացնում է թեմական առաջնորդին... 3) որ այդ պսակները կատարին ուղղափառ քահանայի ձեռքով և եկեղեցում...:

76. Ամուսինների մէջ որ և է նախընթաց ամուսնական կապի քակտումն տրամադրող քրմահաճ գործողութեան արգելիլը տարածում է բոլոր առ հասարակ Քրիստոնեայ զաւանութիւնների վրա, չհաշւելով և նրանց, որոնք պրսակն ընդունում են իբր քաղաքացիական մի կապ...:

77. Պատերազմական զերինների հայրենիք գնալու արձակուրդին, որոնք իրենց Ռուսաստանում գտնելու ժամանակ ամուսնացել են Ռուսահպատակ ուղղափառուհիների հետ, պահանջում է նրանցից ստորագրութիւն, թէ վերադառնալով են արդեօք նորից իրենց կանանց մօտ. և եթէ նրանց բացակայութիւնը երկու տարուց աւել տեի, այն ժամանակ կանայք ստանում են ազատութիւն նորից պսակելու:

Գլուխ III. պրակ I. նոր մկրտածների պսակների մասին.

79. Ոչ բրիստոնեայ դաւանութեան անձր մկրտելուց յետոյ կարող է իր նախկին, չմկրտած կնոջ հետ ամուսնական կապը պահել. նրանց նախկին պսակն իր զօրութիւնը պահում է...:

82. Եթէ նոր մկրտածն ունէր առաջ մի բանի կին, ս. մկրտութիւն ընդունելով նա պարտաւոր է նրանցից մէկին ընտրել, որի հետ որ կը ցանկայ տպրել, առաւելապէս բրիստոնէութիւն ընդունածին, և այն ժամանակ նրանց պսակը կօրհնուի եկեղեցական կարգի համաձայն: Այս կանոնը տարածուում է և այն կանանց վրա, որ մի բանի մարդկանց կին են եղել:

83. Եթէ կանանցից և ոչ մէկը չի ցանկանում (յօդ, 83) և ամուսինը համաձայնութիւն չի յատնի ապրել չմկրտածի հետ, այն ժամանակ նրան թոյլ է տրուում ամուսնանալ նորից ուղղափառի հետ \*):

84. Պսակն իր ուժը պահպանում է այն ժամանակ, երբ երկու ամուսինն էլ ընդունում են բրիստոնէութիւն, թէև եթէ նոյն իսկ նա կատարած լինի եկեղեցու արգելած ազգակցական աստիճաններում:

Գլուխ IV. ամուսնութիւնից առաջացած իրաւունքների և պարտաւորութիւնների մասին.

Պրակ I. անձնական իրաւունքի մասին.

100. Ամուսինը հաղորդում է կնոջը, եթէ

\*) Եթէ նա ընդունել է բրիստոնէութիւն, այլ դաւանութիւն, ազգայ հետ ևս կարող է ամուսնանալ. Ծ. է. Խ.

նա ծագումով աւելի ստոր աստիճանից է, այն բոլոր իրաւունքներն ու արտօնութիւնները, որ կապած են իր դասակարգի աստիճանի և կոչման հետ:

101. Կինը մարդու կոչումով (ազգանւամբ) է անւանուում, և այդ իրաւունքը չի կորցնում և այն ժամանակ, երբ նա յանցանքի համար զբերւում է դասակարգային կոչման իրաւունքներից:

102. Կանանց սեռի անձինը, որ ամուսնանում են այնպիսի մարդոց հետ, որ Ռուսահպատակ են և ոչ էլ ծառայութեան մէջ են գտնուում (ինչ դաւանութեան էլ լինին այդ ամուսինները, Ուղղադաւան թէ օտարադաւան) հետևում են ամուսնու բնակութեան տեղին և դասակարգին:

103. Ամուսինները պարտաւոր են միասին ապրել: Ըստ այսմ, 1) խստիւ արգելւում են այնպիսի գործողութիւններ, որ տրամադրում են ամուսինների ինքնակամ բաժանումն. 2) զաղթելիս, ծառայութեան մտնելիս կամ մարդու մրջտական բնակութեան տեղի այլ փոփոխութեան ժամանակ կինը պարտաւոր է հետեւել ամուսնուն:

106. Մարդը պարտաւոր է իր կնոջը սիրել, ինչպէս իր անձը, նրա հետ հաշտ ապրել, յարգել, պաշտպանել, ներել նրա պակասութիւնները և թեթեւացնել նրա թուլութիւնը: Նա պարտաւոր է իր կարողութեան և հնարաւորութեան չափով կերակրել և պահել նրան:

107. Կինը պարտաւոր է հնազանդել իր ա-

մուսնուն, իբր ընտանիքի գլխի, լինել զէպի նա սիրով, պատուով և անսահման հնազանդութեամբ, ցոյց տալ նրան ամենատեսակ կամակատարութիւն և նուիրել նրան ինչպէս տան տիրունսի:

Պրակ II. Ստացւածքի իրաւունքի մասին.

109. Ամուսնութիւնով մարդու և կնոջ կարողութեան մէջ ընդհանուր տիրապետութիւն չի առաջ գալիս. նրանցից իւրաքանչիւրը կարող է ունենալ և նորից ձեռք բերել իր համար առանձին ստացւածք:

110. Կնոջ օժիտը, ինչպէս և կայքը որ նա կամ մէկը նրա անունով, նրա ամուսնացած ժամանակը՝ ձեռք է բերել գնմամբ, ընծայաբերութեամբ, ժառանգութեամբ կամ այլ օրինական միջոցով, ընդունուում է իբր նրա առանձին սեփականութիւն:

114. Թոյլ է տրուում ամուսիններին, ծախել, գրաւ դնել, և այլ կերպ կարգաւորել իր կալւածքը, ուղղակի իւր անունով, անկախ միմեանցից և զրա համար չխնդրելով փոխադարձաբար ոչ թոյլատուութիւն և ոչ հաւատարմութեք:

115. Արգելուում է մարդուն վարել կնոջ և կնոջը ամուսնու կայքի հետ, ոչ այլ կերպի քան օրէնքով պահանջւած այդ մասին հաւատարմութեով:

Յաժին II. Գլ. I. պրակ I. Օրինաւոր օրդոց մասին.

119. Բոլոր օրդիր, որ ծնել են օրինաւոր ամուսնութիւնից, ճանաչուում են օրինաւոր, թէկուզ ծնած լինին նորա. 1) բնական կարգով, պսակից առաջ, եթէ միայն հայրը չի ժխտի նրանց օրինաւոր ծնունդ լինելը. 2) ամուսնութիւնը կարճելու կամ լուծելու զէպրում, եթէ միայն հօր մահւան կամ ամուսնալուծութեան օրից մինչի երեխի ծնած օրը անցելէ ոչ աւելի, քան երեք հարիւր և վեց օր:

120. Դատարանի առաջ ծնունդի օրինաւորութիւնը ճանաչելու (ընդունելու) համար հարկաւոր է ապացուցանել, նախ պսակի վաւերականութիւնը և օրինաւորութիւնը, ապացուցողը ումից է ծնել. երկրորդ, ծնունդը՝ այս ամուսնութիւնից:

125. Այն անձի համար, որ ծնել է օրինաւոր ամուսնութիւնից, բայց բնական սովորական կարգից խիստ շուտ, այսինքն պսակի կատարելուց յետոյ հարիւր ութսուն օրից առաջ, իբր ապացոյց, որ հայրը չի ժխտել այդ ծննդի օրինաւորութիւնը, ընդունուում է հօր ցուցմունքը կամ գրութիւնը, կամ վկայական, որ նա վարել է նրա հետ ինչպէս իր օրդու կամ աղջկայ հետ, և ըստ այդմ հոգ է տարել նրա պահպանութեան և կրթութեան մասին. և որ այս անձը առանց ընդիմախօսութեան միշտ օգտուել է այն մարդու ազգանունով, որին նա հայր է անւանում:

131. Այն անձի օրինաւորութիւնը, որ ծնել է ամուսնութեան կարճելուց կամ ամուսնութիւնը լուծելուց յետոյ սահմանուած երեքհարիւր վեց օրից անց, կարող են վիճել բոլոր նրանք, որոնց անձնական կամ ստացւածքային իրաւունքները խախտուել են, նրա ծնունդը օրինաւոր ընդունելու պատճառով, բայց ոչ ուշ քան այդ երեխի ծնելու օրից վեց ամիս անցնելը:

Պրակ II. ապօրինի երեխայոց մասին:

132. Ապօրինի երեխայքն են. 1) որ ծնել են ամուսնութիւնից դուրս, բայց սահմարագրուած կարգով չեն օրինաւորել. 2) սիրային յարաբերութիւնից ծնած. 3) ծնել է մօր ամուսնու մահից կամ ամուսնալուծութիւնից յետոյ, եթէ նրա ամուսնու մահան կամ ամուսնալուծութեան օրուանից մինչի երեխի ծնունդը անցել է երեք հարիւր վեց օրից ակելի. 4) ամուսնութեան ժամանակ այն ծնածները, որ պատշաճաւոր դատարանի վճռով են ընդունուել ապօրինի և անվաւեր:

134. Երբ լուծուել է ամուսնութիւնը, ամուսնու ամուսնական կենսակցութեան անընդունակութեան պատճառով, որ ապացուցուել է պատշաճաւոր կերպով, այն ժամանակ պսակի գոյութիւն ունեցած ժամանակ ծնած երեխաները նոյնպէս ճանաչուում են ապօրինի:

135. Մօր անհաւատարմութեան պատճառով լուծուած պսակից ծնած երեխաները ընդուն-

ւում են օրինաւոր, եթէ սրանց ծնունդը նախքան պսակի լուծումը չէ թագցրւած եղել մարգուց և եթէ նրանց ապօրինութեան այլ ապացոյցներ չկան:

136. Ապօրինի որդիքը, թէպէտ և նորա կրթւած-մեծացրւած լինին այն անձինքներից, որոնց նրանք ծնողներ են անւանուում, չունին իրաւունք հօր ազգանունը կրելու և ոչ էլ նրա կամ մօր մահւանից յետոյ ստացւածքի օրինաւոր ժառանգութեան:

137. Այն անձը, որ անվաւեր ամուսնութիւնից է ծնել, թէ և Արքայական ողորմածութեամբ նրան տրւած լինի հայրական կալւածքի մէջ որ և է մաս իբր բաժին, ձեռք չի բերում միւս ազգականներից յետոյ ժառանգելու իրաւունքներ:

144. Բոլոր պահւած տղայք և ապօրինի ծնունդները, որ հաշուել են օրինաւոր երեխաների հաշւին Բարձրագոյն առանձին հրամանագրով, օգտուում են անխախտելի կերպով այն իրաւունքներով և արտօնութիւններով, որ այդ հրամանագրերով են նրանց տրւած:

144<sup>1</sup> Քրիստոնեայ ազգաբնակութեան համար հետևեալ կանոններն են դրւած օրինաւորուած երեխաների համար:

1) Այն որդիքը, որ ծնել են ամուսնութիւնից դուրս, բացի անառակութիւնից առաջացածները (յօդ. 132. կ. 2.) օրինաւորուում են նրանց ծնողների պսակով:

2) Որդոց օրինաւորելու մասին դատարանի որոշումը (1. կ.) անուամբ է կանոնների համաձայն, որ գծագրւած է Քաղաքացիական դատավարութեան կանոնագրքի 1460<sup>1</sup> — 1460<sup>2</sup> յօդւածներում:

3) Օրինաւորւած որդիք հաշւում են օրինաւոր այն օրւանից երբ ծնողները պսակել են և օգտուամ են այդ օրւանից այդ ամուսնութիւնից ծնւած, օրինաւոր որդիների իրաւունքներով:

4) Ծնողների պսակը ապօրինի և անվաւեր ճանաչելու դէպքում, նաև նրա լուծելու դէպքում, այդ պսակով օրինաւորւած երեխաների իրաւունքները որոշում են այն հիմունքներով, ինչպէս և ամուսնութեան մէջ ծնած երեխաների իրաւունքները:

Պրակ III որդեգրւած երեխաների մասին.

145. Ամենատեսակ կոչման անձանց, առանց սեռի խտրութեան, (բացի նոցանից, որ իրենց կարգով կուսակրօնութեան են նւիրւած), եթէ նորա օրինաւոր կամ օրինաւորւած որդիք չունին, թոյլատրւում է հետեւալ (146 — 156, 156<sup>1</sup> — 157<sup>2</sup>) յօդւածների հիման վրայ որդեգրել խնամք տարած, վերցրած երեխաներին և օտարների որդոց:

146. Որդեգրողը երեսուն տարիքից պակաս չպիտի լինի, պիտի որդեգրւածից առնուազն

տասն և ութ տարի մեծ լինի և ունենայ ընդհանուր քաղաքացիական իրաւունքներ:

147. Ոչ ոք երկու անձից չի կարող որդեգրել, բացի մի գոյգ ամուսիններից:

148. Ոչ քրիստոնեաներին քրիստոնեաներ որդեգրելը և քրիստոնեաներին ոչ քրիստոնեաներ որդեգրելն արգելւում է:

149. Որդեգրելու համար հարկաւոր է որդեգրողի ծնողների կամ խնամակալների և հոգաբարձուների և նոյնպէս որդեգրողի իրեն համաձայնութիւնը, եթէ նա հասել է տասն չորս տարեկան հասակի:

150. Ամուսիններից մէկի որդեգիր վերցնելու դէպքում պահանջւում է միւս ամուսնու համաձայնութիւնը:

151. Սրբազնագործ պաշտօնեաների և եկեղեցական դպիրների (կիսասարկաւագների, ժամհարների, սաղմոսասացների) որդեգիր վերցնելը թոյլատրւում է թեմական իշխանութեան որոշմամբ միայն:

152. Որդեգրողը կարող է որդեգրւածին տալ իր ազգանունը, եթէ նա համեմատաբար աւելի բարձր գասակարգային կոչման իրաւունքներով չի օգտուում՝ քան իր որդեգրողը: Որդեգրւածներին տոհմական ազնւականութեան ազգանուններ տալը կարող է տեղի ունենալ Բարձրագոյն հաճութեամբ, որ խնդրւում է որդեգրելուց յետոյ, այն կարգով և պայմանների գոյութեամբ, որ

ցոյց են տրւած Դասակարգային կոչման Օրէնքներում (հրատ. 1876. յօդ. 324 յաւել.): Զամուսնացած կանանց սեռի անձինք, որդեգրւածներին իրենց ազգանունը տալու համար, իրենց ծնողների կենդանութեան ժամանակ, պարտաւոր են նրանց համաձայնութիւնը խնդրել:

153. Ազնւականների և տոհմական պատւաւոր քաղաքացիների որդեգրւածները, որ ունին դասակարգային կոչման աւելի քիչ իրաւունքներ, որդեգրելով ձեռք են բերում անձնական պատւաւոր քաղաքացիութիւն:

154. Բոլոր ղէպերում, բացի վերևի 153 յօդ. մէջ յիշւածներից, որդեգրւածը մինչի որդեգրելն իրեն պատկանած դասակարգային կոչման իրաւունքների տէրն է (պահպանում է):

155. Քաղաքացիների և գիւղացիների որդեգրելը կատարում է որդեգրւածներին նրանց ընտանեական ցանկի մէջ անցնելով, պահպանելով 146 - 150, 152, 154 և 156<sup>1</sup> — 156<sup>7</sup> յօդւածների կանոնների մէջ ասւածները:

156. Վաճառականների որդեգրւածներին թոյլ է տրւում անցկացնել վաճառականական վկայագրերի մէջ որդեգրողի որդոց հետ հաւասարապէս:

156<sup>1</sup> Որդեգրւողը, որդեգրողի վերաբերմամբ օրինաւոր որդոց բոլոր իրաւունքներն ու պարտաւորութիւններն է ընդունում, որ ցոյց են տրւած 164 — 195 յօդւածներում, և ձեռք է

բերում որդեգրողի բարւոր ձեռք բերած կարողութեան ժառանգութեան իրաւունքն, այն պայմանով միայն, որ որդեգրողի, որ ըստիւր որդիք չունի, ժառանգելի կալւածքը բաժանւի նրա աղջիկների (եթէ միայն ունի) և որդեգրւողի մէջ հաւասար կերպով:

156<sup>2</sup> Որդեգրւելը, որդեգրւողին իրաւունք չի տալիս, որդեգրողի ծառայութեան համար, թոշակ և միանազ նպաստ ստանալու:

156<sup>3</sup> Որդեգրւածը որդեգրողի ազգականներին ժառանգելուն մասնակցում է այն ժամանակ, երբ դրա համար օրինական ազգականութեան պատճառով միայն իրաւունք ունի:

156<sup>4</sup> Որդեգրւողի ստորագիծ ժառանգները, նրա տեղը բռնում են ժառանգելիս՝ ներկայացուցչութեան իրաւունքով:

156<sup>5</sup> Որդեգրւողն առանց ժառանգի մեռնելու ղէպում, նրա բարւոր ձեռք բերած կայքը 1141 յօդւածում գծագրւած կանոնի համաձայն անցնում է որդեգրողին, բայց այն կայքը, որ ընծայաբերել են որդեգրողին նրա հայրը կամ որդեգրողը, վերադարձնում է առաջին կամ վերջինին, նայելով թէ, որից է ստացւած (1142 յօդ.):

156<sup>6</sup> Գիւղացիների որդեգրւածների ստացւածքային իրաւունքները որոշւած են համաձայն կանոնների, որ գծագրւած են Դասակարգային կոչման Օրէնքների (հրատ. 1876 թ.) Առանձին Ցաւելւածի մէջ:

157. Քաղաքացիների և գիւղացիների ընտանիքներին գրելը պէտք է քաղաքային և գիւղական համայնքների գիտութեամբ արւի, բայց այդպէս գրելու համար նրանց համաձայնութիւնը չի պահանջում:

160. Բոլոր վարչութիւնների ստորին կարգի գիւնդականներին թուլատրում է երեխաներ որդեգրել ոչ այլ կերպ, քան պատշաճաւոր իշխանութեան վճռով:

I ծնողների իրաւունքները:

164. Ծնողի իշխանութիւնը տարածւում է երկու սեռի և ամեն հասակի որդոց վրա, օրէնքով այդ մասին որոշւած սահմաններում և տարբերութեամբ:

165. Ծնողները, անհնազանդ և անբարհաւած որդոց ուղղելու համար, իրաւունք ունին գործ դնել տնային ուղղիչ միջոցներ: Այդ միջոցների ապարդիւն լինելու դէպքում, ծնողներն իշխանութիւն ունին, 1) երկու սեռի որդոց, որ պետական ծառայութեան մէջ չեն գտնւում, ծնողական իշխանութեանը յամառապէս չհնազանդելու համար, անբարոյական կեանքի և այլ յայտնի արատների համար, դնել բանդ, պատժական օրէնքի (1885 թ. հր.) 1592 յօդւածի որոշւած կանոնների համաձայն. 2) բողոքել նրանց դէմ գատաստանական հիմնարկութիւններին:

166. Որդիների ծնողներին անպատելու

գործերի մէջ գործադրւում են այն կանոնները, որ գծազրւած են դատավարական օրէնքների մէջ:

168. Երեխաների կողմից, նրանց հասած անձնական վիրաւորանքների համար ծնողների դէմ որ և է քաղաքացիական կամ քրէական պահանջ թույլատրելի չի: Բայց այս կանոնը չի տարածւում այն դէպքերի վրայ, երբ ծնողները, յանձին իրենց որդոց, այնպիսի գործողութիւններ են թույլ տալիս, որոնք ընդհանուր օրէնքներով ենթակայ են քրէական պատժի. այս դէպքում, տեղական իշխանութիւնները, հասցնելով հարկաւոր պաշտպանութիւն նեղեալներին, գործի բննութեան և մեղաւորներին դատի ենթարկելու ժամանակ գործում են քրէական օրէնքների համաձայն:

169. Ծնողները չեն կարող հարկադրել իրենց որդոց կատարել ապօրինի գործողութիւններ կամ մասնակցել նրանց. որդիք այսպիսի դէպքում ազատւում են նրանց հնազանդելու պարտականութիւնից, հակառակ իրենց խղճի, յատկապէս նրանում, ինչ որ պահանջում է նրանց սեփական գատողութիւնը և կամքը:

170. Ծնողները որդոց կեանքի վրա իրաւունք չունին, և սպաննելու համար դատուում և պատժւում են քրէական օրէնքներով:

II ծնողների պարտաւորութիւնները:

172. Ծնողները պարտաւոր են անչափահաս

որդոցը տալ սնունդ, հագուստ և դաստիարակութիւն, բարի և պատուաւոր ըստ իր կոչման:

173. Ծնողները պարտաւոր են ուշադրութիւն դարձնել որդոց բարոյական կրթութեան վրա և աշխատել տնային դաստիարակութեամբ պատրաստել նրանց բարքերը և աջակցել տէրութեան նպատակներին: Ծնողների կամքին է թողնում դաստիարակել իրանց որդոցը տանը կամ տալ նրան հասարակական հիմնարկութիւններ՝ պետութեան կամ մասնաւոր մարդկանց հիմնած:

174. Որդոց որոշ հասակ հասնելուց ետ, ծնողները հոգս են տանում տղայոց տալ ծառայութեան կամ աշխատանքի և աղջկերանց մարդու տալու:

175. Անչափահաս որոց անձնական վերաւորանք հասցնելու դէպքում, ծնողներն իրաւունք ունին միջամտել նրանց տեղ և օրինասահման կարգով պահանջներ անել:

III Որդոց պարտականութեան մասին:

177. Որդիք պարտաւոր են ցոյց տալ ծնողներին անկեղծ սրտով յարգանք, խոնարհութիւն, սէր և հնազանդութիւն. իրօք ծառայել նրանց, նրանց մասին խօսել յարգանքով, և ծնողների խրատներն ու ուղղութեան հրաւիրելը տանել համբերութեամբ և առանց տրտունջի: Որդոց յարգանքը դէպի ծնողաց յիշատակը պէտք է շարունակի և ծնողների մահուանից յետոյ:

IV. Ծնողական անձնական իշխանութեան դադարումը:

178. Ծնողական անձնական իշխանութիւնը մահւամբ է միայն դադարում, կամ դասակարգային կոչման իրաւունքի զրկումով, երբ վերջին դէպքում որդիք չեն հետեւում ծնողներին դէպի արսոր:

179. Ծնողական անձնական իշխանութիւնը չի դադարում, բայց սահմանափակում է. 1) որդոց հասարակական դպրոց մտնելով, որի վարչութիւնը նրանց կրթութեան վերաբերմամբ անցնում է ծնողների տեղը. 2) որդոց ծառայութեան տալով, երբ մտնելով նոր յարաբերութեան մէջ և նոր պարտաւորութիւններ ստանալով նրանց միջոցով, նորա չեն կարող արդէն նախկին՝ ծնողներից անմիջական կախման մէջ մնալ. 3) աղջկերանց ամուսնանալով, բանի որ մի անձը երկու անսահմանափակ իշխանութեանց, ինչպէս են ծնողական և ամուսնական, բաւարարութիւն տալ անկարող է, և աղջիկը, թողնելով իր տունը և միանալով ամուսնուն, չի կարող ծնողների հնազանդութեանը ենթարկւել այն չափով, ինչպէս նրանց մօտ մնացած ուրիշ որդիքը:

Պրակ II.— Ծնողների իշխանութիւնը կայքի վրա:

180. Որդոց անչափահասութեան ժամանակ, ծնողները կառավարում են որդոց իրենց պատկանած կայքը. խնամակալական իրաւունքով, հետեւեալ բաժնում զբաւած կանոնների համաձայն:

181. Չափահաս որդոց վրա ծնողական իշխանութեան ազդեցութիւնը, նրանց կայրի վերաբերմամբ, տարբեր կերպով է սահմանուած օրէնքով, համաձայն դասակարգային կոչման՝ անբաժան և բաժանուած որդուց:

I. Անբաժան որդոց մասին:

182. Անբաժան որդիք իսկապէս կոչուում են նորա, որոնց՝ հայրական կալւածքից դեռ ոչ մի մասն չէ բաժին հանուած:

183. Անբաժան որդիք չեն կարող ծնողական, կամ սպասելիք ժառանգութեան այլ կալւածքներ ոչ ծախել, ոչ գրաւ դնել:

184. Անբաժան որդոց փոխառութեան թրղթերով և առհասարակ ամենատեսակ պարտքերի ակտերով պահանջներին ծնողները պատասխանատու չեն, եթէ այդ թղթերն ու ակտերը տրուած են առանց նրանց համաձայնութեան և լիազօրութեան:

185. Ծնողների համաձայնութիւնը (10դ. 184) վկայուում է կամ նոցա ինքնագիր ստորագրութեամբ ակտերի վրա, և կամ անգրագէտ լինելու դէպքում, օրինական ձևով կատարուած հատարման թղթով:

186. Ծնողների և կամ իրենց անբաժան որդոց բացակայութեան ժամանակ, նոցա զրամային փոխառութեամբ պարտաւորելու իրաւունքը հաստատուում է ծնողների թոյլտուութեան՝

պատշաճաւոր կարգով վկայաբանուած թղթերով. այդ թղթերի մէջ պէտք է նշանակել այն գումարը, մինչի որը կարող է տարածուել վարկը:

187. Այդպիսի թոյլտուութեան հիման վրա անբաժան որդոց կատարած պարտաւորագրերին պատասխանատու են հայրերն իրենց կալւածքով, ճիշտ այնպէս, ինչպէս թէ դորա տուած են իսկապէս իրանք անձամբ:

188. Անբաժան որդոց կատարած բոլոր ակտերն ու հաստատութեան թղթերը, առանց ծրնողների թոյլտուութեան և համաձայնութեան՝ վերոյիշեալ կերպով հաստատուած, ծնողների նկատմամբ ճանաչուում են անվաւեր. բայց երեխաները, որ տւել են այդպիսի պարտաւորագրեր, եթէ նորա այդ ժամանակ արդէն եղել են չափահաս, պատասխանատու են նրանցով ապագայում ձեռք բերելու կամ ժառանգութեամբ իրեն հասնող ամբողջ կայրով:

189. Առևտրական դասակարգի մարդոց անբաժան որդիքը, առևտրական գործերում կարող են վարուել ոչ այլ կերպ, բան այն կանոնների հիման վրա, որ գծագրուած են առևտրի և ուրիշ աշխատանքների մասին Մարսային Օրէնագրքում:

II. Բաժանուած որդոց մասին:

190. Որդիք ծնողներից բաժանուած են ճանաչուում, երբ նրանց բաժին հանուած կլինի հայ-

րական կալածքից օրինական կամ որ և է այլ մասը:

190. Չափահաս դառած ժամանակ, որդիքը կառավարում և կարգադրում են իրենց բաժին հանած կայքն անկախ. նորա կարող են ծախել կամ գրաւ դնել նրան ըստ իրենց սեփական հայեցողութեան, չպարտաւորելով այդ մասին ծնողների համաձայնութիւնը կամ թոյլատու-  
թիւնը հարցնելու:

192. Անբաժան որդոցից նորա, որոնք կրտսանան կամ ձեռք կը բերեն իրենք իրենց մասնաւոր սեփականութիւն, նոցա կառավարելու և կարգադրելու նկատմամբ օգտուում են բաժանւած որդոց հետ միևնոյն տեսակ իրաւունքներով, ընդհանուր օրէնքների հիման վրա: Այս կանոնի սահմանափակումը, առևտրական դասակարգի վերաբերմամբ, նշանակւած են Առևտրական Դատավարութեան Օրէնսգրքի մէջ (հր. 1887 թ. յօդ. 556. 557):

193. Ծնողներն իրաւունք չունին իրենց (բաժան կամ անբաժան) որդոց բաժին հանւած կամ մասնաւոր սեփականութեան վրա, և չեն կարող կարգադրել նրանց ոչ այլ կերպ, քան նոցա սեփականատէրերի համաձայնութեամբ կամ լիազօրութեամբ, հակառակ դէպքում պատասխանատու լինելով իրենց պատճառով եղած վնասի համար՝ կողմնակի մարդոց հետ հաւասար կերպով:

194. Որդիք յամենայն դէպս պարտաւոր են,

թէկուզ նորա լինին ծնողներից բոլորովին բաժանւած, եթէ նորա գտնուում են ազբատութեան, ծերութեան և անկարութեան մէջ, հասցնել նոցա սնունդ և ապրուստ մինչի նոցա մահը:

195. Վէճերը և պահանջները ծնողների և որդոց մէջ կայքի վերաբերմամբ նայուում և վրձուում են դատաստանական հիմնարկութիւնների մէջ, քաղաքացիական դատավարութեան օրէնքների մէջ գծազրւած կանոնների համաձայն:

Գլուխ II. Ազգակցական կապի մասին:

196. Ազգը (ծնունդը) ընտանիքի բոլոր անդամների արական և իգական սեռի միջի կապն է, որ մի ընդհանուր ցեղազոյսից են առաջ եկել, թէկուզ և ոչ բոլորը նոցանից կրեն, նորա անունը կամ կոչումը:

197. Ազգականութեան մօտիկութիւնը որոշուում է գծերով և աստիճաններով:

198. Ծննդեան միջոցով մի անձի կապը միւսի հետ կազմում է աստիճանը, իսկ աստիճանների կապը, որ առանց ընդմիջւելու շարունակուում է, կազմում է գիծը:

199. Աստիճանը, որից ծագում են երկու կամ աւելի գծեր, նրա վերաբերմամբ կոչուում է սերունդ, իսկ այդ գծերը իրենց սերնդի նկատմամբ ճիւղեր կամ սերունդներ:

200. Գծերն երեք տեսակ են, ցածրնիթաց, վերելակ և կողմնակի:

201. Յածընթաց գիծը կազմուում է տրւած անձից նրա որդուն, թուանը, և այլն ղէպի նրա ապագայ սերունդը տարածուող աստիճաններից կամ ծնունդներից:

202. Վերելակ գիծը կազմուում է տրւած անձից ղէպի նրա հայրը, պապը և այլն ղէպի նրա նախահայրերը գնացող աստիճաններից:

203. Վերելակ և ցածընթաց գծերի մէջ հաշուում են այնքան աստիճաններ, որքան ծընունդ կայ: Ըստ այսմ, ցածընթացում որդին բռնում է առաջին աստիճանը, թուը երկրորդ, թուընորդին երրորդ և այլն. վերելակ գծում առաջին աստիճանը բռնում է հայրը, երկրորդը պապը, երրորդը պապի հայրը և այլն:

204. Կողմնակի գծի աստիճանը հաւասարապէս հաշուում են ծնունդով, սկսելով տւած անձից և վեր ելնելով ուղիղ գծով ղէպի ընդհանուր ազգապետը, իսկ նրանցից անցնելով ցածընթաց գծով ղէպի այն ազգականը, որի ազգակցութեան աստիճանը որ փնդուում է: Ըստ այսմ երկու հարազատ եղբայրներ գտնուում են եկրորդ աստիճանում, հօրեղբայրն ու եղբօր որդին երրորդ աստիճանում, երկու եղբօր կամ բրոջ որդիքը չորրորդ աստիճանում. հօրեղբօր կամ մօրեղբօր, ինչպէս և հօրաբրոջ և մօրաբրոջ որդոց տղան հինգերորդ աստիճանում, նոցա թուը վեցերորդ և այլն:

205. Առաջին կողմնակի գիծը ծագում է

առաջին վերելակ աստիճանից, այսինքն տւած անձի հօրից և մօրից և տարածուում է ղէպի տրւած անձի եղբօրը և բրոջը և նրանցից՝ նրանց որդոցը և այլն:

206. Երկրորդ կողմնակի գիծը ծագում է երկրորդ վերելակ աստիճանից, այսինքն երկու պսակից և երկու մահից և տարածուում է ղէպի տրւած անձի հօրեղբայրը, նրանից նրա որդուն և այլն:

207. Երրորդ կողմնակի գիծը ծագում է երրորդ վերելակ աստիճանից, այսինքն չորս պապի հայրերից և մայրերից և տարածուում է ղէպի նոցա ցածընթաց սերունդները:

208. Այս ձևով որոշուում են և հիմա կողմնակի գծերը վերելակներից ղէպի ցածընթացները:

209. Ազգականութեան մօտիկութիւնը որոշելիս, իբր ապացոյց ընդունուում են ծխական զրքերը և նայելով մարդկանց կոշմանը, որոց ազգականութիւնն է որոնուում, ազնւականների ցեղազրութեանց զրքերը, քաղաքային բնակչութեան զրքերը, բովիզեայի ցուցումները և կոշման այլ վաւերաթղթերը:

210. Ազգականութեան աստիճանները. որոնցում արգելուում է պսակը կամ թոյլատրուում, նոյնպէս ինամիութեան աստիճանները և կնքահայրութեան ազգակցութիւնը որոշուում են եկեղեցու կանոններով:

Գլուխ III. Բնագրական կարգի մէջ խնամակալութեան եւ հոգաբարձութեան մասին.

212. Երկու տեսակի խնամակալութիւն և հոգաբարձութիւն է կարգւած օրէնքով ընտանեական կարգի մէջ.

1) Անշափահասների վրա.

2) Ապուշների, խելագարների, խուլ ու յամբերի և յամբերի վրա:

Մանօրութիւն. — Բոլոր այլ դէպքերում, բացի այս (212) յօւածի մէջ նշանակւածներից, կարգւած լիք խնամակալութիւնները չեն պատկանում ընտանեկան հիմնարկութիւններին և որոշում են Դասակարգային կոշման Օրէնքների, Քաղաքացիական Դատավարութեան Օրէնքներում և Յանձանքների առաջն առնելու և կտրելու կանոնադրում: Իսկ այն խնամակալութիւնները, որ մասնաւոր մարդիկ իրենց կալածների վրա ինքնակամ կարգել են, օրէնքի առաջ ոչ մի ուժ չունին և դատարանում 'ի նկատ են առնում չեղած:

Գլուխ I. Անշափահասների խնամակալութեան եւ հոգաբարձութեան մասին.

Պրակ I. Անշափահասների տարիքի և նրանց ստացւածքի վրա իրաւունքի մասին:

213. Անշափահասութեանը երեք հասակ է վերագրւում, առաջինը՝ ծննդից մինչի տասն և չորս տարեկան հասակը, երկրորդը՝ տասն և չորս տարիքից մինչի տասն և եօթը տարին,

երրորդը՝ տասն և եօթից մինչի քսան և մէկ տարեկան հասակը:

Մանօրութիւն. — Անշափահասութեան սկզբի երկու սեռի անձանց օրէնքների մէջ կոշում են մանկահասակներ, երրորդում՝ անշափահաս, բայց այս տարբերութիւնը անւանումների մէջ ամեն ժամանակ չի պահւում:

214. Անշափահասակների տարիքը որոշւում է 1) ծխական արձանագրական (մետրիքական) գրքերով, որ նշանակւում են իւրաքանչիւր երեւի ծննդեան թիւն ու տարին. 2) քահանայի կամ կնքահօր տւած գրաւոր վկայութիւններով, կամ դոցա չլինելու դէպքում, այլ արժանահատ անձների:

215. Տարիքի որոշելու համար ընդունւում են նոյնպէս. 1) խոստովանութիւն և ս. Հաղորդութիւն ընդունողների ծխական ցուցակներով այդ անձանց տարիքի նշանակումով. 2) ազնականների ցեղագրութեան և քաղաքային բնակչութեան գրքերով և ընկիրիայի ցուցումներով:

216. Արգելւում է միայն մասնաւոր մարդու սեփական ցուցմունքն ընդունել իրր ապացոյց տարիքի:

II. Ստացւածքների վրա անշափահասների իրաւունքի մասին.

է17. Անշափահասները չեն կարող ոչ կառավարել իրենց կալւածքն անմիջապէս, ոչ կարգադրել, ոչ որ և է հաստատութեան ձևով օտա-

բացնել և ոչ էլ իրենցից լիազօրութիւն տալ ուրիշներին:

218. Արգելում է կատարել անչափահասների անունից որ և է թուղթ և գործողութիւններ, կամ նրանց կողմից գրածներն ընդունել վաւերական և ՚ի կատար ածել:

Մանօրութիւն.— Եթէ երեան գան գրաւթղթեր, տրւած մանկահասակներէ կողմից, բացի նրանց ոչնչացնելուց, միւս պայմանգիր կնքող կողմից առնուում են այդ թղթերի գանձարանին վճարելի արժէքի կրկնակին իբր տուգանք: Մանկահասակի կամ անչափահասի կայքը գիտութեամբ գնողը առանց այդ մասին պատշաճաւոր թոյլտուութիւն կամ գրա մասին գոյութիւն ունեցող օրէնքների պահանջով հոգաբարձուների համաձայն, բացի գնած կալւածքի վերագարձնելուց, առանց որ և է վարձատրութեան, ենթարկուում է քրէական օրէնքներով պատասխանատուութեան:

219. Տասն և չորս տարեկան հասակը անցնելուց յետոյ, մանկահասակը թէև ինքը կարող է խնդրել իր համար հոգաբարձու խորհրդի և բոլոր գործերի մէջ պաշտպանութեան համար, նոյն առաւելութիւններով ինչպէս որ խնամակալութեան մասին է պատւիրւած, բայց նրա իրաւունքները զրանով չեն մեծանում եթէ կառավարում է ստացւածքը և նրա կողմից տրււած որ և է գործողութիւն-վաւերաթղթի մասին համաձայնութիւնը ըստ առաջնոյն հաշուում է ոչինչ:

220. Տասն եօթ տարեկան հասակը հասածը սկսում է կառավարել իր կալւածքը. բայց պարտքեր անել, տալ գրաւոր պարտաւորութիւններ, և կատարել ակտեր և որ և է համաձայնութիւններ. նա և որեիցէ շահեցողութեան մէջ գտնւած զրամագլուխները կարգադրել կամ այդպիսիներն ետ ստանալ վարկային հաստատութիւններից չի կարող, առանց տարբերութեան՝ բաժանւած երեխաների՝ անբաժաններից, ոչ այլ կերպ, բացի հոգաբարձուների գրաւոր ստորագրութիւնով և համաձայնութեամբ, առանց որի նրանց տւած որ և է պարտաւորագիր չեն կարող իսկական նկատել:

221. Ստացւածքը կառավարելու լիակատար իրաւունքը և պարտաւորութիւնների մէջ մտնելու ազատութիւնը ձեռք են բերում ոչ այլ կերպ, բան չափահասութեան տարիքին հասնելը, այսինքն քսան և մէկ տարիքին հասնելը:

222. Գրաւոր պարտաւորագիր տւող անչափահասը, կամ առանց խնամակալի համաձայնութեան իր կողմից որ և է գործողութիւն կատարողը, նրանցով չի ենթարկուում որ և է պահանջի և պատասխանի ոչ անչափահասութեան ժամանակ և ոչ էլ չափահաս դառնալիս:

Պրակ II. Խնամակալութիւն և հոգաբարձութիւն կարգելու մասին.

225. Փորրահասակների կայքի և անձի վրա

խնամք տանելու համար կարգուամ է խնամակալութիւն:

226. Ծնողների կենդանութեան ժամանակ նրանց հասած կայքի խնամակալութիւնը պատկանում է հօրը:

227. Ծնողները իրաւունք ունին իրենց հոգևոր կտակի մէջ իրենցից յետոյ մնալու որդոց և կայքի վրա խնամակալներ նշանակել իր սեփական ընտրողութեամբ:

է 28. Ծնողների նշանակած խնամակալները գտնուում են պետութեան կոմից նշանակած խնամակալների համար սահմանուած վարչութեանց ստորադրութեան տակ:

229. Եթէ կտակի մէջ առանձին խնամակալներ չեն նշանակուած, մանկահասակ երեխաներին հասած կայքի համար, այն ժամանակ խնամակալութիւնը պատկանում է կենդանի մրնացած հօրը կամ մօրը, եթէ 'ի նկատի չկան պատճառներ, որոնցով նորա 256 և 258 յօդուածների հիման վրա չէին կարող լինել խնամակալներ:

230. Եթէ ծնողը խնամակալական կառավարութիւնից չի հրաժարւի և եթէ կրտակով չէ նշանակուած նրան օգնական խնամակալ, այն ժամանակ խնամակալութիւնը միայն նրան է յաձնուում, առանց ուրիշների մասնակցութեան:

231. Երբ կտակի մէջ խնամակալ չէ նշանակուած և կենդանի մնացած հայրը կամ մայրը

այդ պարտաւորութիւնը չեն ընդունում իրենց վրա, այն ժամանակ Տէրութիւնն է խնամակալներ ընտրում և նշանակում:

232. Չերնիգովի և Պալտաւի նահանգներին է վերաբերում:

233. Ազնւականների որբերի խնամքը գրւում է Ազնւականների Խնամակալութեան վրա:

234. Անձնական ազնւականների որդոց մասին հոգացողութիւնը պատկանում է Որբերի Դատարանին կամ նրան փոխարինող հիմնարկութեանը, բայց եթէ անձնական ազնւականների որդոցը հասել է կալւածք, որի վրա բնակչութիւն կայ, այն ժամանակ այս կալւածքը մըտնում է ազնւականների խնամակալութեան տակ:

236. Տոհմական ազնւականութեան պատկանող հոգևոր անձանց երեխաներին խնամակալներ նշանակուում են, միւս ազնւականների հետ միևնոյն հիմունքների վրա, ազնւականութեան խնամակալութիւնից. սրբազնագործ պաշտօնեաների և եկեղեցական գպիրների երկու սեռի գաւակների վրա խնամակալութիւն կարգելը պատկանում է հոգևոր իշխանութեանը:

238. Քաղաքացի մանկահասակ որբ երեխաների հոգացողութիւնը յանձնուած է քաղաքային Որբերի Դատարանին կամ այն հիմնարկութեանը, որ կատարում է նրա պաշտօնը:

240 - 249. Մի մասը վերացուած է, միւս մասը մասնաւոր բնոյթ ունի:

250. Ազնականութեան Խնամակալութիւնը և Որբերի Դատարանը որբերի գործերի կառավարելուն և հայեցողութեանը ձեռնարկում են,

1) ազնականութեան պարագլխի և բաղարար-գլխի, նրանց վարչութեան տակ ընկնող որբացած երեխաների, որ մնացել են առանց վերահասութեան, մասին տւած ծանուցումից յետոյ.

2) մերձաւոր ազգականների ծանուցմամբ, կամ երկու կողմնակի մարդոց և ծխական բահանայի վկայութեամբ. 3) իրանից բարձր կամ հաւասար ատենեկան տեղի ծանուցման համաձայն:

251. Այդ ծանուցման համաձայն Ազնականութեան Խնամակալութիւնը և Որբերի Դատարանը պարտաւոր են.

- 1) Տեղեկանալ մանկահասակի կալւածքի մասին.
- 2) նշանակել նրա անձի և կալւածքի վրա խնամակալ՝ ծնողների կտակի մէջ նշանակւածին կամ, եթէ այդ չէ արւած, այն ժամանակ խնամակալ ընտրեն իրենք:
- 3) Երբ կալւածք չէ մնացել, այն ժամանակ աշխատել մանկահասակին համաձայն նրա դասակարգային կոչման և հասակին տալ հասարակական դպրոց կամ որբերի տները, կամ պետական ծառայութեան տալ, կամ տեղաւորել բարեացակամ անձանց մօտ արհեստ կամ աշխատանք սովորեցնելու համար:

Մանօրուքիւն. Խնամակալներ նշանակւում են օրէնքի համաձայն բոլոր մանկահասակների համար առանց ջոկողութեան, ունին նորա ստացւածք թէ ոչ:

253. Խնամակալների զրական թիւ չէ որոշւած, կարող է մի խնամակալ նշանակել զանազան գաւառներում գտնւած մի կալւածքի:

254. Խնամակալներ կարող են նշանակել ինչպէս ազգականներից և խնամիներից մանկահասակների, այնպէս և կողմնակի մարդկանցից:

256. Խնամակալի ընտրութիւնը պիտի ընկնի այնպիսի մարդոց վրա, որոնք բարոյական յատկութիւններով յոյս կուտան մանկահասակների հոգացողութեանը, որ նորա առողջ լինին, բարի կրթութիւն ստանան, և իրենց կոչման համապատասխան բաւարար ապրուստ, և որոնցից կարելի է սպասել հայրական խնամք: Ըստ այսմ արգելւում է խնամակալ նշանակել, 1) հայրական և սեփական կարողութիւնը վատնածներին. 2) յայտնի և երեցող արատներ ունեցողին կամ դասակարգային կոչման իրաւունքներից զրկւած կամ բոլոր սեփական իրաւունքներից և արտօնութիւններից, ինչպէս անձամբ այնպէս և դասակարգային կոչմամբ ձեռք բերած, և կամ համաձայն Պատժական Օրէնքների 50-րդ յօդւածի միքանի անձնական իրաւունքներից և արտօնութիւններից. 3) իրենց խիստ վարեցողութեամբ յայտնի անձանց. 4)

մանկահասակների ծնողների հետ վեճ ունեցող-  
ներին. 5) սնանկներին:

259. Խնամակալները գտնուում եմ այն հիմ-  
նարկութիւնների անմիջական ստորագրութեան  
տակ, որոնցից՝ նրանից իւրաքանչիւրը նշա-  
նակել է:

260. Մանկահասակը տասն և չորս տարե-  
կան դառնալուց յետոյ ձեռք բերելով իրեն խը-  
նամակալ խնդրելու իրաւունք, այդ առթիւ նա  
զիմում է խնդրով Ազնւականների Խնամակա-  
լութեանը կամ Որբերի Գատարանին, զրանցից  
որին նա պատկանում է:

261. Խնամակալներ նշանակելու հիմնար-  
կութիւններից ջոկ, մանկահասակներին խնամա-  
կալ եթէ կտակով չեն նշանակւած, կարող են նը-  
շանակել միայն Բարձրագոյն Իշխանութեամբ ևս:

Ամուսիններից մեկի՝ միւս ամուսնու կսակով վերապահ-  
ւած տնտեսի կալւածքի ցման տիրապետութեան մասին:

533.<sup>1</sup> Տոհմային կալւածքը, որ թողել է ա-  
մուսիններից մէկը միւսին ցման տիրապետելու  
իրաւունքով, նրա վրա հաստատում է կալւածքի  
ցուցագրութիւնը կազմելուց յետոյ: Այս ցուցա-  
գրութիւնը, որ իր մէջ պէտք է ամփոփէ ինչ-  
պէս նրանց տրուող անշարժ կալւածքը, նոյնպէս  
և նրա մէջ գտնւած շարժական ստացւածքը, որ  
ըստ օրհնի նրան է պատկանում՝ կատարւում է

ցման տիրապետողի հաշուով, տեղական պատ-  
շաճաւոր իշխանութեան ձեռքով, օրինական ժա-  
ռանգների ներկայութեամբ, կամ նոցա հաւա-  
տարմատարների, կամ թէ, եթէ այդ ժառանգ-  
ներն անչափահաս են, նրանց խնամակալների  
կամ հոգաբարձուների ներկայութեամբ: Իսկ եթէ  
այս վերջիններն իրենք են նշանակւած այդ կալ-  
ւածքի ցման տէրեր, այն ժամանակ, ցուցա-  
գրելիս նրանց հետ միասին պէտք է ներկայ լի-  
նին ազնւականների խնամակալութեան, կամ որ-  
բերի դատարանի անդամները, կամ առհասարակ  
այն տեղերի (հիմնարկութիւնների)՝ որ խնամա-  
կալական գործեր են վարում: Կալւածքը ցուցա-  
գրելու պարտաւորութիւնից չի կարող ցման տի-  
րապետողը հեռացնել կտակով, որով այդ կալ-  
ւածքը տրւում է նրան ժամանակաւոր տիրա-  
պետութեան համար:

533.<sup>2</sup> Ցման տիրապետելու իրաւունքը կա-  
րելի է տալ և անբաժան կալւածքի համար: Այդ  
դէպքում ցման տիրապետողն օգտուում է այդ  
կալւածքի եկամուտներով, համապատասխան  
միւս մասնակիցների:

533.<sup>3</sup> Եթէ որ և է վարկային հիմնարկութեան  
մէջ զբաւ դրւած կալւածքը, որ ցման տիրելու  
իրաւունքով անցնում է մէկին ու ենթակայ է  
բաժանման, այն ժամանակ վարկային հիմնար-  
կութիւնների մէջ զբաւ դրւած կալւածքները ցու-  
ցագրելիս, պէտք է պահպանելն այն բոլոր կա-

նոնները, որ վարկային հիմնարկութիւնների մէջ  
զբաւ զբաւ կալւածների բաժանելու մասին են  
սահմանւած:

533<sup>4</sup> Յման տիրելու համար յանձնւած կալ-  
ւածքի բոլոր եկամուտները պատկանում են  
ցման տիրապետողին՝ նախկին սեփականատիրոջ  
մահւան օրից սկսած: Նոյն ժամանակից և նա  
օգտուում է առհասարակ բոլոր յարմարութիւն-  
ներով և օգուտներով, որ այդ կալւածքի տիրա-  
պետութեան հետ են կապւած:

533<sup>5</sup> Յման տիրապետողը պարտաւոր է  
ցման տիրապետութեան տակ գտնւած կալւածքը  
պահել և պահպանել աւերումից և փշանալուց  
բոլոր իրենից կախւած միջոցներով, այդ կալ-  
ւածքի միջոցների և դրութեան համապա-  
տասխան:

533<sup>6</sup> Յման տիրապետողը պարտաւոր է կալ-  
ւածքի մէջ գտնւած անտառները բաժանել, ան-  
տառային տնտեսութեան կանոնների համաձայն  
տարեց տարի կտրելու հատարածնի, համապա-  
տասխան ծառերի նորից կտրելու համար հաս-  
նելու միջոցին: Եթէ այդ կալւածքի միջի ան-  
տառները, աննշան կամ քիչ արժէքաւոր լինե-  
լու համար անյարմար և անօգուտ է բաժանել  
հատարածիները, այն ժամանակ ցման տիրա-  
պետողին թոյլ է տրւում զորձածել նրանից ան-  
տառային նիւթեր՝ միմիայն վառելիքի և կալ-  
ւածքի մէջ գտնւած բնակութեան տեղերի և

տնտեսական այլ շինւածքների պահպանու-  
թեան համար:

533<sup>7</sup> Յման տիրապետողին թոյլ է տրւում  
իրենն պատկանող ցման տիրապետելու իրա-  
ւունքը յանձնել ուրիշի, լիակատար կերպով կամ  
թէ նրա որ և մասը, որոշ ժամանակով, հետև-  
եալ կանոնները պահպանելով.— 1) նա կարող է  
տալ ուրիշին իրեն տրւած տիրապետելու իրա-  
ւունքը միայն այն տարածութիւնով և այն սահ-  
մանափակումով, որոնք օրէնքով որոշւած են  
ցման տիրապետելու նկատմամբ. 2) այդ իրա-  
ւունքն ուրիշին տալու ժամանակը չպէտք է ա-  
ւելի երկար լինի նրանից, քան որ օրէնքով կա-  
րող են անշարժ կալւածքը կապալով տալ. 3)  
յանձնւած իրաւունքից օգտուելու համար կապա-  
լադրամը պէտք է վճարի կապալառուն ցման  
տիրապետողին իւրաքանչիւր տարւայ համար  
տարւայ վերջին միայն և 4) այս հիման վրա  
ցման տիրապետելու իրաւունքի ուրիշին յանց-  
նելու մասին կայացած պայմանագրերը պարտա-  
ւորական են և սեփականատիրոջ ժառանգների  
համար, որոնց պէտք է կալւածքն անցնի ցման  
տիրապետողից յետոյ: (Նախել 1692<sup>1</sup> յօդւածը):

533<sup>8</sup> ժամանակ ունեցող բոլոր պարտա-  
ւորազրեւոր, որ անցնում են կալւածքի հետ նրա  
ցման տիրապետողին, մնում են միւսի որոշած  
ժամանակի անցնելը՝ իրենց ներգործութեան մէջ:

533<sup>9</sup> Յման տիրապետութեան յանձնւած

կալւածքով ապահովւած պարտքերը հատուցուում են այդ կալւածքից. նախկին սեփականատիրոջ այլ պարտքերը, որ չեն ապահովւած ոչ այդ կալւածքով, ոչ ուրիշով՝ մասնազրուում են ցման տիրապետողից և նախկին սեփականատիրոջ ժառանգներից ստացելու համար. համապատասխան այն կալւածքի, որ անցնում է առաջինն՝ ցման տիրապետութիւն, իսկ վերջիններին սեփականութիւն:

533<sup>10</sup> Այն գումարը, որ վարկային հիմնարկութեան եղած պարտքի պատճառով ցման տիրապետութեան տակ եղած կալւածքի վաճառումից ձեռք կը բերւի, բացի այդ պարտքից, կամ կալւածքի պետական կամ մասնաւոր վճարքի համար ծախւելիս՝ բացի այդ պարտքից դրուում է պետական զբաւատուներ կամ մի այլ, պետութեան հաստատած կամ հովանաւորած վարկային հիմնարկութեան մէջ, տոկոս բերելու համար, որ տրւում է ցման տիրապետողին, իսկ ինքը զբամազուլին ընդունում է նախկին սեփականատիրոջ ժառանգների սեփականութիւն:

533<sup>11</sup> Կալւածքի ցման տիրապետողը պարտաւոր է ճշտապէս կատարել կալւածքի վրա դրւած՝ օրէնքով որոշւած պետական, հասարակական և համայնական տուրքերը:

533<sup>12</sup> Ցման տիրապետողի մահից յետոյ կալւածքն անցնում է սեփականատիրոջ ժառանգներին, ընդհանուր կարգւած ձեռով, կամ

նրա կտակով; այս նիւթին վերաբերեալ օրէնքների հիման վրա:

533<sup>13</sup> Ամուսիններից մէկի միւսին տւած տոհմային կալւածքը ցման տիրապետելու իրաւունքն ինքն իրեն ոչնչանում է, 1) երբ ամուսիններից մէկի մահից յետոյ ոչ ուշ քան երկու տարւայ ընթացքում, կալւածքի և ամուսնութեան հետ կապւած քաղաքացիական իրաւունքների և արտօնութիւնների մասին սկսած պահանջի պատճառով, նրանց ամուսնութիւնը անվաւեր կը ճանաչւի. 2) երբ նա կը լուծւի օրինական կարգով. 3) երբ միւս ամուսնուն ցման տիրապետելու համար թողւած կալւածքը, դուրս կուզայ, որ արդէն նրա սեփականութիւնից ելած է և անցել է մի այլ անձի:

1070. Տոհմային կալւածքը կարելի է կտակել կենդանի մնացող ամուսնուն միայն այն կտակի միջոցով, որ կայացած է նոտարական կամ հաստատելու կարգով, կամ թէ այնպիսի կտակով. որ լինելով դրւած ամբողջը կտակողի սեփական ձեռքով, անձամբ տրւած պահ ինամակալական խորհրդին կամ Կայսեր. Մարզասիրական Ընկերութեան բաժնի ղիւանատանը, կամ այդ ընկերութեան հոգաբարձական խորհրդին:

Ամուսինների ժառանգելու կարգի մասին.

1148. Յօդ. ծանօթութիւն. — Ամուսինը, որին տրւած է միւս ամուսնու տոհմային կայքին ցման

տիրապետելու իրաւունք, զրա միջոցով զրկում է իրեն հասանելի ընդհանուր օրէնքների համաձայն որոշւած այդ ստացւածքի բաժնից, բայց նա կարող է, ըստ իր ցանկութեան, չմտնելով իրեն տրւած ցմահ տիրապետելու իրաւունքների մէջ, հրաժարել նրանից և նրա տեղ պահանջել այդ կալւածքից իրեն հասանելի որոշւած մասն ՚ի սեփականութիւն:

I V. Հ ա ս ու Ր

Զինւորական պարտաւորութիւնների կանոնադիրք.

25. Զինւորական իսկական ծառայութեան մէջ գտնւած անձինք պահպանում են իրենց ամբողջ ծառայութեան ընթացքում՝ իրենց կոչման բոլոր անձնական և ստացւածքային իրաւունքները, բայց ծառայութեան պարտաւորական ժամանակամիջոցում, հպատակելով ծառայութեան բոլոր պահանջներին և կանոններին, ենթարկւում են հետեւեալ սահմանափակումներին, 1) իսկական և պարտաւորական ծառայութեան մէջ գտնւած զինւորներին արգելում է ամուսնանալ մի բանի տեղերի համար, զրանից բացառութիւններ անում են ըստ Բարձրագոյն հաստատւած զինւորական և ծովակալական-խորհրդի կանոններով: 2) սպաններին չի թոյլ տրւում ամուսնանալ նախքան քսաներեք տարեկան հասակը, զինւորական-ցամաքային վարչութեան մէջ քսան

և ութերորդ տարիքին չհասնողներին, իսկ զինւորական ծովային վարչութեան մէջ քսանհինգ տարիքին՝ թոյլ է տրւում իշխանութեան կողմից ոչ այլ կերպ, երբ կը ներկայացնեն պատշաճաւոր տեղից ծովային և զինւորական կանոններով սահմանւած չափի համեմատ՝ ստացւածքային վկայական. նոյն սահմանւած կանոններով որոշւում են տեղական պայմանների համաձայն, անօրութիւն ներկայացնելու ընդհանուր կանոններից և անհրաժեշտ բացառութիւններ:

IX. Հ ա ս ու Ր. — Դասակարգային կոչման մասին.

Յօդ. 5. Բարձր կոչման ամուսինն, այդ կոչման իրաւունքը տալիս է իր կնոջն, եթէ նա դատական վճիռներով, կոչման իրաւունքներից, կամ առանձին, անձնական և կոչմամբ իւրացրած իրաւունքներից և արտօնութիւններից զրկւած անձերից չէ: Կինն իր կոչումը չի տալիս ոչ որդոցը և ոչ ամուսնուն. բայց ինքը լիովին կամ բանի մի սահմանափակումներով պահպանում է բարձր կոչման իրաւունքներն, եթէ զորա պատկանում էին նրան մինչի ամուսնութիւնը ըստ իր ծագման, կամ ձեռք են բերւած ամուսնութեան միջոցով:

44. Իւրաքանչիւր տոհմական ազնական տալիս է իր կնոջը իր կոչումը, չնայելով նրա ծագմանը կամ նախընթաց ամուսնութեանը:

45. Մահանից յետոյ բարձր աստիճան ստացած մարդոց ամուսիններին իրաւունքը է տրուում կոչել այս աստիճաններով և օգուել նրա հետ կապ ունեցող արտօնութիւններով, եթէ միայն նրանց ամուսիններին աստիճանի արժանացնելիս, այդ մասին որոշւած ծառայութեան ժամանակը վերջացել է նախքան նրա մահը:

46. Եթէ տոհմական ազնւականութեան իրաւունք տւող շքանշանով պարգևատրուելու ներկայացրածը նրանով վարձատրելի իր մահից յետոյ, այդ մասին տեղեկութիւն չլինելու պատճառով, այն ժամանակ նրա այրին այս շքանշանի վարձատրութեամբ ձեռք բերող իրաւունքներից չի զրկուում:

53. Անձնական ազնւականութիւնը ամուսնութեան միջոցով մարդուց տրուում է կնոջն այն հիման վրա, ինչպէս և տոհմական ազնւականութիւնը:

328. Տոհմական ազնւականութեան իրաւունքներ չունեցող անձի հետ ամուսնացող տոհմական ազնուհուն չի արգելուում մինչի նրա մահը տիրապետել ազնւային կալւածքի, որ հասել է նրան մինչի այդ ամուսնութիւնը ժառանգութեան միջոցով կամ այլ օրինական կարգով, բայց նորից ձեռք բերել բնակեցրած կալւածքներ գնման հաստատութեամբ, ընծայազրի և այլ զրութեամբ, կամ որ և է ձեի հաստատութեամբ, թոյլատրուում է ոչ այլ կերպ, քան բար

ղարացիական օրէնքներով սահմանւած կանոնների համաձայն: Եթէ նրա ամուսինն յետագայում ծառայութեամբ կամ այլ կերպ ձեռք բերէ տոհմային ազնւականութեան իրաւունքներ, կամ նա ոչ տոհմական ազնւական ամուսնու մահից յետոյ կմնայ այրի՝ առանց նրանից որդիների կամ ուղղագիծ սերնդի, կամ թէ նորից կամուսնայ, բայց տոհմական ազնւականի հետ, այն ժամանակ նրան կը թոյլատրելի նորից ձեռք բերել բնակեցրած ազնւային կալւածքներ, տոհմական ազնւականների համար այդպիսիներ ձեռք բերելու համար սահմանւած ընդհանուր կանոնների համաձայն:

329. Երբ այրուն կմնան ոչ տոհմական ազնւականի հետ ամուսնութիւնից ծնւած որդիներ, այն ժամանակ բնակեցրած կալւածքներ նրան թոյլ է տրուում ձեռք բերել այն սահմանափակումներով, ինչպէս և ամուսնու կենդանութեան ժամանակ:

347. Օրէնքով չլուծւած ամուսնուն արգելուում է վանք մտնել՝ կնոջ կենդանութեան ժամանակ:

367. Սրբազնագործ պաշտօնեաներն և եկեղեցական ղպիրները օրինական պատկով տալիս են իրենց կոչման իրաւունքներն իրանց կանանց:

368. Տոհմական ազնւականութեան չպատկանող սրբազնագործ պաշտօնեաների և եկեղեցական ղպիրների այրիներն եթէ իրենք չունին

բարձր կոչման իրաւունքներ՝ օգտուում են, սրբազ-  
նագործ պաշտօնեաների այրիք՝ անձնական ազ-  
նականութեան իրաւունքով, իսկ եկեղ. դպիր-  
ների այրիք՝ անձնական պատւաւոր բաղաբա-  
ցիութեան իրաւունքներով:

383. Հայ-Լուսաւորչական եկեղեցու աշ-  
խարհի հոգևորականները օրինական ամուսնու-  
թեան միջոցով տալիս են իրենց կանանց՝ իրենց  
կոչման իրաւունքները, որոնք այդ իրաւունքները  
պահում են իրենց ամուսինների մահից յետոյ  
ևս, եթէ դատական վճիռներով չեն զրկւի նրան-  
ցից, և չեն ամուսնանայ այլ կոչման անձանց հետ:

Ծանօթութիւն. Հայ-Լուսաւորչական եկեղեցու  
տոհմական ազնւականութեան շպատկանող սրբազ-  
նագործ պաշտօնեաների, դպիրների այրիները կոչ-  
ման այն իրաւունքն օգտուում են, որ 368 յօդա-  
ծով տրւած են ուղղադաւան եկեղեցու սրբազնա-  
գործ պաշտօնեաներին և դպիրներին:

539. Վաճառականը տալիս է կնոջն իր կո-  
չումը, լինի նա թէկուզ աւելի ստոր. իսկ վա-  
ճառականի կինն այդ կոչմամբ օգտուում է մինչի  
այն ժամանակ, երբ նրա ամուսինը գտնուում է  
գիւղիայի մէջ, եթէ նա (կինը) իր անձով չէ  
զրւած նրա մէջ: Վաճառականների կանայք,  
իրենց սեփական անւամբ առևտրական վկայա-  
զրեր ձեռք բերելով, օգտուում են վաճառակա-  
նութեան բոլոր արտօնութիւններով:

542. Քաղաքացին տալիս է իր կնոջն իր

կոչումը, եթէ նա ստոր ծագումից է:

710. Գիւղացին տալիս է իր կոչումը իր  
կնոջն, երբ նա իր ծագմամբ բարձր կոչման չէ  
պատկանում:

1014. Ամուսնացած օտարահպատակներին  
չի թոյլ տրւում Ռուսահպատակութիւն ընդունել  
իրենց ամուսիններից ջոկ:

1026. Օտարահպատակի հետ ամուսնացող  
ռուսահպատակուհին, որի հիմամբ նա օտարա-  
հպատակ է հաշւում, կարող է ամուսնու մահից  
կամ նրա հետ ամուսնութիւնը լուծելուց յետոյ  
դառնալ ռուսահպատակ, որ դէպքում միայն  
պարտաւոր է այն նահանգի նահանգապետին,  
ուր նա որոշում է իր համար բնակութեան տեղ,  
ներկայացնել իր ամուսնական կոչման դադա-  
րելու մասին վկայական: Նահանգապետի տւած  
վկայականն այդ մասին, որ յիշւած վկայութու-  
թը ներկայացրւած է իրեն, ծառայում է նրան  
ներկայացնողի համար իբր ապացոյց նրա ռու-  
սահպատակութեան վերադառնալուն:

1028. Ռուսահպատակների հետ ամուսնա-  
ցող օտարահպակուհիները, նոյնպէս և ռուսա-  
հպատակութիւն ընդունող օտարահպատակների  
կանայք զրա միջոցով դառնում են ռուսահպա-  
տակ, առանց նրանց կողմից երդումն ընդունե-  
լու: Այրիներն, ինչպէս և ամուսնութիւնը լուծ-  
ւած կանայք պահպանում են իրենց ամուսնու  
հպատակութիւնը:

XI. Հասար. մասն. I.

1188. Հայ-Լուսաւորչական կոնսիտորեաների գործունէութեան շրջանին են պատկանում. — 6) ամուսնութեան գործերի հայեցողութիւնն ու վճիռները. բայց ամուսնանալու գործերի բոլոր տարակուսելի դէպքերը ներկայացնելով էջմիածնի Հայ-Լուսաւորչական Սինոդի հայեցողութեանը:

*Ամուսնացում*  
*Մուսնայր*  
XIV. Հասար.

Քանտարկեալների մասին:

297. Ամուրի բանդարկեալներին արգելում է ամուսնանալ, իսկ ամուսնացածներին՝ ապրել իրենց կանանց հետ:

Աքսորականների մասին.

85. Իրենց սեփական կամքով (ամուսիններին) հետևող կանայք, զնալու ամբողջ ճանապարհի ընթացքում չպէտք է բաժանին իրենց ամուսիններից և չպէտք է հակողութեան խստութեանը ենթարկին:

86. Աքսորականների մինչի իսկական բաժինների մասնագրելը ծիւմէն բաղարում, նրանց արգելում է իրար հետ ամուսնանալ:

87. Աքսորականներին թոյլ է տրւում ամուսնանալ ճանապարհին ոչ յանցաւորուհիների հետ, եթէ նրանք զրան համաձայնին և չկան

այլ օրինական արգելքներ: Այս կանանց հետ վարել այնպէս, ինչպէս ասւած է իրենց մարդոց հետ սեփական կամքով զնացողների մասին:

173. Աքսորականների կանայք, որ ինքնակամ հետևում են նրանց... ստանում են զգեստ, ոտնաման, սննդի փող՝ ճանապարհի ամբողջ ընթացքում:

247... Քաղաքացիք և զիւղացիք, որ բնակեցրւում են Սիրիբում հասարակութիւնների միջից հեռացնելու պատճառով, ուղարկւում են իրենց կանանց հետ միասին:

XV. Հասար. Պատժական օրենքներ.

Ամուսնական կապի դէմ յանցանքների մասին.

1549. Ով կփախցնէ անամուսին կնոջ՝ նրա հետ ամուսնանալու համար, նրա կամքի հակառակ, նա, զրա համար կնոջ կամ նրա խնամակալների տւած բողոքով ենթարկւում է. —

առանձին, անձնական և կոչմամբ իւրացրած բոլոր իրաւունքների և արտօնութիւնների զրկելուն և բնակութեան համար Սիրիբ արքորվելուն. կամ այս օրէնքների 31-րդ յօդւածի 3-րդ աստիճանի համաձայն ուղղիչ բանդարկութեան բաժնին յանձնելուն: Երբ փախցնելը կատարել է փախչողի կամբով, յանցաւորներն այս կամ այն կողմի ծնող-

ների կամ խնամակալների բողոքով պատժուում են  
փախցնողը՝ 4—8 ամիս բանդարկութեան.

իսկ փախչիլ համաձայնողը

նոյնքան ժամանակով բանդարկութեան՝  
վանքում,

եթէ կայ և կայսրութեան սահմաններում գրան-  
ուում են վանքեր այն դաւանութեան, որին նա է  
պատկանում,

կամ ծնողների կամ խնամակալների տան  
մէջ առանձնացած խիստ հսկողութեան  
տակ գտնւած կեանքի:

Բողոքող ծնողների և խնամակալների խնդրի  
համաձայն մեղաւորների բանդարկութեան ժա-  
մանակը կարող է կրճատուել:

1550. Եթէ մէկը բռնութեան կամ անյախիսի  
տեսակի սպառնալիքով և այնպիսի հանգամանք-  
ներում, որին՝ սպառնում էին, կարող էր և պէտք  
է հաշւէր իրեն վտանգի մէջ, կտփպէ որ և է  
մէկին ամուսնանալ իր հետ, նա զրա համար իր  
կամքի հակառակ ամուսնացած անձի կամ թէ  
նրա ծնողների կամ խնամակալների արած բո-  
ղոքի համաձայն՝ ենթարկուում է՝

կոչման բոլոր իրաւունքների զրկման և չոր-  
սից վեց տարի տաժանակիր աշխատանք-  
ների արսորի:

Եթէ կամքի հակառակ ամուսնութիւնը՝ նախըն-  
թաց բռնաբարութիւն է տեղի ունեցել, նրա  
բողոքի համաձայն, մեղաւորը դատապարտուում է

պատժի բարձր չափին... բռնաբարութեան  
համար սահմանւած 1525 յօդւածով. (տա-  
ժանակիր աշխատանքներ 4—8 տարի):

1551. Նա, ով կը զրդի ում և է, ցանկու-  
թեան հակառակ ամուսնութեան, որ և՛ խմիչքով,  
կամ այլ կերպ կը ձգէ այդ անձին յիշողութիւնը  
կատարելապէս կորցրած վիճակի, կամ կարճ  
ժամանակեայ խելքահանութեան մէջ, կամ թէ  
խարբայութեամբ կը կարողանայ պսակել այդ  
անձին ոչ նրա հետ, որին նա ընտրել է, այս-  
պիսին խարւածներից մէկի կամ թէ նոցա ծը-  
նողների բողոքով ենթարկուում է. —

կոչման բոլոր իրաւունքների զրկելու Սիրի-  
րի հեռաւոր տեղերում բնակւելու արսորին:

Նա, ով որ և է անձի կը զրդի ամուսնանալ,  
օգտւելով նրա խելագարութիւնից, կամ սահման-  
ւած կարգով ճանաչւածի թուլամտութիւնից  
(ապուշութիւնից), զրա համար կը դատապարտւի  
այս յօդւածի մէջ որոշւածից մի ամտիճան  
ցած պատժի:

1552. Նախընթաց (1549 — 1551) յօդւած-  
ների մէջ նշանակւած բոլոր դէպքերում, պսակը  
կատարող քահանան, և զիտութեամբ այդ բա-  
նին մասնակցող սրբազնագործ պաշտօնեաներն  
և դպիրները ենթարկուում են՝

եկեղեցական կանոններով ապօրինի պսակ-  
ներ կատարելու համար սահմանւած պա-  
տիժներին:

Քայց եթէ ապացուցւի, որ նորա որ և է բանով օժանդակել են այդ առթիւ բռնադատութեանը կամ խաբեբայութեանը, հոգևոր կարգից կը ձգւին և կդատապարտւին ինչպէս այդ յանցանքի մասնակիցներ, այդ օրէնքների 119-րդ յօդւածի սահմանած պատժին:

1553. Վկաները, որ ներկայ են եղել պատկին և ստորագրել են արձանագրութիւնը, կամ պատկի կապի մասին այլ գործողութիւն, գիտնալով ամուսիններից մէկի ստիպմամբ կամ խաբեբայութեան միջոցով ստացւած համաձայնութեան մասին՝ ենթարկուում են. —

առանձին, անձնական և կոչմամբ իւրացրած բոլոր իրաւունքների և արտօնութիւնների զրկելուն և Սիբիրայում ապրելու արտօրին, կամ ուղղիչ բանդարկութեան բաժնին յանձնելուն. սոյն Օրէնսգրքի 31-րդ յօդւածի 4-րդ և 5-րդ աստիճանների համաձայն:

1554. Քրիստոնեայ դաւանութեան ամուսնացածներից նա, ով նախկին ամուսնութիւնը պոյութիւն ունեցած ժամանակ նորից կամուսնանայ, նա զրա համար կենթարկւի. —

առանձին, անձնական և կոչմամբ իւրացրած բոլոր իրաւունքների և արտօնութիւնների զրկելուն և Սիբիրում բնակւելու արտօրին, կամ ուղղիչ բանդարկութեան բաժնին յանձնելուն, սոյն Օրէնսգրքի 35-րդ յօդւածի 4-րդ և 5-րդ աստիճանների համաձայն

Քայց եթէ ապացուցւել է, որ նախկին ամուսնութեամբ կապւած այդ անձը նորից ապօրինի պսակւելու համար թաքցրել և յայտարարել է իրեն ամուրի, այն ժամանակ խաբեբայութեան այդ յանցաւորն ենթարկուում է՝

կոչման բոլոր իրաւունքների զրկւելուն և Սիբիրում բնակւելու արտօրին:

Իսկ երբ այդ խաբեբայութիւն անելու համար յանցաւորը ներկայացրել է որ և է սուտ վկայութուղթ կամ արել է այդ կեղծիքը, նա ենթարկւում է՝

և կեղծիքի և բազմակնութեան համար յանցանքների (152 յօդ.) միացած կանոնների համաձայն պատժի:

Նա, բացի զբանից յամենայն դէպս, յանձնուում է եկեղեցական ապաշխարանքի իր հոգևոր իշխանութեան հսկողութեան և կարգադրութեան համաձայն:

1555. Քրիստոնեայ դաւանութեան այն անձը, որ ամուսնացած չէ, բայց գիտութեամբ ամուսնանում է ամուսնութեան մէջ գտնուող այլ անձի հետ, այդ բանի համար ենթարկուում է. —

առանձին, անձնական և կոչմամբ իւրացրած բոլոր իրաւունքների և արտօնութիւնների զրկւելուն և Սիբիրում բնակւելու համար արտօրին կամ ուղղիչ բանտարկութեան բաժնի յանձնելուն, սոյն Օրէնսգրքի 31 յօդւածի 4-րդ աստիճանի համաձայն:

Յանցաւորը, բացի զրանից,  
յանձնուում է նոյնպէս և եկեղեցական ապաշ-  
խարութեան, իր դաւանութեան հոգևոր  
իշխանութեան հայեցողութեան և կարգա-  
դրութեան համաձայն:

1556. Վկաները, որ ներկայ են եղել պա-  
կին, և ստորագրել են արձանագրութիւնը կամ  
պսակի կատարելու այլ գործողութիւն, գիտե-  
նալով որ ամուսնացողները կամ նոցանից մէկը  
կապւած է նախկին ամուսնութեամբ, զրա հա-  
մար ենթարկուում են՝

առանձին, անձնական և կոչմամբ իւրա-  
ցրած իրաւունքների և արտօնութիւնների  
զրկելուն և Սիրիբում բնակելու արքորին  
կամ ուղղիչ բանտարկութեան բաժնին յանձ-  
նելուն՝ սոյն Օրէնսգրքի 31 յօդ, 5-րդ աս-  
տիճանով:

Բայց եթէ սրա հետ միասին օժանդակել են  
նախկին ամուսնութեամբ կապւած անձին՝ խա-  
բել անգիտութեամբ նրա հետ ապօրինի պսա-  
կով ամուսնացող անձին, դատապարտուում են  
սոյն Օրէնսգր. 121 յօդ. հիման վրա, յանցանքին  
մասնակցելու համար սահմանւած պատիժներին:

1557. Քրիստոնեայ դաւանութեան բահա-  
նաներն ու բարոգիչներն, այդ ամուսնական կապի  
մէջ գտնւած անձանց պսակները կատարելու  
համար, այն դէպքում, եթէ այդ արել են աւել  
կամ պակաս առանձին հանգամանքների ընթաց-

քով ներելի սխալանքի պատճառով՝ ենթարկ-  
ուում են.

առաջին անգամ խիստ յանդիմանութեան.  
երկրորդ անգամ՝ զրամական տուգանքի,  
ոչ աւել քան 200 ըուբլի.

իսկ երրորդ անգամ՝ հոգևոր կոչումից զրկ-  
ւելուն:

Բայց եթէ նորա մերկացւին իրենց կատարած  
ապօրինի պսակի գիտենալու մէջ, զրա համար  
առաջին անգամից իսկ դատապարտուում են  
կարգից զրկւելուն և 4 — 8 ամիս բանդար-  
կութեան:

Բայց երբ ապացուցւի, որ նորա նաև օժան-  
դակել են նախկին ամուսնութեամբ կապւած  
մարդուն՝ խաբել անգիտութեամբ նրա հետ  
ապօրինի պսակով ամուսնացող անձին, դատա-  
պարտուում են —

սոյն Օրէնսգրքի 121-րդ յօդւածի համաձայն,  
յանցանքին օժանդակելու համար սահման-  
ւած պատիժներին:

1560. Քրիստոնեայ այլ դաւանութեան ան-  
ձինք, օրէնքով չթոյլատրւած ազգակցութեան  
և խնամիրութեան աստիճաններում, ամուսնու-  
թեան համար առանց այդ մասին պատշաճաւոր  
թոյլտուութեան ենթարկուում են՝

բանդարկութեան 2 — 4 ամիս ժամանակով և  
յանձնուում են եկեղեցական ապաշխարու-  
թեան իր դաւանութեան հոգևոր իշխանու-

թեան հայեցողութեան և կարգադրութեան համաձայն:

1561. Եթէ օրէնքով անթոյլատրելի արեւնակցական և խնամեական աստիճաններէ ամուսնութիւնից առաջ տեղի է ունեցել ապօրինի ազգապղծութեամբ միացած կապակցութեան, այն ժամանակ յանցաւորներն ենթարկուում են—

յանցանքների միացման մասին կանոնների համաձայն պատիժների:

1562. Ծնողները կամ խնամակալները գիտութեամբ օրէնքով արգելած արեւնակցական և խնամեական աստիճաններում պսակներ թոյլ տալու համար ենթարկուում են՝

բանդարկութեան՝ երեք օրից մինչի երեք ամիս:

Այս յօդածի որոշումը չի տարածուում գիտութեամբ թոյլ տւած արեւնակցական առաջին և երկրորդ աստիճանների ամուսնութեան վրա. այս դէպքերում գիտութեամբ այդպիսի պսակ թոյլ տւողն ենթարկուում է

սոյն Օրէնսգրքի 119 յօդ. հիման վրա, ինչ պէս ազգապղծութեան մասնակիցների պատիժներին:

1563. Եկեղեցական և պետական օրէնքներով որոշւած տարիքի սահմաններից առաջ և յետոյ պսակելու համար, ամուսնացող անձինք և գիտութեամբ այդ բանին համաձայնող կամ այդ բանին զրդող նրանց ծնողները, խնամա-

կալները կամ մեծ ազգականներն ենթարկուում են բանտարկութեան 2 4 ամի ժամանակով:

կամ բատնարգելութեան՝ երեք շաբաթից մինչի երեք ամիս ժամանակով:

1565. Պետական ծառայութեան մէջ գըտնւող անձը, եթէ առանց իր իշխանութեան թոյլտուութեան ամուսնանայ, նա այդ բանի համար ենթարկուում է

խիստ յանդիմանութեան, այդ մասին ցուցակ ծառայութեան մէջ անցկացնելու հետ միասին:

1566. Ծնողների վճռական կերպով արգելքի հակառակ կամ առանց նրանց համաձայնութեան յայտնի կամ ծածուկ ամուսնանալու համար, մեղաւորները, ծնողների այդ մասին արած բողոքի համաձայն ենթարկուում են—

վերևում 1549-րդ յօդւածում որոշւած պատիժներին...:

1567. Ով, այս առթիւ ընդհանուր կամ առանձին սահմանումների հակառակ, կամուսնանայ, չխնդրելով պատշաճաւոր կերպով իր խընամակալների թոյլատուութիւնը, զրա համար նա, նրանց կողմից այդ մասին արած բողոքի համաձայն ենթարկուում է—

բանտարկութեան՝ երեք շաբաթից մինչի երեք ամիս ժամանակով:

1569. Հոգևոր կոչման անձինք, որոնց, իրենց եկեղեցու օրէնքներով արգելուում է ամուս-

նանալ, այս արգելքը բանդելու համար են-  
թարկուում են—

ըստ հայեցողութեան իրենց հոգևոր վար-  
չութեան պատժի:

Բայց եթէ նորա զրա համար գործ են դրել որ  
և է խարբրայութիւն կամ կեղծիք նորա հոգևոր  
ապտիճանից ձգելուց յետոյ, դատապարտուում են  
սրանից բարձր 1554 յօդւածի մէջ որոշուած  
պատիժներին, խարբրայութեան և կեղծիքի  
համար բաղմակնութեան տեղի ունենալիս:

1571. Ով, ամուսնանալու մասին եղած ար-  
գելքների ծածկելու համար, կներկայացնէ գի-  
տութեամբ կեղծած կամ դիտաւորութեամբ փո-  
փոխւած վկայաթղթեր կամ վաւերաթղթեր, կամ  
թէ գործ կածի որ և է այլ կեղծիք, նա այդ  
բանի համար կենթարկւի.—

սոյն Օրէնսգրքի 1690 և 1692 յօդ. կեղ-  
ծիքների համար սահմանուած պատիժներին:

1572. Անարդար ցուցմունքի համար, կամ  
ամուսնացողի տարիքի, կամ զրա համար նրանց  
իշխանութեան թոյլտուութեան, կամ ծնողների,  
կամ խնամակալների մասին, մեղաւորներն են-  
թարկուում են—

բանդարկութեան՝ երեք շաբթից մինչի երեք  
ամիս ժամանակով:

Բայց եթէ զրա համար լինին կազմուած կամ գի-  
տութեամբ նրանց կողմից գործ ածուած որ և է  
տեսակի զբաւոր վաւերաթղթեր կամ այլ գրու-

թիւններ, զրա համար նորա կղատապարտւին  
սոյն Օրէնսգրքի 1690 յօդ. մէջ կեղծիքի  
համար որոշուած պատիժներին, այն հիման  
վրա, ինչպէս այդ սահմանուած է սրանից  
բարձր 1571 յօդ. մէջ:

1573. Ով, քահանային կտտիպի հակառակ  
եկեղեցու կամ պետութեան կանոնների կամ  
արգելքների պսակ կատարել, նա, նայելով թէ  
այդ բանի համար ինչ միջոցներ են գործ դրել,  
ակնյայտնի բռնութիւն, թէ առանց զրա՝ են-  
թարկուում են—

պատիժների բարձր չափին, որ որոշուած են  
բունի գործողութիւնների և սպառնալիք-  
ների մասին:

1575. Կաթոլիկ. Հայ-լուսաւորչական, Հայ-  
կաթոլիկ քահանաներն և բողոքականների քա-  
րոզիչներն այն պսակը կատարելու համար, որ  
օրէնքներով պէտք է անվաւեր ընդունւի, դա-  
տապարտուում են, այն ղէպքում, եթէ զա արել  
են գիտնալով

հոգևոր կոչումից զրկելուն և բանդարկու-  
թեան ութն ամսից մինչի մի տարի չորս  
ամիս ժամանակով:

Երբ կերևայ, որ նորա մեղաւոր են աւելի կամ  
պակաս առանձին հանգամանքների ընթացքի  
համաձայն, ներելի սխալանքի պատճառով, են-  
թարկուում են,

առաջին անգամ խիստ յանդիմանութեան,

իսկ երկրորդ անգամ պաշտօնից հեռաց-  
ւելուն:

Գիտութեամբ, որ և է շահասիրական կամ անձ-  
նական նկատումով, օրէնքով արգելւած պսակի  
կատարելու համար, թէ և դա անվաւեր չհաշ-  
ւի էլ, նորա ենթարկուամ են,

հոգևոր կոչումից զրկելուն:

Իսկ երբ, ընդհակառակը, նորա միայն ձգւել են  
հանգամանքների համաձայն ներելի սխալի մէջ,  
դրա համար

առաջին անգամ նրանց խիստ յանդիմանու-  
թիւն է արւում.

այդպիսի անշրջահայեաց նոր երկրորդ դէպքում  
նորա

հեռացնում են պաշտօնից և արգելում է  
'ի նորոյ նշանակել որ և է տեղ:

1577. Առանց պատւիրւած նախազգուշիչ  
կանոնները պահպանելու, պսակը կատարելու  
համար, երբ այդ մասին առանձին թոյլտուութիւն  
չկայ... քրիստոնեայ այլ դաւանութիւնների քա-  
հանաներն ու քարոզիչներն ենթարկուամ են—

առաջին անգամ աւելի կամ պակաս խիստ  
յանդիմանութեան.

երկրորդ անգամ պաշտօնից հրաժարելուն,  
նորից ծուխի վրա չնշանակելու արգելքով:

Նոյն պատժին են ենթարկուամ, ժամանակաւոր  
իրենց ծուխի մէջ եկող նորեկներին պսակող

քահանաներն, առանց վկայական ունենալու, որ  
այդ անձն ամուսնացած չէ:

1578. Եթէ կաթոլիկ, հայ-լուսաւորչական  
և հայ-կաթոլիկ քահանան կամ բողոքական դա-  
ւանութիւններից մէկի քարոզիչը թոյլ տայ իրեն  
յայտարարելու որ և է պսակ լուծւած, կամ օրհ-  
նել, թէկուզ ամուսինների սեղանի և անկողնի  
ժամանակաւոր բաժանումն, առանց այդ մասին  
իշխանութիւն ունեցող բարձր տեղի վճռի, այն  
ժամանակ դրա համար նա ենթարկուամ է

կամ խիստ յանդիմանութեան,

կամ պաշտօնից հեռացւելուն.

կամ կոչումից զրկւելուն,

իր հոգևոր իշխանութեան հայեցողութեան հա-  
մաձայն:

1583. Կնոջը հասցրած խեղանդամութեան,  
վէրքերի, ծանր հարւածների կամ այլ տանջանք-  
ների կամ շարչարանքների համար, յանձաւորն  
ենթարկուամ է,

1477—1496 յօդւածների մէջ որոշւած պա-  
տիժներին՝ երկու աստիճանով բարձրացրած.

Բացի դրանից, եթէ մեղաւորը քրիստոնեայ է,  
նա յանձնուամ է եկեղեցական ապաշխարանքի  
իր դաւանութեան հոգևոր իշխանութեան կար-  
գադրութեամբ: Նոյն պատիժներին և նոյն հի-  
ման էլ վրա ենթարկուամ է և կինը, որ օգտու-  
լով ամուսնու թուլութիւնից, թոյլ կտայ իրեն  
նրան հասցնել վէրքեր, անզամների խեղումներ,

ծանր հարւածներ կամ այլ տանջանքներ և չար-  
րանքներ:

1584. Ամուսինը, միւս ամուսնու հաւատար-  
մաթուղթն և նրա վրա ունեցած իշխանութիւնը  
'ի չարը գործ դնելով կը դրդի և կատիպի նրան  
որ և է ապօրինի գործի կամ գործողութեան,  
դրա համար ենթարկուի է—

այդ ապօրինի գործողութեան համար սահ-  
մանաւած բարձր չափի պատիժներին և պա-  
հանջներին:

1585. Պոռնիկութեան մէջ բռնուող ամուսին  
ունեցող անձն ենթարկուի է դրա համար, պա-  
տիւր վիրաւորւած ամուսնու բողոքի համաձայն,  
վանքում բանտարկութեան, եթէ այն տե-  
ղում նրա գաւանդութեան վանք կայ, կամ  
թէ բանտարկութեան 4—8 ամիս ժամանակով:  
Բացի դրանից, եթէ նա պատկանում է բրիտ-  
տոնեայ որ և է մէկ գաւանդութեան,

յանձնւում է եկեղեցական ապաշխարանքի  
իր հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ:  
Այն անձը, որի հետ պսակել է, եթէ նա ամուս-  
նացած չէ, դատապարտուում է—

կամ բանտարկութեան 2 — 4 ամիս ժամա-  
նակով,

կամ բանտարկելութեան երեք շաբաթից  
երեք ամիս ժամանակով.

և, եթէ նա քրիստոնէութիւն է դաւանում

յանձնւում է եկեղեցական ապաշխարանքի:

Քաղաքացիական դատավարութեան կանոնագիրը.

1337. Քաղաքացիական դատարանին են-  
թակայ են գոյութիւն ունեցող պսակի հետ կապ-  
ւած քաղաքացիական անձնական և ստացւած-  
բային իրաւունքների մասին գործերը, ինչպէս  
իրենց — ամուսինների, այնպէս էլ նրանց ամուս-  
նութիւնից ծնած որդիների:

1338. Քաղաքացիական դատարանում գոր-  
ծը դադարեցնւում է երբ նրա մէջ ներկայանում  
են այնպիսի հանգամանքներ, որոնք հոգևոր դա-  
տարանի հայեցողութեան են ենթակայ, և երբ  
ուանց դրանց լուծելու չի կարելի քաղաքացի-  
ական պահանջի մասին վճիռ դնել, որի մասին  
և յայտարարուում է դատուող կողմերին:

1339. Ամուսնութեան հետ կապւած իրա-  
ւունքների մասին գործերն սկսւում են այն նա-  
հանգական դատարանում, որի շրջանում բնակ-  
ւում է պատասխանատուն. իսկ երբ գործի մէջ  
պատասխանատու անձ չկայ, այն ժամանակ  
պահանջատիրոջ բնակութեան տեղի համեմատ:

1340. Ամուսինների մէկի մահից երկու տարի  
անցկենալուց յետոյ, ամուսնութեան հետկապւած  
անձնական քաղաքացիական իրաւունքների մա-  
սին որ և է վէճ բանալու իրաւունքը ոչնչանում է  
ինչպէս կենդանի մնացած ամուսնու համար, նոյն-

պէս և այդ ամուսնութիւնից ծնած որդիներին:

Ծանօթութիւն. — Այս (1340) յօդուածի մէջ գրածագրւած կանոնը չի տարածուում մինչև 1850 թ. փետրուարի 6-ը կատարւած ոչ պատկենքի և ոչ այդ պատկենքից ծնած երեխաների վրա:

1341. Գործին կցելու համար Հոգևոր իշխանութեան արձանագրական և այլ գրքերից քաղածքներ խնդրելիս, պահպանուում են 452 և 453 յօդածների մէջ սահմանուած կանոնները \*):

1342. Դատուողների ներկայացրած վաւերացութիւնը համեմատելն և ստուգելը հոգևոր վարչութեան արձանագրական գրքերի հետ կատարուում է դատարանի անդամի գատող կողմերի ներկայութեամբ, այն տեղերում, ուր պահուում են այդ գրքերը:

Ծանօթութիւն. — Այն տեղերում, ուր մտցրւած է համայնական շրջանային Գաւառապետների մասին կանոնագիրքը, գրաւոր ապացոյցների ստուգութիւնը

\*) 452. Իսկական վաւերացութիւնը կամ տեղեկութիւններ պահանջելու համար, որ գտնուում են այլ դատաստանական կամ կառավարչական ատեանի կամ պաշտօնէի գործերում կամ ակտերի մէջ, դատադին, նրա խնդրի համաձայն տրուում է վկայական այն մասին, որ իսկական վաւերացութիւնը կամ տեղեկութիւնները անհրաժեշտ են և յատկապէս ի՞նչ գործի համար:

453 Բոլոր դատաստանական և կառավարչական հիմնարկութիւններն և պաշտօնեաները պարտաւոր են վկայական ներկայացնելուց յետոյ, նրա բանաւոր խնդրի համաձայն անմիջապէս տալ դատուողին կամ նրա զրուար խնդրի համաձայն ուղարկել պահանջուած տեղեկութիւններն և վաւերացութիւնի պատճէնները: Գրաւոր խնդրի համաձայն այդպիսի տեղեկութիւններ և պատճէններ պէտք է տրւին և առանց վկայագրի:

այն քաղաքից դուրս, ուր գտնուում է նահանգական դատարանը, այս յօդուածի մէջ առւած դէպքերում... նահանգական դատարանից յանձնարարուում է տեղական Գաւառային անդամին:

1343. Վճիռները դրուում են ոչ այլ կերպ, քան դատախազին լսելուց յետոյ:

1344. Դատախազի վրա է զբւած պահանջատիրոջ անկանոն պահանջները հերքելու պատշաճաւոր ապացոյցներ ժողովելը:

1345. Նախնիթաց յօդուածի մէջ նշանակուած գործերում, դատախազն իրաւունք ունի բողոքել դատարանի վճռի դէմ, պահպանելով մասնաւոր մարդոց դատարանական վճիռների դէմ բողոքներ տալու մասին ընդհանուր կանոնները:

Քրէական դատաւարութեան կանոնագիրք.

1011. Հոգևոր վարչութեան մէջ, իրենց եկեղեցական կանոնների խախտումն պարունակող գործեր ըննելիս եթէ երևան գան քրէական դատարանին ենթակայ յանցանքներ, հոգևոր իշխանութիւններն այդ մասին նահանգական դատարանի Դատախազին են տեղեկութիւն տալիս, որոնք այդ գործերին յետագայ ընթացք տալու մէջ վարուում են սահմանուած կարգի համաձայն:

1012. Բռնի, խարբրայութեամբ կամ ամուսնացողներից մէկի կամ երկուսի խելագարութեան ժամանակ կատարուած ամուսնութեան գործերն սկսուում են քրէական դատարանում,

որի վճիռը բռնութեան կամ խաբեբայութեան մասին յայտնուում է հոգևոր դատարանին, ինչպէս ամուսնութեան վաւերական կամ անվաւեր լինելը վճռելու համար, նոյնպէս և պսակը կատարող հոգևոր կոչման անձանց պատասխանատուութիւնը որոշելու համար:

1013. Քրիստոնեայ դաւանութեան անձանց բազմակուլութեան գործերի համար, մեղաւորները յանձնուում են բրէական դատարանին ոչ առաջ, քան հոգևոր դատարանից ճիշտ տեղեկութիւններ պահանջելը, գոյութիւն ունեցող պսակի ժամանակ նոր պսակ կատարելու մասին: Նոյն կարգով հոգևոր դատարանից պահանջուում են տեղեկութիւններ ամուսնութեան մէջ չըզտնուած անձանց ազգապղծութեան գործերի մասին:

1014. Արենակցութեան կամ խնամիութեան անթոյլատրելի աստիճաններում ամուսնանալու, քրիստոնեաների՝ ոչ քրիստոնեաների հետ արգելւած պսակի մասին... գործերը՝ մեղաւորի վրա հոգևոր դատաստանի վարջանալուց յետոյ մտնում են բրէական դատարանը:

1015. Սոյն կարգին հետևում են ամուսնութեան այլ գործեր, որոց մէջ բրէական դատարանը, հոգևոր դատարանից իրեն անցնելուց յետոյ, որոշում է մեղազրւածի բրէական պատասխանատուութիւնը, և նոյնպէս հոգևոր կողման այնպիսի անձանց պսակների մասին գործէրը, որոնց իրենց եկեղեցու օրէնքով արգելւած է ա-

մուսնանալ, եթէ յանցաւորը գործ է դրել դրա համար խաբեբայութիւն և կեղծիք:

1016. Ամուսիններից մէկի բողոքի համաձայն, միւս ամուսնու ամուսնութեան սրբութիւնը խախտելու վերաբերեալ գործերը տեսնում են

կամ 1) բրէական դատարանով, երբ վիրաւորւած ամուսինը խնդրում է բրէական օրէնքների համաձայն մեղաւորին պատժելու համար (պատժ. Օրէնսգ. յօդ. 1585).

կամ 2) հոգևոր դատարանով, երբ վիրաւորւած ամուսինը խնդրում է ամուսնութիւնը լուծել և յանցաւորին պատժել եկեղեցական կանոնների համաձայն:

և օրհնութեամբ կատարել...: Որպէս Մովսէսը պատուիրեց... ոչ որ չհամարձակի մերձենալ... իւր արենակից մերձաւորին... (չմերձենալ) և չպղծելի դստեր հետ, խորդ և հարազատ քրոջ հետ. հօր կնոջ հետ (խորդ մօր). հօրաքրոջ հետ, քրոջ որդու հետ... նոյնպէս և սահմանելով այս Առաքելական կանոններովս կարգում ենք, որ ամեն մարդ չհամարձակի մերձենալ կամ ամուսնութեամբ կամ շնութեամբ մինչև չորրորդ գարմը:

Ներկորդ խումբ կանոններից.

Կանոն 15-րդ. -- Ով որ սուրբ մկրտութիւնից յետոյ կրկնակի ամուսնութեամբ կապւած եղաւ, կամ հարճ ունի, նա չի կարող ոչ եպիսկոպոս ոչ էրէց ոչ սարկաւազ և ոչ էլ որ քահանայական կարգից (ըստ յունա-սլաւոնականի 17-րդ կանոն):

— 16-րդ. — Ով կին կառնի այրու կամ մերժուածի (ամուսնութիւնը լուծւածի) կամ անառակի, կամ գերուհու, կամ անւանարկի, չի կարող լինել եպիսկոպոս, քահանայ, սարկաւազ, եկեղեցական այլ պաշտօնեայ: (18 կ. յունասլաւոնական):

— 17-րդ. — Ով կին է առել երկու քոյր կամ քեռորդի, եղբօրորդի, նա չի կարող հոգևորական լինել. (19-րդ.):

— 24-րդ. — Հոգևոր կոչման մէջ մըտնողներից, որ կը ցանկան ամուսնանալ (այդ կոչ-

### Բ. ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

#### I. Առաքելական կանոններ.

Առաջին խումբ կանոններից

Կանոն 33-րդ. — Առաքելները կարգեցին, եթէ եկեղեցու ուխտից և պաշտօնեաներից մէկը կամենայ կոյս լինել (չամուսնանալ), բարի գործանել է ցանկանում, համարձակ կարող է՝ վանք շինելով (վանքում ապրելով). պիտի պարկեշտանալով զգուշանան կերակրներից, հեռանան զինւորական զգեստից (հանեն), որպէս զի զարգարւելով՝ Աստուծոյ պաշտօնեայ հրեշտակներին և երկնքի զուարթուններին նմանին: (Խօսքը պարկեշտ կեանքով զարգարւելու մասին է.)

Կանոն 34. — Առաքելները կարգեցին և հաստատութեամբ դրին, որ ինչպէս սկզբից մարդու ամուսնութիւնը զուգեց (Աստուած) և իրաքօգնական արաւ և օրհնեց նրանց, նոյնպէս և առաքելական հրամանով սահմանած և հաստատւած ամուսնութեան կարգը քահանայի ձեռքով

ման մէջ գտնուելիս), թոյլատրում ենք ընթերցողներին և երգիչներին (զպիրների) (26-րդ):

— 45-րդ. — Ժողովրդականներից եթէ մէկը արձակելով իր կնոջը, ուրիշին կառնի. կամ կառնի արձակածին, թող մերժւած լինի (48-րդ):

— 46-րդ. — Եթէ մէկը եպիսկոպոսներից, սարկաւազներից և կամ առհասարակ հոգևոր կոչմանից հեռանայ ամուսնութիւնից, մսից և գինուց ոչ պահեցողութեան համար, այլ պիղծ, գզելի համարելով դորա, մոռանալով որ ամենայն բան բարի է, և որ Աստուած արու և էգ է (այլ և կին) ստեղծել, և այդպիսով անգոսնում է Աստոծոյ ստեղծւածին. կամ ուղղուի (այդպիսին) կամ մերժուի եկեղեցուց և լուծւի կարգից: Նոյնը և աշխարհականների վերաբերմամբ (51-րդ):

— 62-րդ. — Եթէ մէկը կոյս բռնաբարի և առնի, թող (իւր յանդգնութեան համար) մերժուի եկեղեցու հետ հաղորդութիւն ունենալուց: Նրան թոյլատրելի չէ ուրիշին առնել, այլ պիտի առնի նրան, որին ընտրել է, եթէ նոյն իսկ արատաւոր էլ լինի, (67-րդ):

II. Մեկիւրիսայի տեղական ժողովի կանոններ.

Կանոն 10-րդ. — Սարկաւազ ձեռնադրւողները, եթէ ձեռնադրուելիս յայտարարեն, որ նորա պէտք է ամուսնանան և չեն կարող առանց զբան կենալ, այդպիսիները զբանից յետոյ ամուսնանալով մնան իրենց ծառայութեան մէջ,

բանի որ այդ թոյլ է տրւած նրանց՝ եպիսկոպոսից. իսկ եթէ այդ մասին լռելով և ձեռնադրելով այն պայմանով, որ առանց ամուսնութեան լինին՝ յետոյ ամուսնանան, այդպիսիները զազարեն սարկաւազութեան ծառայութիւնից:

— 11-րդ. — Նշանած աղջիկներին յետոյ եթէ փախցնեն ուրիշները, պէտք է վերագարձնել նախկին նշանածներին. եթէ նոյն իսկ բռնաբարել են փախցնողներից:

— 19-րդ. — Կուսութեան ուխտ անողները և յետոյ այդ ուխտը քանդողները, կրկնամուսինների մասին զբւած ապաշխարանքը թող քաշեն: Իսկ աղջիկներին օտարների հետ ապրելը, իբր իրենց եղբոր հետ, մենք անթոյլատրելի ենք հաշուում:

— 20-րդ. — Եթէ մէկի կինը անառակութիւն արաւ, և կամ որեւէ մէկն անառակութիւն արաւ, այդպիսիներին հարկ է եօթը տարի ապաշխարել:

III. Նոր Գեօարեայի կանոններ.

Կանոն 1-րդ. Քահանան եթէ ամուսնանայ, թող կարգից զրկւի:

— 2-րդ. — Եթէ մի կին երկու եղբոր հետ պսակւի (մէկի մահից յետոյ) թող մինչի մահ մերժւած լինի եկեղեցուց: Բայց եթէ մահւան ժամին խոստանայ լուծել պսակը, թող ըստ մարդասիրութեան՝ ապաշխարութեան թոյլ տրւի: Իսկ եթէ մարդը կամ կինը կմեռնի, այդ ամուս-

նութեան մէջ, կենդանի մնացածին ապաշխարել զժուար է:

IV. Գանգրի ժողովի կանոններ.

Կանոն 1-րդ. — Եթէ մէկը կախարակի պըսակը, իր հաւատարիմ պարկեշտ կնոջից կը զրկւի կամ կանգոսնի նրան, իբր թէ չի կարող մտնել երկնային թագաւորութիւն (ամուսնութեան մէջ եղած ժամանակ) թող այդպիսիները նզովքի տակ լինին:

— 9-րդ. — Եթէ մէկը կոյս է մնում կամ ժուժկալութեան համար հեռանում է ամուսնութիւնից, իբր նրանից զգւելու համար և ոչ բարիքի և կուսութեան սրբութեան համար, այդպիսին թող նզովքի տակ լինի:

— 10-րդ. — Եթէ ՚ի փառս Աստուծոյ կոյս մնացողներէց մէկը իրեն կը գերադասի ամուսնացողներէց, նզովքի տակ լինի:

— 14-րդ. — Եթէ կինը զգւելով պսակից կը թողնի մարդուն և կերթայ, թող նզովքի տակ լինի:

V. Լաօդիկէի ժողովի կանոններ.

Կանոն 10-րդ. — Եկեղեցականները չպէտք է աւանց ընտրութեան պսակին հերետիկոսների հետ:

— 31-րդ. — Պատշաճ չէ ամեն հերետիկոսի հետ ամուսնանալ, կամ այդպիսիների տալ

տղաներին կամ աղջիկներին, բայց լաւ է նրանցից առնել, եթէ մեզ հետ կը շուսաւորին ՚ի Քրիստոս (կը հաւատան):

— 52-րդ. — Քառասնորդական պատին պատշաճ չէ պսակ անել կամ ծննդեան տօն կատարել:

VI. Քարսեղ Մեծի կանոններ.

Կանոն 4-րդ. — Եւուպսակների և բազմապըսակների մասին սահմանեցինք նոյն կանոնը, ինչ որ և երկպսակների (երկրորդ անգամ ամուսնացողների) մասին համապատասխան իւրաքանչիւր տեսակին: Կրկնապսակներին մերժում են մի տարի, իսկ ուրնշները երկու տարի. եւուպսակներին երեք տարի, բայց յաճախ չորս տարի, այդ պսակը կոչում են տրդէն ոչ ամուսնութիւն, այլ բազմակնութիւն...:

— 6-րդ. — Աստծուն նւիրւածների անառակութիւնը ամուսնութեամբ չպիտի վերջաւորել, այլ նրանց ապօրինի կապը պիտի բանդել:

— 9-րդ. — Տիրոջ խօսքի համաձայն չըպէտք է լուծել ամուսնութիւնը, եթէ ոչ անառակութեան համար. ըստ մտաց գորա այդ բանը հաւասարապէս վերաբերում է և մարդուն և կնոջը: Բայց ըստ սովորութեան այդպէս չէ: Կանանց մասին շատ խիստ ասմունքներ կան: Ըստ այսմ ամուսնուն թողած կինը, եթէ ուրիշի հետ

է ապրում, անառակութիւն է անում, իսկ թողնւած մարդը արժանի է ներդրամտութեան և նրա հետ կենակցողը չի մեղադրում: Եթէ ամուսինը հեռանալով կնոջից, կառնի ուրիշին, այն ժամանակ և ինքը անառակութիւն անող է, քանի որ նրա հետ անառականում է. նրա հետ ապրող կինն էլ անառակ է, որովհետև զբաւել է զէպի ինքը ուրիշ մարդուն:

— 21-րդ. — Եթէ ամուսնացած մարդը չբաւականանալով իր պսակով (կնոջով) կընկնի անառակութեան մէջ, այդպիսին հաշուում ենք անառակ և երկար ժամանակ նրան թողնում ենք ապաշխարանքի տակ: Բայց կանոն չունինք նրան անառակութեան յանցանքին ենթարկելու, եթէ մեզքն արւած է ամուսնութիւնից ազատի (չբաւակաւածի, մարդ չունեցողի հետ) հետ, որովհետև ասւած է. — անառակը պիղծ հաշուի և մարդուն չգանայ: Նոյնպէս և անառակին առնողը անմիտ է և պիղծ: Բայց անառակութիւն անողը չի բաժանում իր կնոջը կենակցելուց և կինը պարտաւոր է ընդունել իր մարդուն, որ դարձել է անառակութիւնից: Բայց ամուսինն իր պղծւած կնոջը դուրս է անում իր տնից: Սրա պատճառը (բացատրութիւնը) տալը հեշտ չէ, բայց այսպէս է ընդունւած սովորութեամբ:

— 22-րդ. — Փախցրած կին ունեցողները, եթէ ուրիշներին նշանածներն են խլել, արժան է ընդունել ապաշխարութեան ոչ առաջ,

քան թէ, երբ նորա առնւած կլինին նրանցից (փախցնողներից) և նախկին նրանց հետ նշանածներին է վերապահում իրաւունք (իշխանութիւն) առնել նրանց, եթէ կամենում են, կամ թողնել: Իսկ եթէ մէկը կը փախցնէ նշանւածի, պէտք է ետ վերցնել նրան և վերադարձնել ազգականներին... Եթէ ազգականները կուզենան նրան տալ, այն ժամանակ ամուսնութիւնը (կենակցութիւնը) հաստատում է, իսկ եթէ չեն ուզենալ, չպէտք է բռնադատել...:

— 23-րդ. — Երկու քրոջ հետ ամուսնացողի, կամ երկու եղբօր կին դարձողի մասին մեզնից հրահանգ կայ...: Իսկ իր եղբօր կնոջն առնողը չի ընդունւի մինչև չի թողնի նրան:

— 26-րդ. — Անառակութիւնը ամուսնութիւն չէ և մինչև իսկ ամուսնութեան սկիզբը չէ: Ըստ այսմ անառակութեամբ կենակցողները եթէ կարող են թող բաժանին, իսկ եթէ կը կենակցեն, թող անառակութեան համար ապաշխարանքի ենթարկին...:

— 30-րդ. — Կին փախցնողների մասին մենք հին կանոն չունինք, բայց կազմել ենք սեփական կարծիք: — և նորա և նրանց օգնողները թող մերժուին խմբովի աղօթքից երեք տարի:

— 31-րդ. — Անյայտ բացակայող մարդու կինը, նախ քան ամուսնու մահւան մասին հաստատ տեղեկութիւն ստանալը, եթէ կենակցի ուրիշի հետ, անառակութիւն է անում:

— 35-րդ. — Եթէ կինը թողել է մարդուն, արժան է քննել թողնելու մեղքը, և իթէ երեան գայ, որ նա թողել է մարդուն առանց պատճառի, նա արժան է ներողամտութեան, իսկ կինը ապաշխարանքի: Դէպի նա ներողամտութիւնը կայաննում է նրանում, որ թող հաղորդակցի եկեղեցու հետ:

— 36-րդ. — Անյայտութեան մէջ գրտնուող զինուորների կանայք, որ ամուսնանում են ուրիշների հետ, ենթակայ են այն դատապարտութեանը ինչպէս և նորա, որոնք բացակայող ամուսնու վերադարձին չսպասեցին (ամուսնացան): Բայց այսպեղ գործը արժան է որոշ ներողամտութեան, քանի որ աւելի հաւանական է մահւան մասին ենթադրութիւնը:

— 37-րդ. — Ամուսնացող մարդը, նրանից ուրիշի կինը վերցնելուց յետոյ, առաջնի համար կը մեղադրւի անառակութեան մէջ, իսկ միւսի նկատմամբ անմեղ է:

— 38-րդ. — Առանց հօր համաձայնութեան մարդու գնացող աղջիկը՝ անառակութիւն է անում: Բայց ծնողների հետ հաշտելով այդ գործն ամուսնութիւնով է վերջանում (ընդունուում է իբր ամուսնութիւն): Բայց նորա իսկոյն չեն թոյլատրում հաղորդութեան, այլ երեք տարի արգելք է զըլում:

— 39.— Անառակի հետ ապրողը անառակ է, կենակցութեան ամբողջ ժամանակում:

— 40-րդ.— Տիրոջ կամքի հակառակ ամուսնացող կինը, անառակութիւն է անում:

— 41-րդ.— Այրին ինքն իր մէջ իրաւունք ունենալով, կարող է ամուսնանալ:

— 42-րդ.— Կամքի հակառակ եղած պսակը անառակութիւն է: Հօր կամ տիրոջ կենդանութեան ժամանակ ամուսնացածները առանց մեղքի չեն, քանի զեռ նրանց վրա իշխանութիւն ունեցողները չեն յայտնել համաձայնութիւն նրանց կենակցութեանը, որովհետև այդ ժամանակ է ամուսնութիւնը հաստատում:

— 46. Եթէ մէկը կնոջից թողնւած մի մարդու հետ ամուսնանայ անտեղեակ լինելով այդ մասին, յետոյ նախկին կնոջ իրեն մարդուն վերադառնալու պատճառով թողնւածը՝ այդ ամուսնական կապի միջոցով անառակութիւն էր անում, բայց անգիտութեամբ: Գրան պսակ անթոյլատրելի չէ, բայց լաւ է այնպէս մտայ (չամուսնանայ):

— 48-րդ. — Ամուսնուց արձակւած կինը, իմ կարծիքով, պէտք է անպսակ մնայ...: Տիրոջ խօսքի համաձայն, ով կարձակէ իր կնոջը, նրան պոռնկանալ կտայ. ուրեմն, անուանելով նրան պոռնկացող զրանով նրան արգելում է ապրել ուրիշի հետ:

— 50-րդ. Եռամուսնութեան մասին կանոն չկայ (այսինքն կանոն չկայ որ երրորդ ամուսնութիւն կարելի է) ըստ այսմ կանոնի եր-

ըորդ ամուսնութիւն չի կայանայ:... Նրան չենք ենթարկի ի լուր ամենրի դատապարտութեան. դա աւելի լաւ ենք հաշուում, քան անառակութիւնը:

— 53-րդ. — Այրիացած ստրկուհին շատ չի մեղանշում, եթէ երկրորդ անգամ ամուսնանայ:

— 63-րդ. — Կոյս մնալ խոստացողը և իր խոստումին զրժողը, թող կատարի անառակութեան մեղքը համար ժամանակի պատիժը:... Նոյնը և կուսակրօնութեան ուխտ անողների և զրժողների նկատմամբ:

— 67-րդ. — Եղբոր և քրոջ ազգապղծութիւնը պահանջում է մարդասպանի մասին որոշած ժամանակի ապաշխարութիւնը:

— 68-րդ. — Ազգակցութեան արգելած ատիճանում պատահած մարդկանց ամուսնութիւն եթէ նկատուի, ինչպէս մարդկային մեղք, ենթակայ է անառակների ապաշխարանքին:

— 75-րդ. — Տօր կողմից կամ մօր կողմից իր քրոջ հետ մեղանշողը, թող թոյլ չտրւի աղօթատուն մտնելու, մինչև որ ապօրինի և զագրալի գործից ետ չկանգնի: (Ետ կանգնողը իննք տարի ապաշխարի եթէ) ապաշխարանքի արժանի պտուղներ կտայ, տասերորի տարին թող ընդունւի հաւատացեալների հետ աղօթելու, առանց հաղորդելու. երկու տարի հաւատացեալներէ հետ կանգնած աղօթելով, վերջապէս թող արժանանայ հաղորդութեան խորհրդին:

— 76-րդ. — Նոյն կարգը և իր հարսի հետ յարաբերութիւն ունեցողի վերաբերմամբ:

— 77-րդ. — Իր օրինաւոր ամուսնուն թողնողը, ուրիշին ուզողը, ըստ տիրոջ ասութեան անառակի մեղքին արժանի լինի: (Այգպիսիները, 7 տարի ապաշխարեն):

— 78-րդ. — Նոյն պատժին ենթարկուի երկու քրոջ առնողը, թէկուզ այդ լինի գանազան ժամանակներում:

— 79-րդ. — Խորդ մօր հետ մեղանշողը ենթակայ է նոյն կանոնին, ինչի և ենթարկւում է քրոջ հետ մեղանշողը:

— 80-րդ. — Բազմամուսնութեան մասին Հայրերը լռել են, ինչպէս որ մարդկային ցեղին խորդ և անասնական գործի մասին: Իսկ մեզ համար այդ մեղքը անառակութիւնից ծանր է: Ըստ այսմ բարի կլինի այգպիսիներին ապաշխարանքի ենթարկել կանոնով, այսինքն մի տարի արտասուողների, երեք տարի ծնրազրոյների և յետոյ կարող են ընդունուել:

VII. Հայ եկեղեցու կանոններ.

1. Գրիգոր Լուսաւորիչ

Կանոն 2-րդ. — Այն բահանան որ կամուսնանայ, հինգ տարի ապաշխարէ զրսում, երկու ներսում և երկու տարի չհաղորդուի և յետոյ հաղորդուի:

— 5-րդ. — Եթէ (ամուսնացողներից) մէկը

կոյս է և միւսը երկրորդ պսակ երկու տարի  
գուրսը և մի տարի ներսում ապաշխարեն:

— 6-րդ. — Եթէ մէկն երկրորդ կինը թողնի  
և առաջին արձակած կնոջը դառնայ, եօթը  
տարի դրսում և մի տարի ներսում ապաշխարի:

— 9-րդ. — Թէ որ մէկը աղջիկ փախցնէ,  
պսակը անվաւեր լինի, և պսակածը ում կամե-  
նայ նրան լինի:

— 23-րդ. — Ով պոռնիկութեան համար ար-  
ձակէ իր կնոջը, թող արձակէ, բայց մի տարի  
սրբուի:

— 24-րդ. — Եթէ ամուսինն իւր կնոջը թող-  
նի աստուածապաշտութեան պատճառով, թող  
նդոված լինի կենդանի ժամանակ և յետ մահւան:

— 30-րդ. — Կոյսը, որ իր անձը նուիրում է  
Աստծուն, նոյնպէս միայնակեացը (վանականը)  
չհամարձակի ամուսնանալ, բայց եթէ այդպէս  
պատահի, նրա հետ հաղորդակցութիւնից հեռա-  
նայ թող. եպիսկոպոսը նայի նրա վարքին և  
ինչպէս կամենում է թող մարդասիրութիւն ցոյց  
տայ դէպի նա:

II. ԱՅՏԻՇՄԱՏԻ ԺՈՂՈՎ.

Ներսէս Մեծի զումարած ազգի և եկեղի-  
ցու ներկայացուցիչների ժողովում ընդունում է  
իբր պարտադիր կանոն շամուսնանալ մերձաւոր  
արենակիցների հետ, սակայն չի որոշում յատ-  
կապէս աստիճանները, թէ ինչպիսի արենակից-

ների պսակներին են թոյլատրելի և որպիսիք ան-  
թոյլատրելի:

3. Շահապիվանի ժողով.

— 2-րդ. — Եթէ էրէցի կամ սարկաւազի  
կինը պոռնիկութիւն անի և յանցանքը վրէժն հաս-  
տատուի, դորա կամ մեղաւոր կանանց պարտա-  
ւորվին արձակել և կամ իրենք թողնեն իրենց  
կոշումը: Եթէ էրէցը մեռնի, նրա կինը չհամար-  
ձակի մարդու գնալ, և ոչ էլ էրէցը կին առնի  
(իւր կնոջ մահից ետ.):

— 3-րդ. — Եթէ մէկը կին ունի և պոռնի-  
կութիւն անի և ամուսնական կարգը սրբութեամբ  
չպահի... այնպիսի մարդուն կշտամբեն, տուգա-  
նեն և ապաշխարութեան ենթարկեն:

Եթէ այր կամ կին նախքան ամուսնութիւնը  
յարաբերութիւն ունենան, կամ օտարի կամ նրա  
հետ որին նշանադրել են, տուգանք վճարեն  
կոյսի ծնողները. թէ որ կամենան այդ աղջկան  
կին առնել առաջ ապաշխարութեամբ պիտի  
մարըլին, և եթէ պսակելու գան իբրև կոյսերի  
չօրհնել այլ, իբրև երկեակների լոկ տեսանաղբեն:  
Եթէ աղջկայ կամքովն է հայրն ու մայրը մի-  
այն տուգանք տան: Եթէ մէկը կոյս է միւսը ոչ,  
կոյսին կոյսի պսակ կատարել, միւսին երկրորդ  
ամուսնացողի պսակ:

— 4-րդ. — Եթէ մէկը թողնի իր կնոջն ա-  
ւանց պոռնիկութեան պատճառի, կամ մարմա-

կան արատի համար, պէտք է բաժանէ որդոցը, կայքը, հողը, ջուրը և կէսը կնոջը տայ: Եթէ ցանկայ (կինը) ուրիշի գնալ, բաժինը արքունիքին լինի. իսկ մարդը որ թողել է կնոջը, եօթը տարի ապաշխարի, եկեղեցուն տուգանք վճարէ՝ եթէ ազատ (ազնւական) է՝ երեք հարիւր դրամ, եթէ գիւղական է՝ ծեծ ուտէ և հարիւր դրամ տայ եկեղեցուն՝ օրհնութեամբ եղած պսակը բանդելու համար:

— 5-րդ. — Եթէ մէկն ամուսնացաւ և կինն ամուլ — չբեր եղաւ ու մարդը նրան հեռացնէ ամուլութեան պատճառով, կինն ինչ որ բերել էր իր հետ՝ իրաւունք ունի առնել և գնալ: Իսկ եթէ բացի ամուլութիւնից այլ արատ չկայ, կնոջը տուգանք ևս վճարէ թող, նրան հասցրած անարգանքի փոխարէն, եթէ ազատ է՝ հազար երկու հարիւր դրամ, եթէ գեղական է՝ հազար դրամ...: Ով որ որդոց մայր թողնի (արձակէ) կամ ամուլին առանց պոռնիկութեան պատճառի կամ այլ արատի, մարդու և կնոջ պատուհասը, տուգանքը և ապաշխարութիւնը այս կանոնիս սահմանով լինի:

— 6-րդ. — Եթէ կինը մարդուց հեռանայ, նրան բռնեն և տանեն մարդուն...: Եթէ մարդը չարաբարոյ կամ պոռնիկ է, կամ արբեցող, կամ արատաւոր, ծեծով և խրատով կշտամբեն և նրան կարգի բերեն, եթէ մարդը հեշտութեամբ փոխւի, կինը նրան գնայ:

— 7-րդ. — Եթէ բռնութեամբ և անիրաւութեամբ մէկն առևանկութիւն կատարէ, խլին նրանից կնոջն և յանձնեն իւր ծնողներին, եթէ ազատ է 1200 դրամ, եթէ 'գիւղական' 700 դրամ առնեն նրանցից անարգանքի համար: Փախցնողին օգնող անձինք վճարեն 100 դրամ, կէսը եկեղեցուն, կէսը կարօտեալներին:

Եթէ փախցնողն առանց պսակի յարարութիւն ունեցաւ աղջկայ հետ, 100 դրամ եկեղեցուն տուգանք տայ և 3 տարի էլ ապաշխարի: Եթէ այդ խռովութիւնից յետոյ, էլի ծնողների և աղջկայ համաձայնութիւնը պսակելու համար առնւի, այն ժամանակ պսակը օրհնեն իբրև երկեակի՝ ուր խաչակներն և գլխին զնեն, իսկ եթէ կոյս են մնացել, օրինաւոր պսակին: Եթէ փախցնելու ժամանակ բահանան գաղտնի կերպով պսակի նրանց առանց ծնողների հաճութեան, քահանայագործութիւնից զրկւի. 100 դրամ կարօտեալներին տայ, պսակն էլ անվաւեր լինի:

— 12-րդ. — Եթէ որդին հօր կնոջը (իր խորդ մօրը) առնի, կանոնս այդ չի ընդունում, սուրբ եկեղեցի շմտնէ նա և ամբողջ ժողովիցս նզովւած լինի, մինչև որ դարձի գայ, և ապաշխարէ, եօթը տարի ունկնդիրների հետ և երեք տարի հսկութեան տակ. 50 դրամ աղքատներին տայ, 50 դրամ եկեղեցուն տայ և վարքը քննելուց յետոյ՝ հազորդուի: Եթէ հայրը որդու կինն առնի և

եղբայրը եղբօր կինը, նոյն պատուհասը և նգով-  
րը լինի (նոցա համար էլ):

— 13-րդ. — Ով ազգականին կին առնէ, այս  
պղծութիւնն ու գարշելի բանը յայտնւի, և ձեր  
մէջը մէկն անւանւի... ըստ ասութեան Մովսիսի,  
անիծեալ լինի նա, ով կննջէ իւր արեան մերձա-  
ւորի հետ: Արդ, ոչ որ չհամարձակի Աստուած-  
պաշտութեան, բրիստոնէութեան և տէրունա-  
կան մկրտութեան կնիքն և արքունական գրոշմը  
զգեցողներից առնել կին բրոջը, կամ բրոջ որ-  
դուն կամ եղբօր որդուն և հօրաբիոջը և կամ  
իւրայիններից մի այլ որի մինչի չորրորդ գար-  
մը...: Արդ, եթէ մէկն ընդդիմանալով այս կա-  
նոնիս և հաստատուած օրէնքիս և ամբարշտանա-  
լով՝ զէպի հեթանոսութիւն և հրէութիւն կործան-  
ւի, նրա բաժինը նոցա հետ լինի և եկեղեցուց  
օտանանայ թող... Ապա եթէ նորա չհեռանան  
այդ պիղծ ամուսնութիւնից և պսակադիր բա-  
հանան էլ, որ խորհուրդն է կատարել, չմօտենան  
աթոռին և քահանայութեանը. թէ ազատ լինի,  
թէ գիւղական օրէնքն ու կանոնը այդ պիտի մնան:

4. Դուքի եկրորդ ժողով.

Կանոն 5-րդ. — Երկրորդ անգամ ամուսնա-  
ցողները գրակարգացներ և այլ ատտօնեաներ  
լինին թէև, զինւորների հետ կանգնեն (եկե-  
ցում) իրենց ուխտազանցութեան համար...:

— 24-րդ. — Տղայոց պսակը չհամարձակին

օրհնել, և ոչ էլ չափահասների՝ տղայի և աղջկայ՝  
առանց միմեանց տեսնելու. որովհետև այսպիսի  
անժամանակ հարսանիքից մահաբեր վնասներ  
առաջ եկան. ժողովրդականներն էլ այսպիսի  
հարսանիք չհամարձակին կատարել, որովհետև  
իսկապէս իրենց կորուստն է:

— 25-րդ. — 2 պէտք է կոյսերին — կոյս աղ-  
ջիկներին կամ տղաներին — այրիների հետ ամուս-  
նացնեն և ոչ այրիներին կոյսերի հետ, որով-  
հետև անհամապատասխան են:

5. Դուքի չորրորդ ժողով.

Կանոն 7-րդ. — Մեր մեղքերի համար երբ  
աշխարհը թշնամիներից գերի տարւեց, շատ  
կանայք և մարդիկ գերութեան մէջ էին և նոցա  
ամուսիններն առանց վարդապետի հրամանի կին  
առան և մարդու գնացին. — Այդպիսիների հա-  
մար այսպէս սահմանեցինք, թէ առաջ բան  
6 — 7 տարի նորա, որոնց ամուսինները մինչ  
գերութեան մէջ էին, ամուսնացան, այդպիսինե-  
րի ամուսնութիւնը պտռնիկութիւն է, ծեծ և պա-  
տիժ կրեն. հրամայեցինք նրանց կայրից և ստաց-  
ւածքից առնեն վարդապետները և աղբատ-  
ներին բաժանեն. և նոցա բաժանել իրարից և  
ապաշխարել — եօթը տարի: Իսկ եթէ եօթնե-  
րորդ տարու մէջ ամուսինները գերութիւնից  
զառնան, հրամայում ենք զառնան իրենց ամու-  
սիններին. բայց եթէ չվերցնեն նրանց որ առել

էին (իրենց նախկին կնոջը), նորա որ վերագարձել են, օրհնութեամբ ուրիշ կանայք առնեն և ուրիշ մարդոց գնան, բայց պիտի ապաշխարեն: Իսկ ով 6—7 տարի համբերեց առանց տուգանքի և օրհնութեամբ ամուսնանայ...:

6. Գուցի հինգերորդ ժողով.

Կանոն 3-րդ. — Արժան չէ շարաթ օրը կամ Զատկի ճրագալոյցին պսակ կատարել, որովհետև առաջում յարութեան օրեր են գալիս, երբ պէտք է աղօթել և հսկել և հոգևորական կարգով անձերը մխիթարել, և ոչ թէ մարմնական զեղխութեամբ սուրբ օրերի խորհուրդն արհամարհել և ոտնակոխ անել. իսկ եթէ այդպիսի բան պատահի, պսակն անվաւեր համարել և պսակի խորհուրդը կատարողները պատժի տակ լինին, մինչև որ ապաշխարեն. և եպիսկոպոսը տեսնելով այդ, ինչպէս կամենում է, մարդասիրութիւն ցոյց տայ զէպի նոցա:

— 4-րդ. — Արժան չէ, եթէ հետևեալ օրը պիտի պսակուի, երեկոյեան ժողովուել հարբել և զեղխութիւն անել այլ պարկեշտութեամբ և աղօթքով արժանի անել, իրենց՝ պսակի օրհնութեանը. եթէ մէկն այսպէս արած լինի, քահանան օրը թող փոխէ և ինչպէս ասինք, ուրիշ օր հրաման տայ զգուշութեամբ և արժանաւոր կարգով պսակել և հաղորդել:

— 5-րդ. — Արժան չէ Զատկի քառասնօրէ-

ում և մինչի հոգեգալուստ հարսանիք անել և այդ օրերի խորհրդին թշնամանել անարգանք հասցնել. որովհետև ամեն օր կիւրակի է կատարում է աստուածային խորհուրդը:

— 15-րդ. — Պարտ և պատշաճ է, որ նրանք, որոնք պիտի պսակուին, քահանային տանեն (կանչեն), որ նոցա վրա քրիստոնէից օրէնքի և կանոնի համաձայն կարգ կատարէ և սուրբ տեղերում պսակէ. իսկ եթէ մէկն այսպէս չանէ, այլ ինչպէս և լինի իր կամակորութեամբ և ծուլութեամբ անարգէ ամուսնութեան օրէնքն ու կարգը, քահանան լուծուի իր պատուից. և պսակուողներին նորից հարկաւոր է պսակել քրիստոնեաների օրէնքի համաձայն, և որպէս առարեալը պատուիրում է, թէ ամենը կարգով և պարկեշտութիւնով լինի:

— 16-րդ. — Երկրորդ անգամ ամուսնացողներին ևս կանոնի համաձայն, միջնորդներով և խնամախօսներով հարկաւոր է. իրար յօժարութեամբ հաւանելուց յետոյ՝ քահանաների ձեռքով եկեղեցում իրենց զուգաւորութեան նշանը (պսակը) օրհնութեամբ առնին...:

7. Պարսաւի ժողով.

Կանոն 10-րդ. — Երկրորդ անգամ ամուսնացողներին (քահանան) ապաշխարութեան կարգը բացի թողի չանէ. ինքը (քահանան) պակեշ-

տութիւնով խմէ, ապա թէ որ արբեցութեան մէջ ընկնի կարգը լուծուի:

— 11-րդ. — Քահանաները պատւիրեն մարդոց և կանանց և նրանց աղջիկներին, որ հեթանոսների հետ չը զուգաւորւին (ամուսնանան), որովհետև դա ամուսնութիւն չէ, այլ անօրէն և պիղծ խառնակութիւն...:

— 13-րդ. — Երբորդ անդամ պսակւողների զուգաւորութիւնը խառնակութիւն և պղծագործ շնութիւն, անբաւելի յանցանք է, այդպիսին եթէ ապաշխարութեամբ կամենայ շնչել իր մեղքը, նախ իրարից բաժանւին, և յետոյ արժանի լինին ապաշխարութեան, և քահանան, որ այդ ամուսնութեան պատճառ է եղել, կարգընկեց լինի և նզովւի:

— 16-րդ. — Նախկին ս. հայրերն իւրեանց ժամանակներում արգելեցին ազատների և անազատների արեան մերձաւորութիւնը, այժմ մենք լուծւած ենք տեսնում հայրերի կանոնները, որովհետև անխտիր խառնւում են իրենց մերձաւորների հետ անկարգ ամուսնութիւնով: Սրանից յետոյ և չորրորդ զարմում չհամարձակւին ամուսնութիւնով զուգաւորւել, ապա թէ ոչ մեզանից նզովւին և իրենք Աստուծոյ առաջ պատասխան տան նրա մեծ դատաստանին:

8. Սսի 1243 ք. ժողով.

Կանոն 4-րդ. — Քահանաները պսակն ու մը-

կրտութիւնը ծոմապահութեամբ անեն եկեղեցում և հաղորդուին...:

— 7-րդ. — Պսակը թող ընտրութիւնով անեն, արեան ազգականութիւնից վեց ծննդով հեռանալով. փեսան տասն և չորս տարեկանից թող պակաս չլինի և հարսը քան տասներկու տարին:

9. Ս ա հ ա կ Պ ա Ր Ե ւ .

Կանոն 27-րդ. — Պատւիրեցէք (քահանայք), որ իրենց անչափահաս որդիներին չպսակեն, չափահասներին էլ առանց իրար տեսնելու և հաճութեան չնշանեն. և դուք քանանայք տղայոց (անչափահասների) պսակները մի օրհնէք, մինչի չափահաս լինելը: Իսկ չափահասներին, որոնք իրար չեն տեսիլ, չեն հաւանել, չհամարձակիր պսակել առանց նրանց իրենց հարցնելու, շատ կարելի է, որ ծնողների ստիպմամբ է նրանց նշանադրութիւնը:

— 28-րդ. — Ապա եթէ լսենք որ քահանան անչափահասներին կպսակի, կամ դրած կարգով չի վարուիլ. պատիժ կ'կրէ իր յանցանքի համապատասխան, ծնողներն էլ պատժից անպարտ չեն մնայ:

իր ամուսնու վրա՝ լիջելով որոշ կերպով մեղադրանքի անունը. եթէ ունի, պիտի ցոյց տայ իր վկաներին: Ահա այն գլխաւոր կէտերը, որ խընդրատուն պիտի չմոռանայ լիջել իր խնդրի մէջ: Խնդրի վրա պիտի կայցնէ երկու հատ վաթսուն (60) կոպեկանոց մարկայ, որպէս զի պետական օրէնքի հիման վրա անուշադիր չթողնեն իր խընդիրն այդ պակասութեան համար: Կոնսիստորեան այդ խնդիրն ստանալով, նայելով թէ ինչ մեղադրանք է բարդուում մեղաւոր դուրս բերլած կողմի վրա, նրա համեմատ էլ ընթացք է տալիս գործին: Մենք կը վերցնենք իւրաքանչիւր դէպքն առանձին:

1. Ամուսնական անհաստարմութիւն. — Այս դէպքում գործը կոնսիստորեան յանձնուած է քննչի: Քննիչ քահանան կամ վարդապետն ստանալով մեղադրողի խնդիրը պետական օրէնքի հիման վրա կանչում է իր մօտ երկու հակառակ կողմերին — մարդուն և կնոջը — և համոզում, խրատում որ հաշտուին. եթէ հաշտութիւնն աջողուած է կայացնել՝ այն ժամանակ քննիչն արձանագրութիւն է կազմում այդ մասին, ստորագրում են ինքն և երկու հակառակ կողմերը: Քննիչն այդ արձանագրութիւնն իր յայտարարութեան հետ ուղարկում է կոնսիստորեալին. վերջինս ստանալով հաշտութեան մասին արձանագրութիւնը, օրագիր է կազմում և գործը վճռում է կարճել՝ երկու հակառակ կողմերի հաշտութեան պատճառով:

Գ. ԱՄՈՒՄՆԱԼՈՒԹԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

Մենք արդէն ասել ենք թէ ինչ պատճառներով ներկայուած Հայ եկեղեցին, գոնէ արևելեան Հայոց համար, լուծում է ամուսնական կապը: Այժմ ցուցումներ կանենք, թէ ինչ եղանակով կարող է լուծել ամուսնութիւնը, այդ դատը որտեղից պէտք է սկսել, ինչ աստիճաններով է անցնում և վերջնական վճիռը որտեղ է ստանում: Նա և թէ ինչ հետևանքներ են առաջանում ամուսնալուծութիւնից:

Ամուսնական կեանքից դժգոհը նախ պիտի խնդիր տայ այն կոնսիստորեալին որի վիճակում գտնուում է խնդրատուն, կամ մեղադրողը: Խնդրի մէջ պիտի մանրամասն ասի թէ խնդրատուն որտեղացի է, ում հետ է պսակել, ո՞վ է պսակող քահանան, որտեղ է պսակել և երբ և եթէ կարող է կամ ունի դրանց փոխարէն ներկայացնի խնդրի հետ իր պսակի քաղաածքը: Դրանից յետոյ պարտաւոր է յայնել թէ ինչ յանցանք է բարդում

Այն դէպքում, երբ հաշտութիւն կայացնել չի աջողուում դժտւաց ամուսինների մէջ, քննիչն այդ մասին արձանագրութիւն է կազմում, ինքն ստորագրում, ստորագրել տալիս երկու ամուսիններին և ձեռնարկում է քննութեան: Նախ բացատրութիւն է պահանջում բողոքողից, եթէ գործի հանգամանքն այդ պահանջում է, ապա մեղադրւածից՝ նրա վրա բարդւած մեղադրական բոլոր կէտերի դէմ: Կրանից յետոյ քննիչը, եթէ մեղադրեալը ժխտում է իր դէմ եղած մեղադրանքները, պահանջում է, որ նա վկաներ ցոյց տայ իր անմեղութիւնն ապացուցանող: Քննիչը մեղադրեալի, ինչպէս և մեղադրողի բոլոր տւած բացատրութիւնները մի առ մի գրելով, առանձին առանձին իհարկէ, ստորագրում է ինքը, ստորագրել է տալիս մեղադրեալին իր բացատրութեան տակ, մեղադրողին իր բացատրութեան տակ և ապա ձեռնարկում է վկաների հարց ու փորձին: Վկաներին, եթէ հնարաւոր է, բոլորին մի օր կանչում է իր մօտ և առանձին առանձին քննութեան և հարց ու փորձի է ենթարկում: Եթէ հարկաւոր է վկաներին և մեղադրեալին, մեղադրողին և վկաներին միմեանց դէմ առ դէմ կանգնեցնելու և երես առ երես խօսեցնելու, քննիչը ճշմարտութիւնը երևան հանելու համար անհրաժեշտաբար պիտի դիմի այդ միջոցներին: Վկաներն եթէ մերձաւոր ազգականներ են, չպէտք է երդւեցնել, ինչպէս և եթէ 13 տարեկանից ցած են առանց

երդմնեցնելու պիտի հարց ու փորձ անի, ցուցումքներ առնի: Մնացած բոլոր վկաները պէտք է անպատճառ երդմամբ ցուցումներ տան: Ամեն մի վկայի ցուցումը գրւում է առանձին, որի տակ ստորագրում են քննիչն ու ցուցում տուող վկան:

Ամեն անգամ երբ հարցը պահանջում է, վրկաների ցուցմունքներից յետոյ քննիչը հրաւիրում է մեղադրողին կամ մեղադրւողին լրացուցիչ բացատրութիւններ տալու՝ պահանջւած կէտերի դէմ: Երբ արդէն քննութիւնն աւարտւած է, քննիչը հրաւիրում է իր մօտ մեղադրեալին, կարգում է նրա մօտ ծայրէ՝ ի ծայր ամբողջ գործը, վերջին անգամ նրանից բացատրութիւն է առնում և եթէ գտնում է որ, դրանով գործը վերջանում է, ուղիղն ասած քննութիւնն աւարտւած է, նա արձանագրութիւն է կազմում, որ մեղադրեալին կարգացել է ամբողջ գործը, և յետոյ մի արձանագրութիւն ևս թէ ինչ հիման վրա մեղադրեալի բացատրութիւնը (վերջին) թողնում է առանց հետևանքի, եթէ միայն դա հարկաւոր է:

Այդ գործողութիւններով քննութիւնն աւարտած լինելով, քննիչը մի վերջին արձանագրութեամբ գործի թեր և դէմ կէտերը խտացնելով առաջ է բերում արձանագրութեան մէջ և յարում, թէ առաջ բերած փաստերի հիման վնա քննութիւնը համարում է վերջացած՝ առանց որ և է դատողութիւն տնելու գործի մէջ եղած փաստերի գնահատութեան մասին, որովհետև փաստերի

գնահատութեան խնդիրը, քննիչի գործը չէ, նա միայն պիտի արձանագրէ, թէ արդեօք բողոքի մէջ յիշած մեղադրական փաստերի դէմ կամ նրա օգտին վկաներն ու մեղադրեալն ինչ են ասում, ապացուցող կամ հերքող ինչ փաստեր են բերում: Ահա քննիչի գործը: Այսպէս ուրեմն քննիչը այդ վերջին գործողութիւնը կատարելուց յետոյ ստորագրում է արձանագրութիւնը և ամբողջ գործի հետ ուղարկում կոնսիստորեային: Այն դէպքում, երբ մեղադրեալի տւած վերջին բացատրութեամբ նոր հանգամանքներ են առաջ գալիս, քննիչը հարկաւոր քննութիւնն անելուց յետոյ, նորից հրաւիրում է իր մօտ մեղադրողին, կարգում նրա մօտ գործը, հարցնում թէ չունի՞ արդեօք այլ ևս բան ասելու, և ապա կազմելով արձանագրութիւն, որ նա կարդացել է գործը և այլ ևս ոչինչ չունի ասելու, ստորագրել է տալիս մեղադրեալին, ստորագրում է ինքը և վերջ տալիս գործին:

Կոնսիստորեան ստանալով այդ գործը, իր հերթում քննութեան է առնում և եթէ գտնում է, որ որևէ կէտ քննութեան մէջ պակաս է, կամ որոշ հանգամանքներ լաւ չեն պարզուած և կամ մեղադրութեան գլխաւոր կէտերը չեն ապացուցուած քննութեամբ և կամ ապացուցները թոյլ են ու անբաւարար, գործը վերագարձնում է քննիչին լրացուցիչ քննութեան համար, մատնացոյց անելով պակասաւոր կէտերը, որոց վրա քննիչը ուշա-

դրութիւն պիտի դարձնէ լրացուցիչ քննութեան ժամանակ:

Քննիչը լրացուցիչ քննութիւններն անելուց յետոյ գործը վերագարձնում է կոնսիստորեային, որն ստանալով գործը, օրագիր է կազմում և նայելով գործի հանգամանքներին, փաստերի ստուգութեանը, նրանց հիման վրա կայացնում է իր վճիռը: Եթէ քննութեամբ ապացուցուած է մեղադրութիւնը՝ կոնսիստորեան վճռում է լուծել ամուսնութիւնը՝ մեղադրեալին գրկելով նորից ամուսնանալու իրաւունքից, բայց աւելացնում է «նախքան իւր այս վճիռն ՚ի կատար ածելը՝ իր վճիռն ասբողջ գործի հետ ուղարկել Սինօզի հաստատութեանը»: Իսկ այն դէպքում, երբ մեղադրութիւնը չէ ապացուցուած, կոնսիստորեան որոշում է կարճել գործը՝ մեղադրութիւնն անապացոյց լինելու պատճառով: Այս դէպքում կոնսիստորեան Սինօզին չի ուղարկում իր վճռի հաստատութիւնը, այլ ինքն է գործադրում, յայտնելով իր օրագրական վճիռը մեղադրողին՝ ի պատասխան նրա խնդրի:

Սեղադրողը կարող է այս վճռից դժգոհ մնալ, ուստի և նա տալիս է մասնաւոր բողոք կոնսիստորեային՝ Սինօզի անունով: Կոնսիստորեան այդ բողոքն իր բացատրութիւններով և ամբողջ գործն էլ հետն ուղարկում է Սինօզին ՚ի հայեցողութիւն: Սինօզն եթէ գտնում է, որ քննութեան մէջ թերութիւններ կան՝ գործը վերագաձնում է կոնսիստորեային՝ լրացուցիչ քննութիւն նշանակելու

Համար: Իսկ այն դէպքում, եթէ գործի վերահաստեղծութեան յետոյ Սինոզը գտնուած է որ բողոքն անհիմն է, գործը կարճուած է առանց կոնսիստորեայի վճիռը փոխելու: Առաջին դէպքում կոնսիստորիան հարկաւոր լրացուցիչ քննութիւններն անելուց յետոյ գործը ուղարկուած է նորից Սինոզին՝ իր նոր վճռի հետ միասին.

Մեղաւոր կողմն էլ կարող է դժգոհ մնալ կոնսիստորեայի վճռից, որի մասին յայտնւի պիտի նրան և առհասարակ երկու հակառակ կողմերին միևնոյն օրագրական վճռով, որով իր որոշումն ուղարկուած է Սինոզի հաստատութեանը: Այն դէպքում, եթէ մեղադրւողը չի բողոքում Սինոզին կոնսիստորեայի վճռի դէմ, այդ վճիռն ստանալուց սկսած երկու շաբաթուայ ընթացքում, նրանից յետոյ նրա տւած բողոքն անհետեանք կը մնայ համաձայն պետական օրէնքների \*): Բողոքը նոյն կարգով պիտի գնայ Սինոզ, ուր գործի հայեցողութիւնից յետոյ կամ թողնուած են մասնաւոր բողոքն անհետեանք, գտնելով բողոքն անհիմն, և կամ գործի հետ վերադարձնուած են կոնսիստորեային՝ լրացուցիչ քննութիւն անելու համար, որից յետոյ գործը նորից մտնուած է Սինոզ և վերջնական վճիռն ընդունուած:

Ամեն մի դէպքում, երբ կոնսիստորեան որ

\*) Այստեղ կոնսիստորեան համեմատուած ենք նահանգական դատարանի հետ իսկ Սինոզը՝ Գատական Պալատի հետ, որոնցից առաջինի վճռի դէմ 2 շաբաթ է ժամանակ տրուած բողոք ներկայացնելու:

և է գործի համար վճիռ է կայացնում լուծել ամուսնութիւնը, գործի գեկուցումից անմիջապէս յետոյ գնում է Հայ եկեղեցու կանոնական որոշումներից նրանք, որ համապատասխանուած են գործին և պետական օրէնքների յօդուածները, որ տրամադրուած են պատկի լուծումն, որոնց հիման վրա և լինելու է յետագայ վճիռը:

Սինոզը կոնսիստորեայի վճիռն ստանալուց յետոյ, անկախ նրանից նաև, թէ հակառակ կողմերը բաւական են այդ վճռից թէ չէ, ներկայացրել են բողոք նրա դէմ թէ ոչ, ինքը վերահաստէ է լինում գործին ու կամ հաստատուած վճիռը և կամ վերադարձնում կոնսիստորեային լրացուցիչ լուսաբանութիւններ անել նոր քննութեան միջոցով: Այս բոլոր գործողութիւնները կատարելուց յետոյ Սինոզը այդ գործի մասին անում է իր վերջնական հաստատող վճիռը:

Ամուսնալուծական գործերի մէջ ամենազժւար ապացուցի ենթարկւող պատճառը ամուսնական անհաւատարմութիւնն է և անբարոյական կեանքը: Պատահում են դէպքեր, երբ մեղադրւող կողմի անբարոյական լինելն ակներև է, սակայն փաստացի ոչինչ չկայ, այսինքն անբարոյականութիւնը ապացուցող փաստերը կամ իսպառ չեն որուում և կամ խիստ զժւար: Բոլորն ասում են, որ մեղադրւողը բարոյականից զուրկ է, սակայն և ոչ մէկն էլ չի կարող հաստատապէս պնդել, թէ տեսել են նրա անբարոյականութեան այս կամ այն

փաստը: Այսպիսի դէպքերում քննչի դրուժիւնը ծանր, անելանելի չէ. նա կարող է և պիտի դիմի հասարակաց կարծիքին համաձայն պետական օրէնքի 229 յօդ. (XVI հատ. II մ. Քաղաքացիական Գատավարութիւն): Նա պիտի միւսնոյն օրը ծածուկ, առանց իմաց տալու, շրջի մեղադրողին լաւ ճանաչող մի շարք ընտանիքների տները. դոցա թիւը որքան շատ, այնքան լաւ, ու այնքան ստույգ մեղադրանքի նկատմամբ: Իւրաքանչիւր ընտանիքի բոլոր անդամներին պիտի հարցումներ տայ մեղադրւողի բարոյականի նկատմամբ, և նաև այն բանի, թէ կը ցանկանային այդպիսի մի անձի հետ մօտիկ ծանօթութիւն ունենալ, իրենց տունը թողնել, երթ ու գալ ունենալ և այլն: Այս խնդրում, եթէ մեղադրութիւնն ապացուցող վկայութիւններ տան մեղադրւողի մերձաւոր ազգականները, դա աւելի լաւ: Այսպիսի մի համաձարակ խուզարկութիւն անելուց յետոյ, եթէ կազմած արձանագրութիւնները (իւրաքանչիւր ընտանիքի ցուցմունք գրւում է ջոկ և ստորագրւում այդ ընտանիքի անդամներից քննչի ներկայութեամբ և ստորագրութեան ցուցմամբ) ստւար մեծամասնութեամբ ապացուցանեն, որ մեղադրւողը ճանաչւում է հասարակութեան մէջ իբր վատ վարքի տէր մէկը, իբր անբարոյական, և իբր այնպիսի մէկը, որ իրենցից և ոչ մէկը ոչ միայն չէր ցանկայ և չի ընդունի իր տունը, այլ և չէր ուզի ծանօթ լինել, և եթէ ծանօթ է, ծանօթութիւնը կտրել է նրա

հետ, յատկապէս նրա անբարոյական կեանքի համար: Այն, եթէ այդ համաձարակ խուզարկութեան քննութիւնը երևան հանի և ապացուցի մեղադրւողի անբարոյական կեանքը, այն ժամանակ ասել է մեղադրութեան կէտերն ապացուցւած են, քննչը վերևում յիշւած բոլոր հարկաւոր ձևականութիւններն անելուց յետոյ, գործն ուղարկում է կոնսիստորեային և այլն:

Ամուսնական անհաւատարմութեան և ամուսիններից մէկի անբարոյականութեան գործի դէպքում, մեղադրանքն ապացուցանող կողմնակի փաստերն էլ կշիռ ունին, թէև ոչ վճռական. այսպէս, սիրահարական նամակներ, ամուսիններից մէկի խոստովանութիւնը թէ յիբաւի ինքը սիրալին յարբերութեանց մէջ է գտնուել կամ գտնուում այս ինչ մէկի հետ: Կողմնակի ապացույցներ են նաև ամուսիններից մէկի վատ վարելը միւսի հետ, ծեծելը, հարբեցողութիւնը և այլն և այլն:

2. *Կաւատութիւն*. — Ամուսնալուծութեան գործն այս դէպքում ընթանում է այսպէս: Այն ամուսինը, որ բողոքում է, թէ միւսը կամ փորձեր է արել իրեն ծախելու, այսինքն ուրիշների հետ ստիպել է սեռական յարաբերութիւն ունենալ, և կամ ստուգիւ կաւատել է, իր խնդրի մէջ գրելով մեղադրութեան կէտերը կամ ներկայացնում է դատախազին, որ դէպքում ամուսնալուծութիւն չի խնդրում, այլ գատ, կամ թեմի կոնսիստորեային: Կոնսիստորեան ստացած այդպիսի խնդիրն

ուղարկում է նահանգի դատարանի դատախազին (պրօկուրօր)՝ խնդրելով գործն օրինասահման կերպով քննել և վերջնական որոշման մասին յայտնել իրեն, խնդրատուի խնդրին բաւարարութիւն տալ՝ այդ գործում նրա քաղաքացիական պահանջի համեմատ: Թէ այս և թէ ուղղակի դատախազին բողոք ներկայացնելու դէպքում քրէական դատ է սկսում մեղադրուղի դէմ ու գործը լանձնուում քննիչին: Քննիչն հարկաւոր գործողութիւնները կատարելուց յետոյ ներկայացնում է դատախազին: Դատախազն ինքը, բայց սովորաբար նրա օգնականներից մէկը, նայելով թէ որի շրջանին է վերաբերում գործը, այդ առթիւ իր եզրակացութիւններն է անում: Թէ մեղադրանք ապացուցւելու և թէ անապացոյց մնալու դէպքում գործն ուղղում է նահանգական դատարան: Եթէ դատախազը իր եզրակացութիւնների մէջ դուրս է բերել, որ մեղադրանքն անհիմն է, սովորաբար գործը կարճւում է, իսկ եթէ մեղադրական յօդւածներ է գրել, նահ. դատարանը դատ է նշանակում: Վերջ ՚ի վերջոյ եթէ դատարանի վճռով մեղաւոր է ճանաչուում մեղադրուողը, այն ժամանակ մեղադրողը ստանալով վճռի պատճէնը մի խնդրի հետ ներկայացնում է կոնսիստորեային՝ խնդրելով լուծել իր պահը: Իսկ եթէ կոնսիստորեայի միջոցով է սկսել գործը, դատախազն ինքն է յայտնում կոնսիստորեային դատարանի վերջնական վճռի մասին: Երկու դէպքումն էլ կոնսիս-

տորեան ապացուցւած համարելով մեղադրանքը վճռում է լուծել ամուսնութիւնը՝ մեղաւոր կողմին զրկելով ամուսնանալու իրաւունքից և ապա իր վճիռն ուղարկում Սինօզին՝ ՚ի հաստատութիւն:

Այս դէպքում պատահում է յայպէս, — կոնսիստորեան ստանալով բողոքարկուի խնդիրը, քննութիւն է նշանակում և ապա իր սկզբնական քննութիւնն ուղարկում է դատախազին և այլն:

Այս օրինակ գործերի մարմնաւոր իշխանութեան դատին ենթարկելու հիմը յանցանքի քրէական լինելն է, որ հոգեւոր իշխանութեան իրաւասութեան սահմանից դուրս է: Այդ տեսակ գործերի մէջ իր մասը՝ կողմերից մէկի քաղաքացիական պահանջն է — ամուսնալուծութիւնը, որին և նա — հոգեւոր իշխանութիւնը իբր իրաւատէր կոչւում է բաւարարութիւն տալ:

3. Անյուր բացակայութիւն. — Այդպիսի բացակայութեան դէպքում ամուսնալուծութեան խնդիր ընդունւում է ոչ շուտ, քան բացակայած օրից հինգ տարի անցնելը: Կոնսիստորեան ամուսնալուծութիւն պահանջող կողմից խնդիրն ստանալուց յետոյ նախ յայտարարութիւն է ուղարկում Պետերբուրգի Սենատական Յայտարարութիւնների մէջ տպելու երեք անգամ, որով խուզարկում է անյայտ բացակայող անձը: Այդ յայտարարութիւնների համար պահանջող երեք բուբլին վճարում է խնդրատուն: Եթէ յայտարարութիւնները տալու օրից անցնի վեց ամիս և ոչ մի լուր կամ

տեղեկութիւն չգայ խուզարկւող անձի մասին, այն ժամանակ կոնսիստորեան ձեռնարկուած է երկրորդ գործողութեանը: Նա դիմում է տեղական ոստիկանութեան և խնդրում, հոգևոր իշխանութեան ներկայացուցչի ներկայութեամբ քննութիւն անել՝ հարց ու փորձի ենթարկելով բացակայողի ազգականներին, ծանօթներին և արժանահաւատ վկաների, թէ ինչ գիտեն բացակայողի մասին, նա ո՛ւր է, երբ է անյայտացել, արդեօք բացակայութեան ընթացքում որ և է լուր իր մասին չի տւել և կամ արդեօք բողոքողը չի եղել պատճառ բացակայողի հեռանալուն և այլն, ինչ որ տրամադրում է այդ աւթիւ պետական օրէնքը (X հ. I մ. յօդ. 58): Այս մի քանի մանր և ոչ անհրաժեշտ ձեւականութիւնները կատարելուց յետոյ ոստիկանութիւնը արձանագրութիւն է կազմում վկաների և ծնողների ներկայութեամբ ու ստորագրել տալով ուղարկում է կոնսիստորեային: Կոնսիստորեան առաջարկած փաստերի հիման վրա վճռում է լուծել ամուսնութիւնը և ուղարկում իր վճիռն ամբողջ գործի հետ Սինօզի հաստատութեանը: Այս դատավարութեան ընթացքում, եթէ մինչի վճռի վերջնական հաստատութիւնը, անյայտ բացակայող ամուսինը վերադառնայ, կամ տեղեկութիւն տայ իր մասին և այլն, ամբողջ գործը դադարում է և դատավարութիւնը կարճւում:

4. *Ծանր յանցանքներ*, որին հետևում է իրաւունքի զրկումն. — Եթէ ամուսիններից մէկը գոր-

ծել է այնպիսի ծանր յանցանքներ, որոց հետևանքը աքսոր և իրաւունքների զրկումն է և կամ միայն իրաւունքների զրկումն, համաձայն պետական օրէնքների (X հատ. I. մ. յօդ. 50 և 52), միւս ամուսինը իրաւունք ունի պահանջել ամուսնալուծութիւն: Այս դէպքում բողոքող ամուսինը ներկայացնում է պահանջի խնդրագրի հետ դատարանի վճռի պատճէնը կոնսիստորեային և խնդրում համաձայն այդ վճռի թոյլ տալ իրեն ամուսնանալ ուրիշի հետ: Կոնսիստորեան և Սինօզն առանց այլեւայլութեան լուծում են պսակը և թոյլ տալիս ամուսնանալ ուրիշի հետ:

5. *Ամուսնական անընդունակութիւն*. — Եթէ ամուսինը զուրկ է ամուսնական կենակցութեան ընդունակութիւնից, միւս ամուսինը միայն պսակից երեք տարի անց իրաւունք ունի խնդրել հոգևոր իշխանութեանը լուծել իր պսակը: Այդ դէպքում պահանջուած է, որ այդ անընդունակութիւնը բնական լինի և կամ առնւազն առաջ եկած լինի նախ քան ամուսնանալը: Եթէ խնդրատուն ապացուցեց, որ այդ անընդունակութիւնը եղել է նախ քան պսակը՝ ամուսնութիւնը լուծւում է (X հ. I մ. յօդ. 48—49). հակառակ դէպքում նա իր խոստման համաձայն, որ տւել է եկեղեցում պրսակից առաջ, թէ ոչ մի հիւանդութիւն և այլն չեն կարող բաժանել ամուսնուց, մնում է ամուսին, ամուսնական կենակցութեան ընդունակութիւնը, ամուսնութեան ժամանակ կորցրած իր ա-

մուսնու: Այդ դատավարութեան ժամանակ հոգևոր իշխանութիւնը բժշկական քննութեան է ենթարկում ընդունակութիւնից զուրկ ամուսնուն, որոշելու համար նախ, ստոյգ որ տեղի ունի այդ հիւանդութիւնը և երկրորդ՝ դա բնական է, թէ յետոյ առաջացած: Այն դէպքում, եթէ հիւանդութիւնը բնական չի ճանաչուում, այլ յետոյ առաջացած, ստուգելու համար, թէ դա առաջացել է ամուսնական կենսակցութիւնից, թէ նախքան բողոքարկուի հետ ամուսնանալը, եթէ բողոքարկուն կին է, բժշկական քննութեան են ենթարկում: Եթէ քննութիւնն ապացուցեց, որ եռամեայ կենսակցութիւնից յետոյ էլ նա այնուամենայնիւ կոյս է, ասել է կասկած չկայ, որ մարդու անընդունակութիւնը նախքան ամուսնութիւնն է եղել, հետևաբար և լուծելի: Ուրեմն, թէ բնական անընդունակութեան և թէ այլ ձևով արտայայտւած անընդունակութեան դէպքերում ամուսնութիւնը լուծուում է և բողոքող կողմին իրաւունք տրուում ամուսնանալու:

6. Բացի այս հինգ դէպքերից ամուսնութիւնն անվաւեր է հաշոււմ եւ լուծոււմ հոգևոր իշխանութեան դատաստանով պետական օրէնքների և հայ եկեղեցու կանոնների հիմամբ հետևեալ դէպքերում և հետևեալ կերպով: 1) եթէ պսակը կատարել է բռնի կերպով. 2) եթէ եկեղեցու իսպառանթոյլատրելի չհասութեան աստիճաններումն է, թէ արենակցական, թէ կնքահայրական և թէ խնա-

մութեան դէպքերում. 3) եթէ պսակողներն խելագար և ապուշ են. 4) եթէ կնոջ կենդանի ժամանակ, առանց այդ պսակը լուծուելու, մէկը պսակուում է մի այլ օքի հետ, նոյնն և կնոջ մասին և այլն.

Այս բոլոր դէպքերում մերձաւոր իշխանութիւնը, գործակալը կամ հոգևոր կառավարութիւնը անմիջապէս ստոյգ տեղեկութիւններ են հաւաքում և գործին պաշտօնական ընթացք տալիս և յայտնում կոնսիստորեային: Կոնսիստորեան քննութիւն է նշանակում: Քննիչը պսակող քահանայի բացատրութիւնից յետոյ՝ նրա կատարած ապօրինի պրսակի մասին, երգմամբ ցուցմունքներ է առնում վկաներից և այլն: Քննութիւնն աւարտելուց յետոյ ամբողջ գործը ներկայացնում է կոնսիստորեային, որ իր եզրակացութիւններն է անում պրսակողների մասին ջոկ և պսակը կատարող քահանայի համար ջոկ ու ամբողջ գործի հետ միասին ներկայացնում Սինօզի վերջնական վճռահատութեանը: Սինօզը կամ կոնսիստորեաները երբ գտնում են որ գործն ամբողջացած չէ, վերադարձնում են լրացուցիչ քննութեան: Թէ այս և թէ նախընթաց դէպքում, եթէ մեղադրանքներն ապացուցւած են քննութեամբ՝ Սինօզը լուծում է եղած պսակները և պատժում պսակող քահանային: Պսակողներին եկեղեցական տաղաշխարանքի է ենթարկում, և եթէ տրամադրում է պետական օրէնքը՝ մեղաւորներին քաղաքական իշխանութեան դատաստանին յանձնում:

Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր .

1. Աստվածաշունչ.
2. Церковное право. Лекцій Проф. Павлова.
3. Курсъ церковнаго права. Проф. Суворова.
4. Гражданская Община Античнаго Міра. Ф. де Куланжа.
5. Энцикл. слов. Брок. и Ефрона.
6. Книга Правиль съ толкованіями.
7. Сводъ законовъ Р. Имперіи. изд. 1902 г.
8. Հայոց եկեղեցական իրավունք. արբիւրներ. ն. Վ. Մելիքթանզեան.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ.

Երես.

1) Առաջարանի տեղ . . . . .	3
2) Ամուսնութիւն . . . . .	5
3) Արեւակցական չհասութիւն . . . . .	25
4) Կնքահայրութիւն . . . . .	34
5) Խնամիութիւն. . . . .	36
6) Դիւղագրութեան օրինակներ . . . . .	47
7) Ամուսնալուծութիւն . . . . .	73
8) Քաղաքացիական պսակ . . . . .	97
9) Պետական օրէնքներ . . . . .	113
10) Եկեղեցական կանոններ . . . . .	192
11) Ամուսնալուծական դատաւարութիւն . . . . .	—

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր .

Երես.	Միակ.	Ուղիղ.
3.	դատաւորութիւն	դատաւարութիւն.
6.	գոյութեան	գոյութեան մէջ.
7.	լատ	շատ.
8.	ոերունդ	սերունդ.
»	համարիա	համարեա.
»	Մնակնութիւնն	Միակնութիւնն.
11.	դասաարգից	դասակարգից.
12.	Աւերստայի	Աւեստայի.
»	սիմբրական	սեմական.
13.	ծաղրեր	ծախրեր.
14.	պաշտանունք	պաշտամունք
22.	առաջ	առաջ.
30.	հաձայն	համաձայն.
31.	եկնդեցին	եկեղեցին.
47.	աստիժան	աստիճան.
83.	Հումուլոսի	Հումուլոսի.
89.	յինւած	յենւած.
90.	օրէնսդրական	օրէնքների.
105.	իշխանորթիւնը	իշխանութիւնը.
»	դալ	գալ.
177.	Սիբիրում	Սիրիրում.

«Ազգային գրադարան»



NL0212068

37.989

22

9

347.6

2-72